12004

12004

6 10060

4983

# ՀԱՄԱՌՕՏ ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Համարակաց աղօթից Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ, հանդերձ հայոց թուականաւ:

Ի պէտս աշխարհականաց:

Ի լոյս էած Յ. Յ. Օրբելի

Ի Մոսկով.

Ի 1835. ՌՄՁԴ.

884-ԱԻԿ

4983-[illegible]

41439-68

'Ի Հայրապետութեան Տ̃ն
ՅՈՎՀԱՆՆՈՒ ար-
ժանընտիր կաթողիկոսի
ամ՟ Հայոց և այլոց։

Յառաջնորդութեան Բռու-
սիաբնակ Հայոց Տեառն
Ներսիսի սրբազան Արք
Եպսի և այլոց։

'Ի Տպարանի Ճեմա-
րանի Լազարեան իշխա-
նապետաց։

Հրամայեցաք տպագրել.

Դատաքննիչ գրոց Մի-
քայէլ Արքեպս. Սալլան-
թեանց. միաբան և Նու-
իրակ սբյ Էջմիածնի։

Ի 10 դեկտ. 1834.

Ի Մոսկուվ.

## Հրաժարութիւն։

Հրաժարիմք ՚ի սատա-
նայէ, և յա͞մ խաբէու-
թենէ ն͞ր, ՚ի պատրանաց
ն͞ր, ՚ի խորհրդոյ նորա.
՚ի գնայից նորա, ՚ի չար
հրեշտակաց ն͞ր, ՚ի չար
պաշտօնէից ն͞ր, ՚ի չար
կամարարաց ն͞ր, և յա-
մենայն չար զօրութենէ
նորա հրաժարելով հրա-
ժարիմք։

## Դաւանութիւն ուղղա-
## փառ հաւատոյ Հայոց։

Խոստովանիմք և հա-
ւատամք ամենակատար

սրտիւ զՀայրն ԱԾ՝
աներղ, անծին և անըս-
կիզբն. այլև ծնօղ որդ-
ւոյ՝ և բղխօղ հոգւոյն
սբյ։ Հաւատամք զԲանն
ԱԾ՝ աներղ, ծնեալ և
սկսեալ ՚ի հօրէ նախ քան
զյաւիտեանս. ոչ յետոյ
և ոչ կրտսեր. այլ՝ որ-
քան հայրն՝ հայր, ընդ-
նմին և որդին՝ որդի։ Հա-
ւատամք զսբ Հոգին՝ ա-
ներղ, անժամանակ. ոչ
ծնեալ, այլ՝ բղխել ՚ի
հօրէ. էակից հօր՝ և փա-
ռակից որդւոյ։ Հաւա-

տամք զԵրրորդութիւն սբ՝
մի բնութի, մի ածութի.
ոչ երեք ածք, այլ մի
Ած, մի կամք, մի թագա-
ւորութի, մի իշխանութի,
արարիչ երևելեաց և ա-
ներևութից։ Հաւատամք
յեկեղեցի սբ՝ զթողութի
մեղաց, հաղորդութիւն
սրբոց։ Հաւատամք զմին
յերից անձանց զբանն Ած՝
ծնեալ ՚ի Հօրէ նախքն
զյաւիտեանս. ՚ի ժամա-
նակի իջեալ յածածին
կոյսն Մարիամ. առեալ
յարենէ նր՝ միաւորեաց

ը̄ խորում ա̄ծութե̄ն․ ին-
նամսեայ ժուժկալեալ-
յարգանդի անարատ կու-
սին․ և եղև ա̄ծն կատա-
րեալ՝ մարդ կատարեալ
հոգւով և մտօք և մար-
մնով․ մի անձն, մի դէմ,
և միաւորեալ մի բնու̄ի։
Ա̄ծն մարդացեալ առանց
փոփոխման, առանց այլայ-
լութեան․ անսերմն յղու-
թիւն, և անապական
ծնունդ․ որ ո՛չ է սկիզբն
ա̄ծութե̄ նորա՝ և ո՛չ վախ-
ճան մարդկութեան նո-
րա։ (զի Յ̄ս Ք̄ս երէկ և.

այսօր՝ նոյն և յաւիտեան։) Հաւատամք զտ՟րն մեր Յ՟ս Ք՟ս՝ շրջեալ ՚ի վ՟ր երկրի։ Յետ երեսուն ամաց եկեալ ՚ի մկրտութիւն. Հայր ՚ի վերուստ վկայեալ՝ դա է Որդի իմ սիրելի. և Հոգին ս՟բ աղաւնակերպ իջեալ ՚ի վերայ նորա։ Փորձեալ ՚ի սատանայէ, և յաղթեալ նմ՟։ Քարոզեալ մարդկան զփրկութիւն։ Աշխատեալ մարմնով, վաստակեալ՝ քաղցեալ և ծարաւեալ։ Յետոյ և-

կեալ կամաւ 'ի չարչա-
րանս, խաչեալ՝ մեռեալ
մարմնով. Եւ կենդանի աս-
տուածութեամբ: Մար-
մինն եդեալ 'ի գերեզ-
մանի՝ միաւորեալ աստուա-
ծութ̃ն, և Հոգւովն ի-
ջեալ 'ի դժոխս՝ անբա-
ժանելի ա̃ծութեամբ:
Քարոզեալ հոգւոցն՝ ա-
ւերեալ զդժոխս, և ա-
զատեալ զհոգիսն: Յետ
երից աւուրց յարուցեալ
'ի մեռելոց, և երևեալ
աշակերտացն: Հաւա-
տամք զտէրն մեր յ̃ս ք̃ս՝

նովին մարմնովն համբար-
ձեալ յերկինս, և նստեալ
ընդ աջմէ հօր ։ Այլ և
գալոց է նովին մարմնովն՝
և փառօք հօր 'ի դատել
զկենդանիս և զմեռեալս։
Որ և յարութիւն ամե-
նայն մարդկան ։ Հաւա-
տամք և զհատուցումն
գործոց՝ արդարոցն կե-
անք յաւիտենական · և
մեղաւորացն տանջանք
յաւիտենական։

## Զղջումն։

Մեղայ ամենասուրբ Երրորդութե՟ն՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն ս՟բյ. Մեղուցեալ եմ Ա՟յ։ Խոստովանիմ առաջի ա՟յ՝ և սրբուհւոյ ա՟ծածնին, և առաջի քո հա՛յր սուրբ. զա՟մ մեղս՝ զոր գործեալ եմ։ Քանզի մեղայ խոր- հրդով, բանիւ և գոր- ծով, կամայ և ակամայ, գիտութե՟բ և անգիտութե՟բ մեղա՛յ ա՟յ։ Մեղայ հոգ- ւովս՝ և զօրութե՟բ նորա, մտօքս՝ և շարժմամբ՟ր,

մարմնոյն՝ և զգայու-
թեամբ սորա ։

Մեղայ զօրութ̄բ հոգ-
ւոյս՝ խորամանկութ̄բ,
անզգամութ̄բ, յանդգ-
նութեամբ և երկչոտու-
թեամբ, շռայլութեամբ
և ժլատութ̄բ, զեղխու-
թեամբ, անիրաւութ̄բ,
չարահաւանութ̄բ, յու-
սահատութ̄բ և թերա-
մտութեամբ մեղայ քեզ ։
Մեղայ չար խորհրդով
մտաց՝ նենգութեամբ,
ատելութեամբ, խեթիւ,
մախանօք, կաչաղանօք

Թուլութեամբ պոռնը-
կական խորհրդով՝ արուա-
կան, իգական, անասնա-
կան, գրաստական, գազա-
նական. 'ի գիշերի և 'ի
տունջեան. երազական գի-
ճութեամբ, և անրջական
գարշ աղտեղութիւն մեղայ
ա̃յ : Մեղայ ցանկութիւն
մարմնոյս՝ հեշտութիւն,
պղերգութեամբ յօրանջ-
մամբ քնոյ, շարժութիւն
մարմնոյս, և զազրագոր-
ծութեամբ 'ի պէսպէս
ախտս. հեշտալրութիւն
լսելեաց, արատութիւն

աչաց, ցանկութեամբ
սրտիս, խգութ̃բ ընդացս,
պագշոտութեամբ բե-
րանոյս, անժուժկալու-
թեամբ, շուայտութ̃բ և
արբեցութեամբ մեղայ
ա̃յ։ Մեղայ չարաբանու-
թեամբ լեզուիս՝ ստա-
խօսութեամբ, սուտ երդ-
մամբ, երդմնազանցու-
թեամբ, հակառակու-
թեամբ, վիճաբանութ̃բ,
բանսարկութ̃բ, շոգմո-
քութ̃բ, քսու, դատար-
կաբանութ̃բ և ծաղու,
զրախօսութ̃բ, հերձախօ-

սութեամբ և անիծաբանութեամբ, տրտնջելով, դժգոհելով, բամբասելով և հայհոյելով մեղա՛յ ա̃յ։ Մեղայ գողութեամբ ձեռացս՝ ագահելով, զրկելով, հարկանելով, սպանանելով և ընդ գարշս ածելով մեղա՛յ ա̃յ։ Մեղայ ամենայն յօդուածովք շինուածոյս, և ա̃մ անդամօք մարմնոյս, խօթնեակ զգայարանօքս, և վեցեկի շարժմամբս, վերամբարձ ոտնահարութ̃բ, և վայրա-

քարշ մեղկութեամբ, յաջ և յահեակ խոտորելով՝ առաջնոյն մեղանչելով, և վերջնոյն չար նշաւակ գոլով մեղայ աստուծոյ ։ Այլև մեղայ եօթնիցս յանցանօք՝ մահացու մեղօք․ Հպարտութեամբ՝ և մասամբք նորին․ Նախանձու՝ և մասամբք նորին․ Բարկութեամբ՝ և մա․ Ծուլութե՛՝ և մա․ Ագահութեամբ՝ և մա․ Որկրամոլութե՛՝ և մա․ Բղջախոհութե՛՝ և մասամբք նո-



10060
41439-68

րին մեղայ ա՟յ։ Այլ և մե-
ղայ ա՟մ պատուիր՟նցն ա՟յ՝
յանձնառնլեացն և հրա-
ժարելեացն. զի ոչ զյանձնա-
ռականսն կատարեցի, և
ոչ ՚ի հրաժարելեացն հե-
ռացայ։ Զօրէնս առի, և
յօրինացն հեղգացայ. ՚ի
կարգս քրիստոնէութեան
հրաւիրեցայ, և գործովս
անարժան գտայ. գիտե-
լով զչարն՝ կամաւ կորա-
ցայ, և ՚ի բարեաց գոր-
ծոց ինձէն հեռացայ։ վա՛յ
ինձ. վա՛յ ինձ. վա՛յ ինձ։
Զո՞րն ասեմ՝ կամ զո՞րն

խոստովանիմ. զի ան-
թիւ են յանցանք իմ.
անասելի՛ են անօրէնու-
թիւնք իմ, աններելի՛ են
ցաւք իմ. և անբժշկելի՛
են վէրք իմ մեղա՛յ աս-
տուծոյ ։

Ա՛յլ ո̅ւ՝ զքեզ ու-
նիմ միջնորդ հաշտու-
թեան, և բարեխօս առ
միածին որդին ա̅յ. զի
իշխանութ̅իւդ՝ (որ տուեալ
է քեզ՝) արձակեսցես զիս
՚ի կապից մեղաց իմոց.
աղաչեմ զքեզ ։

## Օրհնեալ Տէր մեր և փրկիչ Յիսուս Քս̃: Ամէն:

Հայր մեր՝ որ յերկինս ես. սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի: Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր. և թող մեզ զպարտիս մեր. ոպ̃ և մեք թողումք մերոց պարտապանաց. և մի տանիր զմեզ ՚ի փորձութիւն. այլ փրկեա զմեզ ՚ի չարէ: Զի քո է արքայութիւն, և զօրութիւն, և փառք յաւիտեանս. ամէն:



# ԿԱՐԳԱՒՈՐՈՒ-ԹԻՒՆ

Հասարակաց աղօթից Հայաստանեայց եկեղեցւոյ։ Որ կատարի ի մէջ գիշերի ի դէմս Հօր այ։

ՏՐ ԵԹԷ Ը Զ ՇՐԹՈՒՆՍ իմ բանաս, բերան իմ եր-գիեսցէ զօրհնութիս քո։ ՏՐ եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ եր-գեսցէ զօրհնութիւնս քո։ Օրհնեալ համագոյ, և

միասնական անբաժանե-
լի սբ̄ Երրորդութիւնն՝
Հայր և որդի և Հոգի սբ̄·
այժմ և միշտ և յաւի-
տեանս յաւիտենից։ Ամէն։

Տ̄Ր զի՛ բազում եղեն
նեղիչք իմ, և բա-
զումք յարեան 'ի վերայ
իմ։

Բազումք ասէին զանձնէ
իմմէ, թէ չի՛ք փրկութ̄ի
սորա առ ա̄ծ իւր։

Այլ դու տ̄ր օգնական
իմ ես, փառք իմ, և
բարձրացուցիչ գլխոյ ի-
մոյ։

Զայնիւ իմով ես առ Տէր
կարդացի. և լուաւ ինձ
ի լեռնէ սրբոյ իւրմէ։
Ես ննջեցի և ՚ի քուն
եղէ. զարթեայ և Տէր
ընդունօղ իմ է։
Ոչ երկեայց ես ՚ի բիւ-
րուց զօրաց նոցա. որք
շուրջանակի պատեալ պա-
շարեալ պահէին զիս։
Արի Տէր և փրկեա՛ զիս
Աստուած իմ. զի դու հարեր
զամենեսեան՝ որք էին ընդ-
իս թշնամութեամբ ՚ի
տարապարտուց. և զա-
տամունս մեղաւորաց
փշրեցիս։

Տեառն է փրկութիւն ’ի վերայ ժողովրդեան քո օրհնութիւն քո ։

ՏՐ ա՟ծ փրկութե՟ն իմոյ , ’ի տուէ կարդացի և ’ի գի-շերի առաջի քո։

Մտցեն աղօթք իմ ա-ռաջի քո տՐ . խոնար-հեսցի ունկն քո ’ի խնդ-րուածս իմ ։

Զի լցաւ չարչարանօք անձն իմ . և կեանք իմ ’ի դժոխս մերձեցան , և համարեցայ ես ը՟ այնո-սիկ՝ որք իջանեն ’ի գուբ ։

Եղէ ես որպէս մարդ ա-

ւանց օգնականի․ և 'ի
մեռեալս ազատ։
Որպ՟ վիրաւորս որք ննջեն
'ի գերեզմանի։
Զորս դու ոչ յիշեցեր,
նոքա 'ի ձեռանէ քում-
մէ մերժեցան։
Եդին զիս 'ի գբի ներք-
նումն 'ի խաւարի, և 'ի
ստուերս մահու։
Յիս հաստատեցաւ սրտ-
մտութի՟ քո․ զա՟մ զբօսանս
քո ածեր 'ի վերայ իմ։
Հեռի արարեր յինէն
զծանօթս իմ․ և եդին
զիս նշաւակ իւրեանց։

Մատնեցայ և ոչ ելա-
նէի. աչք իմ տկարացան
յաղքատութենէ:
Աղաղակեցի առ տ՛ր զօր-
հանապազ, և համբարձի
առ քեզ զձեռս իմ:
Մի՛ թէ մեռելոց առնի-
ցես զսքանչելիս քո, կամ
բժիշկք յարուցանիցեն
և խոստովան առնիցեն
առ քեզ:
Մի՛ թէ պատմեսցէ ոք եր
բէք 'ի գերեզմանի զո-
ղորմութիս քո. կամ զճշմար-
տութիս քո 'ի կորստեան:
Մի՛ թէ ճանաչիցին 'ի

խաւարի սքանչելիք քո ․
կամ արդարութիւն քո
յերկիր մոռացեալ։
Ես առ քեզ տէր աղաղա-
կեցի․ առաւօտու աղօթք
իմ ժամանեսցեն առ քեզ։
Ընդէ՞ր տէր մերժես զանձն
իմ ․ կամ դարձուցանես
զերեսս քո յինէն։
Տնանկ և վաստակաւոր
եմ ես ՚ի մանկութենէ
իմմէ․ ՚ի բարձրութէ՟ խո-
նարհեցայ և ափշեցայ։
Յիս հաստատեցաւ բար-
կութի՟ քո․ արհաւիրք
քո խռովեցուցին զիս։

Շրջեցան զինև ոպ̃ ջուր·
զօր ամ̃ պաշարեցին զիս
՚ի միասին։

Հեռի արարեր յինէն
զբարեկամս իմ, և զծա-
նօթս իմ վ̃ թշուառու-
թեան իմոյ։

Օրհնեա՛ անձն իմ զտ̃ր·
և ամ̃ ոսկերք իմ զանուն
սր̃բ նորա։

Օրհնեա՛ անձն իմ զտ̃ր·
և մի մոռանար զամենայն
տուրս նորա։

Ո՛ քաւէ զմեղս քո·
բժշկէ զամ̃ հիւանդու-
թիւնս քո։

Ո՛ փրկէ յապականութենէ
զկեանս քո. պսակէ զքեզ
ողորմութբ՟ և գթութբ՟։
Ո՛ լնու ՚ի բարութ՟է զցան-
կութ՟ի քո. նորոգեսցի որ՟պ
արծուոյ մանկութ՟ի քո։
Առնէ ողորմութիս տ՟ր. և
իրաւունս ա՟մ զրկելոց։
Ցոյց տէր զճանապարհս
իւր Մովսիսի. և որդ-
ւոցն իսրայէլի զկամս իւր։
Գթած ողորմած է տէր.
երկայնամիտ և բազում
ողորմ։
Ո՛չ իսպառ բարկանայ
մեզ տէր. և ո՛չ յաւի-
տեան պահէ ոխս։

Ո՛չ ը̅ մեղաց մերոց արար մեզ տ̅ր. և ո՛չ ը̅ անօրէնութեան մերում հատոյց մեզ։

Այլ ոպ՟ բարձր են երկինք յերկրէ՝ այնպ՟ զօրացոյց տէր զողորմութի̅ իւր ՚ի վերայ երկիւղածաց իւրոց։

Որչափ հեռի են արևելք յարևմտից. այնչափ հեռի արար ՚ի մէնջ զանօրէնութիւնս մեր։

Որպէս գթայ հայր ՚ի վերայ որդւոց իւրոց. այնպէս գթասցի տէր յերկիւղածս իւր։

Զի նա գիտաց զստեղծուածս մեր, և յիշեաց թէ հող եմք։

Մարդոյ ոպ՟ խոտոյ են աւուրք իւր, ոպ՟ ծաղիկ վայրի՝ այնպէս ծաղկի։

Շնչէ 'ի նմա հողմ, և ոչ է և ոչ ևս երևի տեղի նորա։

Բայց ողորմութիւն տն՟ յաւիտեանս յաւիտենից 'ի վերայ երկիւղածաց իւրոց, և արդարութի՟ նր՟ յորդւոց մինչև յորդիս։

Որք պահեն զուխտս նր՟. յիշեն զպատուիրանս նր՟ և առնեն զնա։

Տէր յերկինս պատրաս-
տեաց զաթոռ իւր. ար-
քայութիւն նորա ամենեցուն
տիրէ։

Օրհնեցէք զՏր ամենայն
հրեշտակք նորա. հզօրք
զօրուբ, որք առնէք զբան
նր ՚ի լսել ձայնի պատ-
գամաց նորա։

Օրհնեցէք զՏր ամենայն
զօրութիւնք նր. պաշտօ-
նեայք նր, և արարօղք
կամաց նորա։

Օրհնեցէք զՏր ամենայն
գործք նորա. ընդ ամ
տեղիս է տէրութիւն նր.
օրհնեա անձն իմ զՏր։

Տէր լուր աղօթից իմոց. ունկն դիր խնդրուածոց իմոց ճշմարտութեամբ քով։

Լուր ինձ արդարութեամբ քով. և մի մտաներ ’ի դատաստան ընդ ծառայի քում. զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի։

Հալածեաց թշնամին զանձն իմ. խոնարհ արար յերկիր զկեանս իմ, և նստոյց զիս ’ի խաւարի որպէս մեռեալս յաւիտենից։

Ձանձրացաւ յիս հոգի իմ. և սիրտ իմ խռովե- ցաւ յիս:

Յիշեցի զաւուրսն զա- ռաջինս. խորհեցայ յա̃մ գործս քո. յարարածս ձեռաց քոց խորհեցայ, և համբարձի առ քեզ զձեռս իմ:

Անձն իմ ոպ̃ երկիր՝ ծա- րաւի է առ քեզ. վաղ- վաղակի լուր ինձ տէր. զի նուաղեցաւ յինէն հո- գի իմ:

Մի դարձուցաներ զերեսս քո յինէն. նմանիցիմ

այնոցիկ՝ որք իջանեն 'ի
գուբ։

Լսելի արա՛ ինձ առաւօ-
տուց զողորմութիւն քո .
զի ես 'ի քեզ տ̃ր յու-
սացայ։

Ցո՛յց ինձ ճանապարհ՝
յոր գնացից. զի առ քեզ
տէր համբարձի զանձն
իմ.

Փրկեա՛ զիս 'ի թշնամեաց
իմոց տ̃ր. զի զքեզ ապա-
ւէն ինձ արարի։

Ուսո՛ ինձ առնել զկամս
քո. զի դու ես աստուած
իմ։

Հոգի քո բարի առաջ-
նորդեսցէ ինձ 'ի յերկիր
ուղիղ:

Վասն անուան քո տէր
կեցուսցես զիս. արդա-
րութեամբ քով հանցես 'ի
նեղութենէ զանձն իմ:
Ողորմութեամբ քով սատակես-
ցես զթշնամիս իմ. և կո-
րուսցես զամ նեղիչս ան-
ձին իմոյ. զի ես ծառայ
քո եմ:

Փառք Հօր, և Որդւոյ
և Հոգւոյն սրբոյ. այժմ
և միշտ, և յաւիտեանս
յաւիտենից. Ամէն:

## Երգ Տեառն Ներսէսի Հայոց Կաթողիկոսի։

Յիշեսցուք 'ի գիշերի զանուն քո Տէր։ Բղխեսցեն սիրտք մեր զբան բարի. և լեզուք մեր պատմեսցեն զգործս երկնաւոր Թագաւորիդ։ 'Ի մէջ գիշերի յարուցեալ խոստովանեսցուք զքեզ Տէր։

Զաղօթս մեր տացուք քեզ Տէր. 'ի գաւիթս քո 'ի մէջ նոր Երուսաղէմի։

՚Ի գիշերի համբարձցուք զձեռս մեր սրբութ̅ առ քեզ տէր։

՚Ի ձայն գոհութե̅ ա̃մ հոգիք օրհնեսջիք զտ̃ր։

Զարթի՛ք փառք իմ, զարթի՛ք, և ես զարթեայց առաւօտուց. ալէլուիա։

Զարթի՛ք ընդ զուարթունս, մանկունք վերինն սիօնի. ալէ։

Զարթի՛ք որդիք լուսոյ՝ ՚ի յօրհնութ̅ հօրն լուսոյ. ալէ։

Զարթի՛ք փրկեալք արեամբ. և տուք զփառս փրկողին. ալէ։

Զարթի՛ք նոր ժողո-
վուրդք, նոր երգս առեալ
նորոգողին. ալէ:
Զարթի՛ք հարսունք հոգ-
ւով սպասեալք գալըն մ̃բ
փեսային . ալէ:
Զարթի՛ք վառեալք լու-
սով ըստ իմաստուն մ̃բ
կուսանացն. ալէ:
Զարթի՛ք պատրաստե-
ցէք իւղ լապտերաց ջերմ
առատասուս. ալէ:
Զարթի՛ք և մի՛ ննջէք ,
նման յիմար կուսից նիր-
հէք. ալէ:
Զարթի՛ք երկիրպագ -

ցուք. և արտասուօք զայս
ասասցուք. ալէլուիա։
Զարթի՛ր ընդէ՛ր ննջես. տէր մի՛ մերժեր զմեզ իս-
պառ։
Արի՛ տէր օգնեա մեզ. տացո՛ւք անուանդ քում
զփառս։
Այժմ և յաւէտ. Հօր
և Որդւոյ և սբ Հոգւոյն.
Ամէն։
Զարթուցեալքս ՚ի
զբաղմանէ գիշերային հան
գստենէ։
Շնորհեսցէ մեզ մարդա-
սէր տր մխիթարութիւն

և 'ի սփոփանս եկեղեց-
ւոյ։
Ահիւ և դողութեամբ կաց-
ցուք 'ի յաղօթս։
Ընկեր խոստովանեսցուք
զյանցանս։
Եւ գտցուք 'ի քէն զքա-
ւութիւն և զմեծ ողոր-
մութիւն։
Ամէն. ալէլուիա. ալէ-
լուիա. ալէլուիա։
Ամէն. ալէլուիա. ալէ-
լուիա. ալէլուիա։

## Քարոզ։

Զարթուցեալքս ամենեքեան 'ի հանգստենէ քնոյ, զոր շնորհեաց մեզ մարդասէրն ած 'ի մխիթարութե և 'ի սփոփանս տկարութե մերում. և եկեալքս միաբան հոգևոր երգով 'ի փառաբանութե և 'ի պատիւ ամենասուրբ անուան տն մերոյ և փրկչին յի քի։ Ահիւ և դողութբ կայցուք յաղօթս առաջի նորա։ Եւ գոհացարուք զնմանէ 'ի գիշերային ժա-

մուս յայսմիկ, վ՟ս իրա-
ւանց և արդարութեան
նորա։ Որ ընտրեաց զմեզ
ողորմութ՟բն իւրով. և
շնորհեաց մեզ բերել
զնմանութիւն երկնային
հրեշտակացն, փառաբա-
նիչս տ՟ն ա՟յ ամենեցուն և
մեզ լինել։ Նաւ մեք այ-
սուհետև սրբելով զան-
ձինս մեր 'ի խղճէ և 'ի
չար գործոյ։ Համբարձ-
ցուք զձեռս մեր 'ի սրբու-
թիւն առանց բարկութե՟
և երկմտութե՟։ Հաւա-
տով խնդրեսցուք 'ի Նմա-

նէ զքաւութին և զթո-
ղութին յանցանաց մերոց,
խոստովան լինելով զգաղտ
նիս սրտից մերոց ծած-
կագիտին այ: Ով զի ըն-
դունելով զպաղատանս
մեր աղօթիւք և բարե-
խօսութբ ամենայն սրբոց:
Շնորհեսցէ մեզ մար-
դասէրն ած կեալ առա-
քինութբ, և անարատ
վարուք ըստ կամաց նր
յայսմ աշխարհիս: Եւ
արժանաւոր լինելով յա-
ւիտենական և երկնային
խորանացն: Զոր խոստա-

ցաւ սիրելեաց իւրոյ՝ Ճշմարիտն ա̄ծ՝ յ̄ս ք̄ս․ տ̄ր մեր կեցո՛ և ողո՛ր․

Կեցո՛ տ̄ր։

Զմնացուած գիշերիս խաղաղութ̄բ անցուցանել՝ հաւատով ՚ի տ̄նէ խնդրեսցուք։

Շնորհեա՛ տ̄ր։

Զհրեշտակ խաղաղութ̄ն՝ պահապան անձանց մերոց․ ՚ի տ̄նէ։

Զքաւութ̄ն և զթողութ̄ն յանցանաց մերոց ․ ՚ի տ̄նէ ։

Զսուրբ խաչին մեծ և

կարող զօրութիւնն՝ յօգնութի̅ անձանց մերոց •

՚ի տ̅նէ ։

Եւ ես միաբան վասն ճշմարիտ եւ սուրբ հաւատոյս մերոյ՝ զտ̅ր աղաչեսցուք։ տէր ողորմեա՛։

Զանձինս մեր եւ զմիմեանս՝ տ̅ն տ̅յ ամենակալին յանձն արասցուք ։ Քեզ տ̅ր յանձն եղիցուք։

Ողորմեա՛ց մեզ տէր տ̅ծ մեր՝ ը̅ս մեծի ողորմութե̅ն քում• ասասցուք ամենեքեան միաբանութեամբ։ տ̅րողորմեա՛• տ̅ր ողոր•

Նորին Ներսէսի Հայոց Կա-
թողիկոսի։ Ողբերգութիւն
անձին ողբացելոյ, և ծոցոյ
իւրաքանչիւրոյ դիմի խոստո-
վանութեամբ։

Աշխարհ ամ · առ իս
նայեցեալ · ախտակից լե-
րուք։ Բանամ զշրթու-
նըս · քարքաւիմ լեզուաւս ·
բողոքիմ զանձնես · Տէր
ողորմեա · տէր ողորմեա ·
տէր ողորմեա ։

Գող եղէ մեղաց · գտող
կորստեան · գուբ ինձ փո-
րեցի ։ Դաւեցի զանձն
իմ · դաւաճանեցի · դա-

րան գործեցի. տէր ողորմեա՛։

Երբեմն էի լոյս. և այժմ եմ խաւար. և ստուեր մահու։ Զի՛րդ պատմեցից. զթիւ մեղաց իմոց. զի բազում են յոյժ. տէր ողորմ.

Երկինք և երկիր. եկա՛յք ողբացէք. եղկելի զանձն իմ։ Ընտրեցի զչարն. ընկալայ կամաւ. զհոյլս մեղաց. տէր ողորմ։

Թաւթաւիմ տղմով. թաւալիմ ՚ի մեղս. թօթափիլ չկարեմ։ Ժամս ախ-

տիւ լցեալ․ ժահահոտ
եղէ․ ժամանակս բա-
կուսմս․ տէր ողորմ։
'Ի բաց մերկնեցայ․ 'ի սր̅
խորհրդոյ․ 'ի բարեաց
գործոց։ Լաւ վարկաւ
անձն իմ․ լուսոյն հեռա-
նալ․ լինիլ ընդ խաւար․
տէր ողորմ։
Խորհուրդք չարին խա-
բէին զհոգիս․ խորասոյզ
առնէին։ Ծածկեն անդն-
դօք․ ծիծաղին գլորմամ-
բըս․ ծանակ զիս առնեն․
տէր ողորմ։
Կամաւ կորացայ․ կարկա-

Մեալ անձամբս · կանգ-
նիլ ոչ կարեմ: Հուր
մեղաց կիզող · հրդեհեաց
որ յիս հոգւոր բարիս ·
տէր ողորմ:

Զաղկեցայ մեղօք · ձաղե-
ցին տեսօղք · ձանձրացաւ
հոգիս: Ղեղի դառնու-
թեան · ղօղեալ ՚ի սիրտ
իմ · ղամբար իմ շիջաւ ·
տէր ողորմ:

Ճաշակմամբ մեղաց · Ճա-
շեցի կմահ · Ճոխս աղքա-
տացայ: Մեռեալ եմ
հոգւովս · մոլորեալ մտօքս ·
միայն կամ մարմնովս · տէր
ողորմ:

Յորոգայթ մահու. յոր-
սողին անկայ. յաղթեցայ
յախտից: Նետից թշնամ-
ւոյն. նշաւակ եղէ. նոր
միշտ խոցոտիմ. տէր ո-
ղորմ:

Շուրջ պատեալ գինև.
շունք բազումք եղեն.
շաղախին արեամբս:
Որս եղէ չարին. ունկա-
նաւ մեղաց. որսացաւ
զանձն իմ. տէր ողորմ:
Զարաչար վշտօք. չարչա-
րի անձն իմ. չունիմ դա-
դարումն: Պարտական
գտայ. պարտուց յանցա-

Նայց · պարտեալս 'ի մե-
ղաց · տէր ողորմ։
Զանամ զղջանալ · չե-
ռանիմ դարձեալ · ջեռ-
նում հրով մեղաց։ Ռաբ-
բի կոչեցայ · ռակայ ա-
նուանիմ · ռամկական վա-
րուքս · տէր ողորմ։
Սիրով ցանկութե · սաս-
տիկ բարկութեան · սիրտ
իմ խոցեալ է ։ Վիրօք
յանցանաց · վշտանայ հո-
գիս · վտարանեալ շրջիմ ·
տէր ողորմ։
Տիրեցին ինձ չարք · տա-
րագիր հանին · տիրական

դրկացն ։ Թագուհւոյն
բարւոյ․ բախձական ձայ-
նին․ րոտինս ոչ լուայ․
տէր ողորմ։

Յանկութիւն չարեաց․
յանկալի դիմօք․ յաւե-
ցոյց զաչս իմ ։ Դիւրա-
քանչիւրոց․ հիւսմամբ
խուռն ախտից․ հիւծեալ
է հոգիս․ տր ողորմ։

Փութայէր անձն իմ․
փախչիլ 'ի չարեաց․ փա-
փաքիլ բարեաց ։ Քեզ
միշտ մերձ ծանիր․ քուն
մահու եկեալ․ քննօղ
դատաւոր․ տէր ողորմ։

Ածածնին բարեխօսու-թեամբ. քիշեա՛ տէր և ողորմեա։

Նորին Տն Ներսէսի Հայոց կաթողիկոսի։ Երգ աշխարհա-կան ՚ի դէմս որդւոյ Երրոր-դութեան։

Առաւօտ լուսոյ. արե-գակն արդար. առ իս լոյս ծագեա՛։ Բղխումն ՚ի հօ-րէ. բղխեա՛ ՚ի հոգւոյս. բան քեզ ՚ի հաճոյս։ Գանձդ ողորմութեան.

զանձիդ ծածկելոյ. զտօղ զիս արա՛ ։ Դուռն ողորմութեան . դաւանողիս բա՛ց . դասեցո՛ վերնոցն։ Երրեակ միութի՛ . եղելոյ խնամօղ. և ինձ ողորմեա՛։ Զարթիր տէր յօգնել. զարթո՛ զթմրիրս. զուարթնոց նմանիլ։

Իդ հայր անսկիզբն. էակից որդի . և միշտ սբ հոգի։ Ընկա՛լ զիս զթած. ընկա՛լ ողորմած . ընկա՛լ մարդասէր։

Թագաւոր փառաց. թողութիյ տուօղ. թո՛ղ ինձ

պյանցանս։ Ժողովօղ բա-
րեաց․ ժողովեա՛ և զիս․
ժողովս անդրանկաց։
՚Ի քէն տէր հայցեմ․ ՚ի
մարդասիրէդ․ ինձ բժըշ-
կութիւն։ Լե՛ր կեանք
մեռելոյս․ լոյս խաւարե-
լոյս․ լուծանօղ ցաւոյս։
Խորհրդոց գիտօղ․ խա-
ւարիս շնորհեա՛․ խոր-
հուրդ լուսաւոր։ Ծը-
նունդ հօր ծոցոյ․ ծած-
կելոյս ստուերաւ․ ծագեա՛
զլոյս փառաց։
Կենարար փրկիչ․ կեցո՛
զմեռեալս․ կանգնեա՛ ըզ-

գլորեալս։ Հաստատեա հա-
ւատով. հաստատեա՛ յու-
սով. հիմնեցո՛ սիրով։
Զայնիւս աղաչեմ. ձե-
ռօքս պաղատիմ. ձիր բա-
րեաց շնորհեա՛։ Լամբա-
րամբք լուսոյ. ղեկավար
Ճարտար. ղօղեալս ամ-
բոցն։

Ճառագայթ փառաց.
Ճանապարհ ինձ ցո՛յց.
Ճեպել ՚ի յերկինս։ Մի-
ածին հօր. մո՛յծ զիս
յառագաստ. մաքուր հար-
սանեացդ։

Յորժամ գաս փառօք.

յահագին աւուրն․ յի-
շեա՛ զիս Քս։ Նորոգող
հնութեանց․ նորոգեա՛ և
զիս․ նորոգ զարդարեա՛։
Շնորհատու բարեաց․
շնորհեա՛ զքաւութիւն․
շնորհեա՛ զթողութիւն։
Ուրախացո՛ տէր․ ոգւոյս
փրկութբ․ որ վս եմ 'ի
սուգ։

Չար մշակողին․ չար սեր-
մանց նորին․ չորացո՛ ըզ-
պտուղն։ Պարգևիչ բա-
րեաց․ պարգևեա՛ իմոց․
պարտեացս թողութի։
Ջուր շնորհեա՛ աչացս․

ջերմ հեղուլ զարտօսր. ջնջել զյանցանս։ Ուե-տինդ քաղցու. ուամ հոգ-ւոյս արբո՛. ուահ ցո՛յց ինձ լուսոյ։

Սէր անուն յս̅. սիրով քով ձմլեա՛. սիրտ իմ քարեղէն։ Վս̅ գթուն̅. վս̅ ողորմութն̅. վերստին կեցո՛։

Տենչալւոյդ տեսլեամբ. տո՛ւր ինձ յագենալ. տէր յս̅ քս̅։ Րաբունդ երկնա-ւոր. րոտեա՛ զաշակերտս. րամից երկնայնոց։

Ցօղ արեան քո տէր.

յօղեամ ՚ի հոգիս. ընծայա-
ցէ անձն իմ: Լուծեալս
մեղօք. լուծեալ աղաչեմ.
լուսել ինձ բարիս:
Փրկիչ բոլորից. փութամ
զիս փրկել. փորձութեց
մեղաց: Քաւիչ յանցա-
նաց. քաւեա զօրհնա-
բանս. քեզ երգել զփառս:
Ածածնին բարեխօսու-
թեամբն՝ յիշեա տէր և
ողորմեա:

Աղօթք:

Օքէն գոհանամք տէր
ած մեր, որ շնորհեցեր
մեզ հանգիստ քնոյ խա-

ղաղութիւն։ Դու զարթու-
ցեալ ժամանեցուցեր զմեզ
կանխել յերկրպագութիւն
ահաւոր և փառաւորեալ
անուանդ քում սրբոյ։
Տուր մեզ տէր աղաչեմք
զքեզ՝ զմնացուած գիշե-
րիս խաղաղութիւն անցու-
ցանել. և զամ ժամա-
նակս կենաց պանդխտու-
թեան մերոյ, երկիւղիւդ
քո ամրացո, և պահեա։
Որպ զի զգուշութիւն՝ և
անարատ վարուք կրօնա-
ւորեալք յայսմ աշխար-
հիս՝ ժամանեսցուք յան-

քոյթ և 'ի խաղաղ նաւահանգիստ յաւիտենական 'ի կեանսդ։ Շնորհօք և մարդասիրութբ տն մերոյ՝ և փրկչին յսի քսի։ Ընդ որում քեզ հօր և հոգւոյդ սրբոյ վայել է փառք՝ իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Խաղաղութի ամէն։

Այ երկրպագեսցուք։

Նայեաց տէր բարերար ողորմութբ քով յերկրպագուս և 'ի փառաբա-

նոյնս անուանդ քում սրյ̃․ տէր գոհութեանց՝ խաղաղացո՛ զանձինս մեր յա̃մ սատանայական խռովութեանց․ և յաշխարհական զբօսանաց ։ Զ հրեշտակ խաղաղութեան քո առաքեա՛ առ մեզ․ որ եկեալ պահեսցէ զմեզ անխռովս ՚ի տուէ և ՚ի գիշերի՝ յարթնութեան և ՚ի հանգստեան մերում։ Որպէս զի բարեպաշտուբ̃՝ և արժանաւորապէս քեզ մ̃նդ ծառայելով ՚ի կեանս յայսմիկ, ժամա-

նիսցուք յաւիտենական
երկնից արքայութ̄ն քո·
զոր պատրաստեցեր 'ի
սկզբանէ աշխարհի ս̄ց
քոց: Եւ ը̄ նոսին գոհա-
նալով փառաւորեսցուք
զՀայր և զՈրդի և զս̄բ
Հոգիդ, այժմ և միշտ.
և յաւիտեանս յաւիտե-
նից:

Օրհնեալ տէր մեր Յս̄
Քս̄. Ամէն:

## Մաղթանք պահոց ։

Քն է իմ Ած, և փառաւոր առնեմ զնա . Ած հօր իմոյ. և բարձր արարից զնա ։ Մարդասէր Տէր ։

Տուք փառս Աստուծոյ . տուք օրհնութիւն Մարդասիրին՝ Թագաւորին յաւիտենից . որ փրկէ զծառայս իւր, և կեցուցանէ։

Մարդասէր ։

Դու ես տէր մեր . դու ես քս փրկիչ մեր. զքեզ օրհնեն անձինք մեր։ Մարդասէր ։

Բարձրացաւ եղջիւր իմ յած փրկիչ իմ. հաստատեցաւ սիրտ իմ ՚ի տէր. տրամբ և հաւատով: Սար

դասէր:

Խաղաղութեց տուօղ.քն, զխաղաղութի և զողորմութիւն քո պարգևեա մեզ: Սարգա:

Յոյս կենդանուէն՝ յոյս և սպասուէնս փրկութեն տէր յն, փրկեա և փարատեցն կցաւսանձիս իմոյ: Սարգ: Նկեսցեն աղօթք մեր ՚ի առաջայ նր քո, խոնարհեցոյ ունկն քո ՚ի խըն-

դրուածս մեր։ Մարդա ։
Լուր մեզ տէր՝ լուր մեզ
ա͞ծային ողորմութեամբ,
և գթութ͞բ քով լնայսն
կարաւածս քո ։ Մար-
դաս ։

Քարոզ Երանեաց և Իկրե-
կանոնայն ։

Ա͞ծ ի վերուստ խաղա-
ղութեան և փրկութեան
անձանց մերոց․ զՏ͞ր ա-
ղաչեսցուք։
Վասն լսելի լինելոյ ա͞ն
ա͞յ ձայնի աղաչանաց մե-
րոց․ զՏ͞ր աղ։

Վասն քաւիչ և ներող
լինելոյ տ՟յ ՚ի վերայ մե-
ղաց մերոց ։ կ՟ր աղ։

Վասն թողլոյ մեզ կ՟մ
յանցանս մեր զկամայ և
զակամայ ։ զտէր ։

Վասն զի մ՟ի է խոստանս
գտանիցեմք յաւուրն սպա-
տասխանատուութե՟ն ։ կ՟ր ։

Վասն հոգւոյն հանգու-
ցելոց որք ճշմարիտ և
ուղիղ հաւատով ՚ի ք՟ս
ննջեցին ։ կ՟ր ։

Եւս միաբան վասն
ճշմարիտ և սուրբ հա-
ւատոյս մերոյ ։ զտէր ։

Զանձինս մեր և զմի֊
մեանս տ̃ն ա̃յ ամենակա֊
լին յանձն արասցուք։
Ողորմեաց մեզ տէր ա̃ծ
մեր՝ ըստ մեծի ողորմու֊
թեան քում. ասասցուք
ամենեքեան միաբանու֊
թեամբ։ Տ̃ր ողորմեա՛.
տէր ողորմեա՛. տէր ողոր֊
մեա։

Աղօթք։

Տ̃ր տունջեան և գոյա֊
ցուցիչ գիշերոյ, որ արա֊
րեր զտիւ ՚ի զբօսանս բա֊
րեգործութեան ՚ի փրկու֊
թիւն անձանց մերոց. և
զգիշեր ՚ի հանգիստ քնոյ

տկարացեալ բնութեանս մերոյ ։ Իսկ այժմ զարթուցեալ բացեր զբերանս մեր յօրհնաբանութիւն ահաւոր և փառաւորեալ անուանդ քում ա̄ծյ։ Ընկալ և այժմ զաղաչանս մեր. և յաջողեա մեզ ուղիղ հաւատով և առաքինասէր վարուք 'ի նոյն պաշտօն քո կանխել միշտ ։ Այլ նուիրեն կանոնիւս անդադար վառաւորել զհայր և զորդի և զս̄բ հոգին. Այժմ և միշտ ։

Խաղաղականն ամենեցուն։

Զքեզ՝ որ յա͞մի գթած և մարդասէր տէր ես, աղաչեմք հանապազ. զի զօրայուսցես զմեզ օր ըստ օրէ կալ ՚ի կարգի կրօնաւորութեան մերում։ Թեթևացո՛ տէր զքաղցր լուծ քո՝ զոր եդեր ՚ի վերայ մեր. զի կարասցուք կալ ՚ի պատուիրանի քում, և զհաճոյսն առնել առաջի քո յամենայն ժամ ՚ի տուէ և ՚ի գիշերի։ Հրեշտակային երգակցութ͞բ զքեզ օրհ-

նել. զքեզ գովել. և քեզ
գոհութիւնս և փառս
մատուցանել ամենայօր-
հնութն̃դ։ Այժմ միշտ։
Սաղմոսիւք և օրհնութք̃
և երգովք հոգևորովք ան-
դադար փառաւորեմք ըզ-
հայր և զորդի և զս̃բ հո-
գին ։ Այժմ և միշտ։
Օրհնեալ տէր մեր յս̃
քս̃. Ամէն։ Հայր մեր որ
յերկինս։

Քարոզ էրկրին. պատճէն, և տէր ապաւէն հանոնայն։

Ած ՚ի գիշերի և ՚ի տունջեան և յամ ժամու խօսիլ մեզ զբան ծո․
վտր։

Ած հանկանելոյ մեզ ՚ի փորձութենէ, որում ոչ կարեմք հանդուրժել․
զտր։

Ած անքնին և անդատապարտ կալ մեզ առաջի ահեղ ատենին քո․
վտէր։

Ած առաջնորդելոյ մեզ

'ի նաւահանգիստն կենաց անվախճանից. պահէր: Աո̄ արժանի լինելոյ մեզ վերին կոչմանն, և երկ-նից արքայութեանն. զՏր: Ատան հոգւոյն: Իւ կս մարդան: Զանձինս մեր:

Ողորմեայ:

## Աղօթք:

'Ի գիշերի և 'ի տուն-ջեան և յամենայն ժա-մու զքեզ աղաչեմք. և 'ի քէն խնդրեմք մար-դասէր տէր: Լուր մեզ Ա̄ծ փրկիչ մեր. խոնար-հեսցի ունկն քո 'ի խնդ-

րուածս մեր․ զի մի՛ ու-
նայն լիցին վաստակք ծա-
ռայից քոց։ Այլ համա-
րեա՛ զաշխատութիւն մեր
՚ի գործ արդարութեան,
և ՚ի պտուղ ա̃ծպաշ-
տութեան։ Ընկա՛լ տէր
զաղօթս և զերկրպագու-
թիւնս մեր․ և հաստա՛ մեզ
զողորմութիւն քո առա-
տապէս։ Ծանկեա՛ զմեզ
ընդ հովանեաւ ամենազօր
աջոյ քոյ։ Զօրացո՛ զմեզ
տէր զօրութբ̃ սբ̃ հոգւոյդ։
Պահեա՛ զմեզ ո̃պ բերբա-
կան․ և արա՛ առ մեզ
նշան բարի ՚ի գովեստ,

և ՚ի փառաբանութիւն անուանդ քում սբյ։ Զի ՚ի քո փառս կատարի ամ արարածոց մշտնջենաւոր փառաբանութի ՚ի բարձունս հօր և որդւոյ և հոգւոյդ սբյ։ Այժմ և միշտ։

## Խաղաղութիւն ամենեցուն ։

Հովիւ քաջ՝ հովիւ բարի և յաւիտենական, նայեաց և այց արա բանաւոր հօտի քոյ, զոր ժողովեցեր առ քեզ գթութեամբ քով։ Զի քոյ առաջի կամք տէր, և առ

՚ի քէն ողորմութեանցդ
և գթութեանցդ ակնունիմք։
Զամենեսեան օրհնեա՛.
զամենեսեան իմաստնացո՛.
զամենեսեան լուսաւորեա՛.
և ամենեցուն պարգևեա՛
զերկնից արքայութիւնդ։
Ա՟ զի դու ես տէր կե-
նաց, և ա՟ծ ողորմութեան.
և քեզ վայելէ փառք
իշխանութի՟, և պատիւ։

Այժմ և միշտ։

՚Ի գիշերի և ՚ի տուն-
ջեան. և յամենայն ժա-
մու անդադար փառաւո-

ընմ.ք զհայր և զորդի, և
զս̃բ հոգին։

Այժմ և միշտ։

Քարոզ ի նախաճէր և խոս֊
տովան հանոնայց։

Վասն ուղղելոյ զգնացս
մեր 'ի ճանապարհս խա֊
ղաղութեան. զտէր աղ։
Վասն ցրելոյ 'ի մէնջ
զամենայն խորհուրդս չա֊
րին. զտէր աղաչ։
Վասն պարգևելոյ մեզ
առողջ խորհուրդս և ա֊
ռաքինի վարս. զտէր։
Վասն պահելոյ զմեզ ը̃

հովանեաւ ամենազօր ա-
ջոյն խւրոյ. զոհէր:
Վասն խորտակելոյ զհա-
կառակորդն վաղվաղակի
ընդ ոտիւք մերովք. զմր:
Վասն հոգւոցն: Նաեւս
միաբան: Զանձինս:
Ողորմեաց:

Աղօթք:

ՏՐ երկնի եւ երկրի՝ ա-
րարիչ ամ արարածոց՝ ե-
րեւելեաց եւ աներեւոյ-
թից: Առ քեզ կարդամք
յամենայն ժամ. զի ընդ
ամենայն անձին է տրաւ-

թիւն քո․ և արքայութեն
քո ամենեցուն տիրէ ։
Շնորհեա մեզ երկիւղիւ
՚ի պաշտօն քո կանխել
համապազ․ սիրել զքեզ
՚ի բոլոր սրտէ, և ՚ի բո-
վանդակ մտաց, և յամ
ուժէ մերմէ պահել
զպատուիրանս քո․ համ-
բաւնալ առ քեզ զձեռս
մեր ՚ի սրբութեն առանց
բարկութեն և երկմտու-
թեան, և գտանել ՚ի քէն
զշնորհս և զողորմութի․
և զառաքինասէր գործոյն
յաջողութեն ։ Ած դու

ես տէր կենաց և աստուած ողոր-մութեանց. և քեզ վայելէ փառք, իշխանութիւն, և պատիւ։ Այժմ և միշտ.

Խաղաղութիւն ամենեցուն։

Քում ամենազօր և յաղթօղ տէրութեանդ կրկնիմ ծունր յերկրպագութիւն. և փառաւորի յամենեցուն թագաւորութիւն քո։ Նայեա՛ յերկրպագութիւն մեր. և ուսո՛ մեզ առնել զարդարութիւն ճշմարտութեան. Աստուած զի դու ես աստուած խաղաղութեան՝ որ բարձեր

զթշնամութ՟ն 'ի միջոյ. և
արարեր խաղաղութ՟ի յեր-
կինս և յերկրի: Հեռա-
ւորաց և մերձաւորաց ա-
ւետարանեցեր զնոր պար-
գևս քոյին բարերայդ: Ո-
րում և զմեզ մեծի շնոր-
հացդ արժանաւորս ա-
րասցես՝ դասելով ը՟ ճշ-
մարիտ երկրպագուս քո.
Ա՟ծ մեր և տէր և փրկիչ
յ՟ս ք՟ս: Որ ես օրհնեալ
ընդ հօր, և ը՟ սրբոյ հոգ-
ւոյն: Այժմ և միշտ:
Յերգս օրհնութ՟ն և 'ի
ձայն սաղմոսաց անդա-

դար փառաւորեմք զՀայր
և զՈրդի և զՍուրբ Հոգին .

Ո. ժմ և :

Քարոզ ողորմեա և 'ի նե-
ղութ՟է ժամանակաց :

Վ՟ն գտանելոյ մեզ զշնոր-
հըս և զողորմութի՟ն 'ի բա-
րերար ա՟նէ մերմէ . զտէր :
Վասն փրկելոյ զմեզ 'ի
զրպարտութ՟է մարդկան,
և յորոգայթից սատանա-
յի . զտ՟ր :
Վ՟ ա՟մ անձանց քրիս-
տոնէից և տանց հաւատա-
ցելոց . զտ՟ր :

Ամ որք 'ի լերինս՝ յայրս՝
և 'ի փապարս բնակեալ
են սբ հայրքն մեր զտէր։
Ասոն որք սաղմոսիւք և
օրհնութեամբ կատարեն
զամ ժամանակս կենաց
իւրեանց. զտէր։
Ասոն հոգւոյն ։ Նուևս
միաբան։ Զանձինս։
Ողորմեայ։

Աղօթք ։

Գոհանամք զքէն տէր
ած մեր, որ զարթուցեր
զմեզ 'ի հանգստենէ քնոյ
շնորհիւ ողորմութե քո ։
Զարթո՛ զմիտս մեր ար-

դարութ̄ն առ քեզ տէր Աստուած մեր. զի տեսցեն աչք մեր զփրկութ̄ի քո։ Ընկեսցէ և բնակեսցէ առ մեզ ա̄ծութիւն քո. և ողորմութիւն քո հովանի և պահապան լիցի ՚ի վերայ պաշտօնէից քոց։ Առ զմեզ զծառայս քո արժանի արա ՚ի տուէ և ՚ի գիշերի, և յամենայն ժամու միշտ խորհիլ ՚ի սէր պատուիրանաց քոց. և գոհանալով փառաւորել զհայր և զորդի և զս̄բ հոգիդ։ Այժմ

և միշտ։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Կենդանարար զօրութի և աղբիւր անմահութե դու ես ք͞ս ա͞ծ փրկիչ մեր • որ շնորհեցեր մեզ ՚ի մէջ գիշերի յառնել, և խոստովան լինիլ առ քեզ վ͞ն իրաւանց և արդարութեան քո ։ Եւ այժմ աղաչեմք զքեզ տ͞ր ա͞ծ մեր, արա՛ զմեզ արթունս և պատրաստս ՚ի ժամ առաւօտու ը͞ս ս͞րս քո ։ Եւ ընդ նոցին գո-

հանալով փառաւորել
զքեզ ը̅ հօր և ընդ հոգ-
ւոյդ սրբոյ․ Այժմ և
միշտ։

Գոհութբ̅ և ճշմարիտ
խոստովանութեամբ ան-
դադար փառաւորեմք
զհայր և զորդի, և զս̅բ
հոգին․ այժմ և միշտ։

Թագաւորաց աղաչաւորութ՟է:

ԲՁ Թագաւոր յաւիտենան:
Լուր մեզ ա՟ծ փրկիչ մեր.
և կեցո՛ զմեզ, որ յամի
կարօղդ ես: Լուր մեզ
աստուած փրկիչ մեր՝
յոյս ա՟մ ծագաց երկրի,
և որ ՚ի ծով հեռի: Ո՛
րպատրաստէ զլերինս զօ-
րութ՟ իւրով. և զգեցեալ
է զզօրութ՟ի. և կեցո՛ ըզ-
մեզ, որ յա՟մի կարօղդ ես:
Լուր աղաչանաց մերոց
տ՟ր մարդասէր, և գթա՛
՚ի մեզ:

Մի՛ զիս անտես առներ, այլ օգնեա ինձ մարդասէր ։

Մի՛ ընկենուր զիս ՚ի յերեսաց քոց, և զհոգին քո սուրբ մի՛ հաներ յինէն։

Այլ տուր ինձ զնորոգումն փրկութեան․ և հոգւով պետութեան քո հաստատեա զիս․ այլ օգնեա ։

Մի՛ անտես առներ զիս տէր իմ փրկիչ իմ․ այլ շնորհեա ինձ թողութիւն բազմապատիկ մարդասէր, և կեցո՛ ։

Երկինք և երկիր գոհա-

նման զքէն Տր. արարածք
Տմ քեզ երկրպագանեն.
և հրեշտակք ՚ի բարձունս
աղաղակեն և ասեն. ողոր.
մեա դու ստեղծեր, մի
կորուսաներ ։

Օրհնք երկնից, ջուրք
որ ՚ի վերոյ քան զերկինս,
օրհնեցէք զանուն Տն ։
Զի նա ասաց, և եղեն.
հրամայեաց և հաստատե-
ցան. և հրեշտակք ՚ի
բարձ ։

Օրհնեք և երկիր հանա-
պազ զքեզ գովեն. Թա-
գաւոր փառաց, սերով-

բէք և քերովբէք 'ի խո-
նարհ ունելով զդէմս իւ-
րեանց. և միաձայն բար-
բառով աղաղակեն և ա-
սեն. սուրբ՝ սուրբ՝ սուրբ տէր զօ-
րութեանց ։

Երկայնամիտ ես տէր առ կՀ
ամենեսեան. և գթած տէր
'ի վերայ մեր ողջ և յաւա-
զակին փրկիչ, և կեցո ։
Երկայնամիտ բազում ո-
ղորմ և ճշմարիտ՝ նա-
յեաց առ իս, և ողոր-
մեաց ինձ ։ Տուր զօրութիւն
ծառայի քո, կեցո զորդի
աղախնոյ քո. և արա

առ իս նշան բարութե՟ն·
և գթա՛ տէր ՚ի վ՟ր մեր
ո՟պ և յառաջ։

Տ՟ր որ գթացար յաւա-
զակն խաչակից լինել քեզ·
և մաքրեցեր զաղտեղու-
թիւն յանցանաց նորա
յաղբերէ կողի քո· գթա՛
և յիս ՚ի մեղաւորս, որ
ծառաւիս եմ առ քեզ·
և փափաքիմ ՚ի գաւիթս
քո ո՟պ զմի ՚ի յեղջեր-
ուաց ՚ի յաղբերս ջուրց։
Մարտեաւ ընդ իս թշնա-
մին· հանապազ զիս կամի
կորուսանել· այլ դու տ՟ր

իմ այց արա մոլորեալ ոչխարիս, և կեցո՛։

Մարտեան ը̄ իս 'ի տարապարտուց. և փոխանակ սիրոյ իմոյ մատնէին զիս. այլ ես յաղօթս կայի։

Հատուցին ինձ չար փոխանակ բարւոյ. ատելութի̃ փոխանակ սիրոյ իմո̃յ. այլ դու տէր իմ այց արա մոլորեալ ոչխարիս, և կեցո՛։

Որ հովիւդ ես հօտիդ բանաւոր կենդանեաց. տուր ինձ յոյս կենաց ապաշխարութե̃ն, և դարձո՛ մոլորեալս 'ի հօտ քո քս̃,

և կեցո՛։

Մեղայ և աղաչեմ զքեզ. թողութիւն շնորհեա՛ մեղայ իմոյ. քաւիչ իմ Տէր քո գթութեամբդ, որ միայնդ ես փրկիչ, և կեցո՛։

Մեղայ տէր մեղայ. և զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ։ Աղաչեմ և և խնդրեմ 'ի քէն, թո՛ղ ինձ տէր, թո՛ղ ինձ. և մի՛ կորուսաներ զիս ընդ անօրէնութեան իմոյ. քաւիչ իմ Տէր քո գթութեամբդ, որ միայնդ։

Մեղայ քեզ տէր. մեղայ

քեզ տէր. մեղայ, և ք
զաւազ ծովու բազում
են յանցանք իմ. պատ-
րանք աշխարհիս խաբե-
ցին զիս. և եղէ անպտուղ
'ի կենաց յուսոյդ. այլ
դու անոխակալ և անյի-
շաչար փրկիչ, խնայեա՛ 'ի
մեղուցեալ ծառայս, և
կեցո՛։

Տէր իմ բազում են ա- ԴՇ
նօրէնութիւնք անձին ի-
մոյ. ոչ յիշեցի զահեղ
զդատաստանս քո. արդ
անկեալ զքեզ աղաչեմ.
շնորհեա՛ ինձ ապաշխա-

րութ տէր, և ողորմեա՛։
Անօրէնութիք իմ՛ բարձ-
րացան քան զգլուխ իմ․
և ոպ բեռն ծանր ծան-
րացան ՚ի վերայ իմ։ Նե-
խեցան և փտեցան վէրք
իմ՛ յերեսաց անզգամու-
թեան իմոյ․ ո՛չ յիշեցի
պահել զդատաստանս քո․
արդ անկեալ զքեզ աղա-
չեմ․ շնորհեա՛ ինձ ապաշ-
խարութ տէր, և ողորմ՛։
Պաղատանս մատուցա-
նեմք քեզ հայր երկնա-
ւոր, մի՛ անտես առներ զա-
ղաչանս մեր․ այլ անջ

զցասումն քո 'ի մէնջ. և
յիշեա՛ զի պատկեր եմք
բարերարութեանդ։
Տէր իմ գթութիւնք քո բա-
զում են յոյժ. առ իս
արա՛ զբարերարութիւն քո,
ո՟պ և մաքսաւորին. և
ինձ ողորմեա՛։
Գթութիւնք քո բազում են
տ՟ր. և ըստ իրաւանց քոց
կեցո՛ զիս։ Բազում են.
որք հալածեն և նեղեն
զիս. 'ի վկայութեանց քոց
ես ո՛չ խոտորեցայ. առ իս
արա՛ զբարերարութիւն քո,
ո՟պ և մա՟ք։

Անոխակալ և անյիշաչար տէր, որ գթալով 'ի մեղաւորս շնորհեսցես ապաշխարութի․ արդ գթա և յիս տէր 'ի մեղուցեալ և յանօրինեալ քո ծառայս․ և փոխարկեա զդործօղս չարեաց 'ի զղջումն ապաշխարութն, և կեցո՛։ 'Ի տաճարի քում սրբութեան փառաւորելով ըզքեզ․ դու ունիս իշխանութի, ողորմեա մեզ։

Այլ ես ըստ բազում ողորմութն քում մտից 'ի տուն քո, և երկրպագից

՚ի տաճար ս̃բ քո երկիւ-
ղիւ քո ։
Տէր առաջնորդեա ինձ
յարդարութեան քում
վասն թշնամեաց իմոց ․
և ուղիղ արա առաջի
իմ ճանապարհս քո ․
դու ունիս իշխա ։
՚Ի տաճարի քում սրբու-
թեան հանապազ զքեզ
գովեմք թագաւոր փա-
ռաց․ որ ունիս իշխանու-
թիւն կենաց և փրկու-
թեան․ ողորմեա մեզ ։
Ապաշխարութեան ար- եշ
տասուս աւազան լինի, և

լուանայ զբազմութի՟ մե-
ղաց. սովաւ շնորհեա՛ յա-
ռաջ քա՛ն զվախճան ըզ-
քաւութի՟ և զմեծ քո զո-
ղորմութի՟ ։

Ծարաւի է անձն իմ առ
քեզ ա՟ծ հզօր և կեն-
դանի. երբ եկից երև-
ցայց երեսացդ ա՟յ։ Եղեն
ինձ արտասուք իմ կերա-
կուր 'ի տուէ և 'ի գի-
շերի. և այն զի ասէին
ցիս զօրհանապազ, թէ
ո՛ւր է ա՟ծ քո. սովաւ
շնորհեա՛ յառաջ քան
զվախ։

Յորժամ գաս փառօք հօր յահագին աւուրն 'ի դատել զերկիր․ և դողան սարսափմամբ երկրածինքս ամ 'ի յահէ քումմէ․ 'ի նստիլ քոյ յատենի դատաւոր ահեղ, և յակնարկել քո յարարածս, յիշեա և զիս զքաղցրամեղս․ որ ընկղմեալս եմ յանցանօք բանսարկուին խամբմամբ․ և հայցեմ զաւազակին, որ և զիս յիշեա․ որ միայնդ ես փրկիչ և կեցո՛։

Զիս որ 'ի նաւի աշ-

խարհի ալեկոծեն մեզ
իմ. Նաւահանգիստ ապաշ-
խարութեան շնորհեա ինձ
բազումողորմ. Եւ կեցո:
Կեցո զիս տէր, զի հասին
Ջուրք յանձն իմ. ընկ-
ղայ ես ՚ի խորս անդն-
դոց՝ ուր ոչ գոյ ինձ հան-
գիստ. Նաւահանգիստ ա-
պաշխարութեան շնոր-
հեա ինձ բա:

Նաւապետ բարեգութ
առ. քեզ ապաւինիմ.
տուր ինձ ձեռն ոպ եր-
բեմ պետրոսի ՚ի վր ա-
լեացն. որ ծփիմս ալէ-

կոծեալ կանգնանօք մե-
ղաց. և կեցո՛։
Դու ես քս̅ աղբիւր կե-
նաց, բղխումն ողորմու-
թեան. շնորհեա՛ փրկիչ
անձանց մերոց զթողու-
թիւն մեղաց մերոց։
՚ի քէն է տէր աղբիւր
կենաց. և լուսով երե-
սաց քոց տեսանեմք զլոյս։
Ծագեա՛ զողորմութիս քո,
որք ճանաչեն զքեզ. զար-
դարութիս քո, ոյք ուղիղ
են սրտիւք. շնորհեա՛
փրկիչ անձանց մե։
Որ աղբիւրդ ես ծարա-

ւեաց եւ հանգիստ աշխա-
տելոց. Ճանապարհ մոլո-
րելոց. եւ հովիւ հոգւոր
բանաւոր հօտի. փափա-
քողացս առ քեզ քո՛ լե՛ր
նաւահանգիստ. եւ արբո՛
մեզ ծարաւեացս զբաժակ
քո քաղցրութեան կան-
սպառ աղբերէդ։

ուր՝ Ի տաճարի սրբութեան
քում լուր տէր ձայնի
իմում. եւ աղաչանք իմ
ժամանեսցեն ՚ի յականջս
քո տէր։
Լուաւ ինձ ՚ի տաճարէ
սրբոյ իւրմէ ձայնի աղօ-

Թիւր իմոց. և աղաղակ
իմ առաջի նորա մտցէ
յականջս նր. և աղաչանք
իմ ժամա։

Որ լուսատու ես տիեզե-
րաց քո ած, լուսաւորեա
զիմ զխաւարային խոր-
հուրդս, և կեցո։

Օրհնեալ ես տէր, և փա-
ռաւորեալ է քո անբաւ
մարդասիրութդ. զաղա-
չանս մեր քեզ մատու-
ցանեմք, որ թագաւորդ
ես յաւիտենից. զննջե-
ցեալն մեր արժանի արա
տէր ընդունիլ 'ի կեանսդ
յաւիտենից։

Արտասուս ինձ շնորհեա՛ ՚ի յապաշխարութեան տր. զի լուացից զմեղս անձին իմոյ որպէս պոռնիկն աղաչեմ, և կեցո՛։

Վաստակեցայ ես ՚ի հեծութեան իմում. լուացի զամ գիշեր զմահիճս իմ. և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի. զի լուացից զմեղս։

Որ աղբիւր ես անսպական ք͞ս ա͞ծ, զվիրաւորեալ անձն իմ ՚ի մեղաց՝ բժշկեա՛ տէր բղխմամբ արտասուաց. և կեցո՛։

Զմոլորեալ ծառայս խնդրեա՛ տէր. և մի՛ դատապարտեր զիս 'ի յաւուրն այցելութեան քոյ մարդասէր ։

Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ. և իրաւունք քո օգնեսցեն ինձ։

Մոլորեցայ ես ոպ՟ զոչխար կորուսեալ. խնդրեա՛ զծառայս քո. զի ըզպատուիրանս քո ես ոչ մոռացայ. և մի՛ դատապարտեր զիս 'ի յաւուրն այցելութեան քոյ մարդ։

Որ մոլորեցայ 'ի հօտէ

քումմէ հովիւ բարի·
խնդրեմ զիս զմոլորեալս·
և արժանաւորեմ խառ-
նիլ ՚ի հօտ քո ք͞ն · և
կեցո՛ ։



Печ: въ Лит: А: Ястребилова.

## Օրհնութեան Ժամ։

Լցաք առաւօտու ողորմութեամբ քով. ցնծացաք և ուրախ եղաք զամ աւուրս կենաց մերոց։

Ուրախ եղաք փոխանակ աւուրցն, յորս խոնարհ արարեր զմեզ. և ամացն յորս տեսաք զչարչարանս։

Հայեա՛ց տէր 'ի ծառայս քո՝ և 'ի գործս ձեռաց քոց. և առաջնորդեա՛ որդւոց նոցա. Եղիցի լոյս տեառն այ 'ի վերայ մեր։

Զգործս ձեռաց մերոց
ուղիղ արա ՚ի մեզ տէր.
և զգործս ձեռաց մերոց
յաջողեա՛ մեզ։ Փառք Հօր
և Որդւոյ և Հոգւոյն
սրբոյ. այժմ և միշտ և
յաւիտեանս յաւիտենից
Ամէն։

Եւ ևս խաղաղուն զտէր
աղաչեսցուք ընկա՛լ կեցո՛
և ողորմեա՛։

Օրհնութիւն և փառք
Հօր։

## Օրհնութիւն երից մանկանցն Դանիէլի։

Օրհնեալ ես տէր Ած հարցն մերոց. օրհնեալ փառաւորեալ անուն քո յաւիտեան։ Յիրաւունս անցուցեր զայս ամենայն ընդ մեզ. արդար ես դու տէր. և ամենայն գործք քո ճշմարիտ են։

Ճանապարհք քո ուղիղ են. և ամ դատաստանք քո արդար են։

Դատաստան արդարութե ածեր 'ի վերայ մեր ըստ

ա̃մի. և զոր ինչ ածեր
'ի վերայ մեր և քաղա.
քի սրբոյ հարցն մերոյ
երուսաղէմի :

Արդարութ̃ և յիրաւի ա.
ծեր զայս ամենայն 'ի վր̃
մեր վասն մեղաց մերոց:
Անօրինեցաք և յանցեաք
ապստամբ լինել 'ի քէն̃
մեղաք յա̃մի՝ և պատուի.
րանաց քոց մեք ոչ ան.
սացաք :

Ո՛չ պահեցաք և ոչ ա.
րարաք՝ որպէս պատուի.
րեցեր դու մեզ. զի զբա.
րիս գտցուք մեք 'ի քէն:

Արդ զմ̃ զոր տարաքեր,
և զոր ի՛նչ ածեր 'ի վր̃
մեր, արդար դատաստա-
նաւ արարեր :
Մատնեցեր զմեզ 'ի ձեռս
թշնամեաց մերոց · անօ-
րինաց՝ խստաց՝ և ապս-
տամբողաց :
'Ի ձեռս թագաւորի ա-
նօրինի և չարի քան զա̃մ
երկիր մատնեցեր զմեզ :
Եւ արդ ո՛չ գոյ մեզ
ժամ բանալ զբերանս
մեր · զի յամօթ և նա-
խատինք եղաք ծառայից
քոց և պաշտօնէից :

Այլ մի՛ մատներ զմեզ իսպառ վասն անուան քո. և մի՛ ՚ի բացեայ առներ զողորմութիւնս քո ՚ի մէնջ: Վասն Աբրահամու սիրելւոյ քո. Իսահակայ ծառայի քո. և Իսրայէլի սրբոյ քո: Խոստացար նոցա և ասացեր՝ բազմացուցից զզաւակ ձեր որպէս զաստեղս երկնից բազմութեամբ. և որպէս զաւազ առ եզր ծովու:

Եւ արդ՝ տէր նուաղեցաք մեք քան զամենայն ազգս. և եմք տառա-

պխտալք յամենայն երկրի
այսօր վասն մեղաց մերոց։
Ո՛չ գոյ 'ի ժամանակի
յայսմիկ իշխան. մարգա-
րէ, և առաջնորդ. ոչ ող-
ջակէզք պատարագաց. և
ոչ խունկք օրհնաց. և ոչ
տեղի պատարագս մատու-
ցանելոյ առաջի քո և ո-
ղորմութիւն գտանել 'ի
քէն ։

Այլ անձամբք խոնար-
հեալք և հոգւովք տա-
ռապանաց՝ ընդունելի լի-
ցուք մեք որպէս ողջա-
կէզս խոյոց և զուարա-

կաց. և որպէս բիւրա-
ւորս գառանց պարար-
տաց:

Այնպէս ընդունելի լի-
ցին պատարագք մեր այ-
սօր առաջի քո. զի կատա-
րեալ գտցուք զկնի քո.
և չիք յամօթ յուսա-
ցելոց 'ի քեզ:

Եւ արդ գամք զհետ քո
ամենայն սրտիւք մերովք.
երկնչիմք 'ի քէն և խնդ-
րեմք զերեսս քո տէր մի
յամօթ առներ զմեզ:

Այլ արա առ. մեզ ըստ
հեզութեան քում. և ըստ

բազում ողորմութեան
քում․ փրկեա զմեզ վս̃
սքանչելեաց քոց տր̃․ և
փառաւորեսցի անուն քո
յաւիտեան ։

Յամօթ լիցին ամենե-
քեան, որք չարչարեն զծա-
ռայս քո․ ամաչեցեալ լի-
ցին բռնութ̃ք նոցա․ և
ամ̃ զօրութիւնք նոցա
խորտակեսցին․ Եւ ծա-
նիցեն, զի դու ես տր̃ ած̃
միայն՝ որ փառաւորեալդ
ես ՚ի վերայ ամենայն տիե-
զերաց ։

Օրհնեալ ես դու Տր̃ Ած̃

հարցն մերոց· գովեալ և
առաւելբարձրացեալյա-
ւիտեան:

Եւ օրհնեալ է անուն
սուրբ փառաց քոց· գո-
վեալ և առաւել բարձ-
րացեալ յաւիտեան:

Օրհնեալ ես 'ի տաճա-
րի փառաց սրբութեան
քո· գովեալ:

Օրհնեալ ես որ նստիս
'ի քերոբէս՝ և հայիս յան-
դունդս· գով:

Օրհնեալ ես 'ի վերայ
հաստատութեան երկնից·
գովեալ և:

Օրհնեցէք ամ̃ գործք տեառն զտէր. օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան։

Օրհնեցէք երկինք զՏր̃. օրհնեցէք։

Օրհնեցէք հրեշտակք տն̃՝ և ջուրք՝ որ 'ի վերոյ երկնից զտէր. օրհ։

Օրհնեցէք զօրութիւնք տն̃՝ արեգակն և լուսին զտէր. օրհնեցէք։

Օրհնեցէք աստեղք երկ-նից՝ անձրևք և ցօղք զտէր. օրհնեցէք։

Օրհնեցէք ամ̃ հողմք՝ հուր և ջեր զտէր. օրհ։

Օրհնեցէք ցուրտ և
տօթ՝ ցօղ և ձիւնաբեր
զՏէր. օրհնեցէք։
Օրհնեցէք սառն և
պարզ՝ եղեամն և ձիւն
զՏէր. օրհնեցէք։
Օրհնեցէք տիւք և գի-
շերք՝ լոյսք և խաւարք
զՏէր. օրհնեցէք։
Օրհնեցէք ամպք և փայ-
լատակունք և երկիր զՏէր.
օրհնեցէք։
Օրհնեցէք լերինք բլ-
լուրք՝ և ամենայն բոյսք
երկրի զՏէր. օրհնեցէք։
Օրհնեցէք աղբիւրք՝
ծովք և գետք զՏէր. օրհ-

Օրհնեցէք կէտք և ամ
կայտառք որք 'ի ջուրս՝
և թռչունք երկնից զտր․
օրհնեցէք ։

Օրհնեցէք գազանք և ա-
նասունք՝ և որդիք մարդ-
կան զտէր օրհնեցէք։

Օրհնեսցէ իսրայէլ զտր՝
օրհնեսցէ և բարձր ա-
րասցէ զնա յաւիտեան ։

Օրհնեցէք քահանայք
զտէր․ օրհ ։

Օրհնեցէք ծառայք տն
զտէր․ օրհ ։

Օրհնեցէք անձինք և
շունչք արդարոց զտր։

Օրհնեցէք սուրբք և խո.
նարհք սրտիւք զտէր։
Օրհնեցէք անանիա՛ ա.
զարիա՛ և միսայէլ զտ̃ր։
Փառք Հօր և Որդւոյ։

Քարոզ։

Եկեալքս ամենեքեան 'ի
սուրբ կաթողիկէ և ա.
ռաքելական եկեղեցի՛ ա.
ղաչեսցուք զմիածին որ.
դին Աստուծոյ. զտէրն մեր
և զփրկիչն Յս̃ Քս̃։ Որ
էջ փառօք Հօր 'ի մէջ
հնոցին, և փրկեաց զերիս
մանկունսն 'ի քաղդէաց.
ւոց անտի։

Լուսաւոր և սուրբ պահ
եսցէ զմիտս մեր, զի մի
երբէք խաբիցուք մեք ՚ի
մեղաց, և ՚ի յանկութե-
նէ աշխարհի։ Այլ ար-
ժանի եղիցուք պահել
զպատուիրանս նորա. առ-
նուլ զպսակն լուսոյ և
կենաց ՚ի յանձինս մեր ։
Զոր խոստացաւ սիրե-
լեաց իւրոց Ճշմարիտն
Ա̅ծ Յ̅ս Ք̅ս տէր մեր.
կեցո՛ և ողորմեա՛ ։

Աղօթք հիւրաչէնց եւ այլ
տէրունական տօնից։

Ո՜վ որ՝ յաղթող. սքանչելագործ, սուրբ մեծի Յարութեանն. հաս Յայտնութեան. հաս Ս. յլակերպութեանն Քրի Ս.ն մերոյ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Աղօթք տարաժամուց։

Յօղեա՛մ Տէր զցօղ բարերար ողորմութեան քո

'ի մեղուցեալ անձինս մեր. շիջո՛ զբոց հնոցի յանցանաց մերոց. և փրկեա՛ զմեզ 'ի յաւիտենական հրոյն:

Արա՛ արժանի ընդ երիս սուրբ մանկունսն՝ և ընդ երանելի սուրբ վկայսն՝ օրհնել զքեզ և գովել. և քեզ գոհութիւն և զփառս մատուցանել Հօր, և Որդւոյ, և Հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս:

## Աղօթք պահոց:

Ցօղեա՛ Տէր զցօղ բարերար ողորմութեան քո 'ի մեղուցեալ անձինս մեր. շիջո՛ զբոց հնոցի յանցանաց մերոց. և փրկեա՛ զմեզ 'ի յաւիտենական հրոյն :

Արա՛ արժանի ընդ երիս սուրբ մանկունսն, և ը՛ երանելի սուրբ վկայսն՝ օրհնել զքեզ՝ գովել և ասել. Ա՛ծ քաւեա՛ զիս զմեղաւորս : Ա՛ծ քաւեա՛ զիս զմեղաւորս: Ա՛ծ քաւեա՛ զիս զմեղաւորս 'ի մեղաց, և կեցո՛ :

# Օրհնութիւն Մարիամու Աստուածածնին:

Մեծացուսցէ անձն իմ զՏէր. և ցնծասցէ հոգի իմ աստուծով փրկչաւ իմով:

Այց արար 'ի վերայ խոնարհութեան աղախնոյ իւրոյ. այսուհետև երանիցեն ինձ ամենայն ազգք: Արար ընդ իս մեծամեծս հզօրն. և սուրբ է անուն նորա:

Ողորմութիւն արար ազգաց յազգս երկիւղածաց

իւրոյ • և արար զզօրութիւն
բազկաւ իւրով :

Ցրուեաց զամբարտաւանս 'ի մտաց սրտից • և քակեաց զհզօրս յաթոռոց :

Զխոնարհս բարձրացոյց՝ զկարօտս ելից բարութբ• և զմեծատունս արձակեաց ունայնս :

Պաշտպանեաց իսրայէլի ծառայի իւրում • յիշելով զողորմութիւն իւր :

Որպէս խօսեցաւ առ հարսըն մեր • ընդ աբրահամու՝ և զաւակի նորա յաւիտեան :

## Օրհնութիւն Զաքարիայի՝ հօրն յովհաննու Մկրտչի։

Օրհնեալ տէր Ա՟Ծ իսրայէլի՝ որ յայց եկ, եւ արար փրկութիւն ժողովրդեան իւրոյ ։
Յարոյց մեզ եղջիւր փրկութեան 'ի տանէ դաւթի ծառայի իւրոյ . որ պէս խօսեցաւ բերանօք սրբոցն՝ որք յաւիտենից մարգարէքն էին ։
Փրկութիւն 'ի թշնամեաց մերոց. եւ 'ի ձեռաց ամենայն ատելեաց մերոց ։
Առնել ողորմութիւն առ հար-

սրն մեր. և յիշել զկտա-
կարանս սրբութեն իւրոյ։
Զերդումն՝ զոր երդուաւ
աբրահամու հօր մերոյ.
տալ մեզ առանց երկիւ-
ղի զփրկութիւն 'ի թշնա-
մեաց մերոց։
Պաշտել զնա սրբութբ
և արդարութեամբ առա-
ջի նորա զամենայն աւուրս
կենաց մերոց։
Եւ դու մանուկ մարգա-
րէ բարձրելոյն կոչեսջիր.
գնասցես առաջի տեառն
պատրաստել զճանապար-
հըս նորա։

Տուր զգիտութիւն փրկութեան ժողովրդեան իւրոյ 'ի թողութիւն ամենայն մեղաց մերոց ։

Վասն գթոյ ողորմութե̃ տեառն Ա̃յ մերոյ, որով երևեցաւ մեզ արեգակն 'ի բարձանց. լուսաւոր առնել զխաւար մեր ։

Ծագել զլոյս 'ի վերայ այսոցիկ՝ որք նստէաք 'ի խաւարի և 'ի ստուերս մահու. ուղղել զոտս մեր 'ի ճանապարհս խաղաղութեան ։

Աղօթք Ծերունւոյն Սիմէոնի:

Արդ՝ արձակեա զծառայս քո տէր ըստ բանի քում 'ի խաղաղութիւն. զի տեսին աչք իմ զփրկութիւն քո՝ զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց:

Լոյս յայտնեաց հեթանոսաց. և փառք ժողովրդեան քում Իսրայէլի: Փառք Հ՟օր և:

Քարոզ:

Սուրբ զԱ՟ծածինն՝ և զամենայն սուրբս բարե-

խօս արասցուք առ Հայր ՚ի յերկինս. զի կամե-ցեալ ողորմեսցի՝ և գթա-ցեալ կեցուսցէ զարա-րածս իւր. ամենակալ Տէր Աստուած մեր կեցո՛ և ողորմեա՛:

## Աղօթք:

Ընկա՛լ Տէր զաղաչանս մեր բարեխօսութեամբ սուրբ աստուածածնին անարատ ծնողի միածնի որդւոյ քո. և աղաչանօք ամենայն սրբոց քոց. և որոց այսօ՛ր է յիշատակ: Լո՛ւր մեզ Տէր, և ողոր-

մեա՛. ներեա՛ քաւեա՛ և թո՛ղ զմեղս մեր: Արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ և ընդ սբյ Հոգւոյդ: Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն:

Քարոզ զկնի Մեծացուցէին:

Եւ ևս խաղաղութեան զՏր:

Վասն սուրբ տեղւոյս շինութեան, և բարեկարգութե. զՏէր աղաչեսցուք:

Վասն ժողովրդեանս՝ որք մտանեն ընդ դրունս սբյ

եկեղեցւոյ. զտէր աղա-
չեսցուք ։
Վասն ընդունելոյ զպա-
ղատանս սոցա ըստ մեծի
ողորմութեան իւրում .
զտէր աղաչեսցուք ։
Վասն հոգւոյն ։
Եւ ևս միաբան ։
Զանձինս ։ Ողորմեայ ։

## Մաղթանք ։

Դու ես թագաւոր յա-
ւիտեանս յաւիտենից Ք͞ս
Ա͞Ծ մեր ։ Եւ քեզ ընդ-
հօր, և հոգւոյդ սրբոյ
վայելէ փառք՝ իշխանու-

լթիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն.

## Նորք երգեցէք Ալէլուա-րանին:

Եղիցի անուն Տեառն օրհնեալ ՚ի յայսմհետէ մինչև ՚ի յաւիտեան: Օրհնեցէք մանկունք զՏէր և օրհնեցէք զանուն Տն: Եղիցի անուն Տեառն օրհնեալ յայսմհետէ մինչև ՚ի յաւիտեան: Ցարևելից մինչ ՚ի մուտս արևու օրհնեալ է անուն

տեառն. ՚ի յայսմհետէ մինչև ՚ի յաւիտեան։

Փառք և երկրպագութիւն Հօր՝ և Որդւոյ, և սուրբ Հոգւոյն. և այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։ ՚ի յայսմհետէ մինչև ՚ի յաւիտեան։

Արի տէր օգնեա մեզ. և փրկեա զմեզ վասն անուան քո։

Արի և մի մերժեր զմեզ իսպառ վասն անուան քո։

Թագաւորեսցէ Տէր յաւիտեան. Ած քո սիոն յազգէ յազգ։

Օրհնեա՛ անձն իմ զՏէր· օրհնեցից զՏէր 'ի կենդանութեան իմոյ: Օրթի:

## Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի:

Եւ յերեկոյի շաբաթուն յորում լուսանայր միաշաբաթին. եկն Մարիամ Մագդաղենացի, և ևս Մարիամն տեսանել զգերեզմանն: Եւ ահա շարժումն մեծ եղև. զի հրեշտակ տեառն իջեալ յերկնից՝ մատուցեալ 'ի բաց

թաւալեցոյց զվէմն 'ի դրանց անտի. և նստէր 'ի վերայ նորա: Եւ էր տեսիլ նորա իբրև զփայլակն. և հանդերձ նորա սպիտակ իբրև զձիւն: Եւ յահէ անտի նորա խռովեցան 'պահապանքն. և եղեն իբրև զմեռեալս: Պատասխանի ետ հրեշտակն և ասէ ցկանայսն. մի երկնչիք դուք. գիտեմ, զի զՅիսուս զխաչելեալն խնդրէք. չէ աստ. քանզի յարեաւ որպէս ասացն. եկայք և տեսէք

զտեղին՝ ուր կայր: Եւ
վաղվաղակի երթա՛յք ա-
սացէք աշակերտացն նո-
րա թէ յարեաւ՝ և ահա՛
յառաջանայ քան զձեզ 'ի
գալիլեայ. անդ տեսա-
նիցէք զնա. ահա՛ ասացի
ձեզ: Եւ ելեալ վաղվա-
ղակի 'ի գերեզմանէ ան-
տի ահիւ և խնդութբ
բազմաւ, ընթանային
պատմել աշակերտացն:
Եւ ահա՛ պատահեաց
նոցա Յս և ասէ՝ ողջ
էք: Եւ նոքա մատու-
ցեալ կալան զոտս նորա՝

և երկիրպագին նմա: Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս, մի՛ երկնչիք՝ երթայք ասացէք եղբարցն իմոց՝ զի երթիցեն ՚ի գալիլեա. և անդ տեսցեն զիս: Իբրև նք գնացին, ահա՛ ոմանք ՚ի զօրականացն եկին ՚ի քաղաքն՝ և պատմեցին քահանայապետացն զամենայն որ ինչ եղև: Եւ նոքա ժողովեալ հանդերձ ծերօքն, խորհուրդ առեալ՝ արծաթ յոյժ ետուն զօրականացն, և ասեն.

ասասջի՛ք՝ եթէ աշա-
կերտքն նորա եկեալ գի-
շերի, գողացան զնա՝ մինչ
մեք 'ի քուն էաք։ Եւ
եթէ լո՛ւր լիցի այդ առ
դատաւորն, մեք հաւանե-
ցուք զնա՝ եւ զձեզ ան-
հոգս արասցուք։ Եւ նո-
ցա առեալ զարծաթն՝
արարին որպէս ուսանն։
Եւ ել համբաւս այս 'ի
Հրէից մինչեւ ցայսօր։
Իսկ մետասան աշակերտքն
գնացին 'ի գալիլեայ, 'ի
լեառն. ուր ժամադիր
եղեւ նոցա Յս։ Իբրեւ

տեսին զնա՝ երկիրպագին նմա. եւ ոմանք երկուացան։ Եւ մատուցեալ Յս խօսեցաւ ընդ նոսա եւ ասէ. տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս եւ յերկրի։ Որպէս առաքեաց զիս Հայր, եւ ես առաքեմ զձեզ. Գնացէք այսուհետեւ՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս. մկրտեցէք զնոսա յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ։ Ուսուցէք նոցա պահել զամենայն զոր ինչ պատուիրեցի ձեզ։

Եւ ահաւասիկ ես ընդ
ձեզ եմ զամենայն աւուրս
մինչև ՚ի կատարած աշ-
խարհի:

Փառք քեզ Տէր Աս-
տուած մեր:

Երգ ղինէ Աւետարանին:

Փառք յարութեան քո
տէր. ո՛չ դադարեցայց
Քրիստոս օրհնել զքեզ
զամենայն աւուրս կենդա-
նութեան իմոյ:

Փառք յարութեան քո
տէր. ո՛չ դադարեցայց Ցն
ւովել զքեզ զամենայն

աւուրս կենդանութ՟ իմոյ։
Ես ո՛չ դադարեցայց փր-
կի՛չ փառաւորել զքեզ
զամենայն աւուրս կենդա-
նութեան իմոյ։
՚Ի գիշերի համբարձէք
զձեռս ձեր ՚ի սրբութի՟.
և օրհնեցէք զտէր։
Աստ օրհնեցէք ամենայն
ծառայք տեառն զտէր ՚ի
սրբութիւն. և օրհնեցէք
զտէր։

**Քարոզ զկնի Իւղաբերից Աւետարանին, և երգոյն։**

Զուարճացեալքս մե-

ծաւ ուրախութեամբ ա-
ւետեօք յարութեան տ՟ն
մերոյ և փրկչին Յ՟սի Ք՟սի:
Որ եղև պտուղ և անդ-
րանիկ ամենայն ննջեցե-
լոց․ խորտակեաց զդրունս
դժոխոց․ և ելոյծ զբռ-
նութիւն մահու: Եւ ետ
յոյս հաստատութեան՝
վերստին նորոգման կեն-
դանութեան ա՟մ մարդ-
կան: Խնդրեսցուք հա-
ւատով 'ի փրկչէն մերմէ
Յ՟սէ Ք՟սէ՝ զի զմեզ ար-
ժանի արասցէ յարութե՟
իւրոյ: Կերպարանակից առ

նել զմարմին խոնարհու-
թեան մերոյ ըստ նմա-
նութեան մարմնոյ փա-
ռաց իւրոյ: Վասն զի
վայս խոստացաւ՝ զմեծ և
զանճառելի շնորհս պար-
գևել սիրելեաց իւրոց
Ճշմարիտն Ած Յս Քս
տէր մեր. կեցո և ողոր-
մեա:

Աղօթք:

Ամենակեցոյց՝ Ճշմարիտ՝
սուրբ մեծի յարութեան
Քո Ած մերոյ վայելէ
փառք իշխանութիւն և
պատիւ:

Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քում. ըստ բազում գթութեան քում քաւեա զանօրէնութիւնս իմ ։

Առաւել լուա զիս յանօրէնութենէ իմմէ. և 'ի մեղաց իմոց սուրբ արա զիս ։

Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ. և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ ։

Քեզ միայն մեղայ տէր. և զչար առաջի քո արարի ։

Որպէս արդար եղիցիս 'ի բանս քո. և յաղթեսցես 'ի դատել քո ։ Անօրէնութեամբ յղացայ. և 'ի մեղս ծնաւ զիս մայր իմ ։ Դու տէր՝ զճշմարտութիւն սիրեցեր. զանյայտս և զծածկեալս՝ իմաստութեան քոյ յայտնեցեր ինձ ։ Ցօղեսցես զիս մշտկաւ, և սուրբ եղէց. լուասցես և քան զձիւն սպիտակ եղէց ։ Լսելի՛ արա ինձ տէր զցնծութիւն և զուրախութիւն. և ցնծասցեն

ոսկերք իմ տառապեալք։

Դարձո՛ զերեսս քո ՚ի մեղաց իմոց. եւ զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա՛ յինէն։

Սիրտ սուրբ հաստատեա՛ յիս Ա՜Ծ. եւ զհոգի ուղիղ նորոգեա՛ ՚ի փորի իմում։

Մի՛ ընկենուր զիս յերեսաց քոց. եւ զհոգի քո սուրբ մի՛ հաներ յինէն։

Տո՛ւր ինձ ցնծութիւն փրկութեան. եւ հոգւով պետութեան քո հաստատեա՛ զիս։

Ուսուցից անօրինաց ըզ-
ճանապարհս քո. և ամ-
բարիշտք առ. քեզ դարձ-
ցին։
Փրկեա՛ զիս յարենէ Ա՛ծ՝
Ա՛ծ փրկութեան իմոյ.
ցնծասցէ լեզու իմ յար-
դարութեան քում։ Տէ՛ր՝
եթէ զշրթունս իմ բա-
նաս, բերան իմ երգես-
ցէ զօրհնութիւնս քո։
Թ՛է կամեցեալ էիր, պա-
տարագս մատուցանէաք.
բայց դու ընդ ողջակէզս
իսկ ոչ հաճեցար։
Պատարագ Ա՛յ հոգի խո-

նարհ. զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ՝ Ա՟ծ ոչ արհամարհէ:

Բարի արա տէր կամօք քովք սիոնի. և շինեսցին պարիսպքն երուսաղեմի: Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութ՟. ուխտից պատարագս հանցեն 'ի սեղան քո զուարակս:

Քարոզ:

Երկրպագեմք քեզ տէր Ա՟ծ մեր անցեալքս ընդ երկարութիւն գիշերիս՝ և

կանխեալքս 'ի տեղւոջ
խոստովանութեան, մա-
տուցանեմք զառաւօտու
աղօթս մեր։ Զքեզ որ
օրհնեմք և փառաւորեմք.
և զքեզ տէր գոհանամք.
որ արժանի արարեր զգի-
շերս խաղաղութ՟բ անցու-
ցանել, և հասանել 'ի
ժամ առաւօտուս։ Արժա-
նաւորեա զմեզ տէր ան-
ճառ խոստմանց քոց. զոր
խոստացար սիրելեաց քոց
ճշմարիտ Ա՟ծ Յ՟ս Ք՟ս
տէր մեր. կեցո՛ և ողոր-
մեա։ Ողորմեա՛յ մեզ տէր

Ած մեր ըստ մեծի ողորմութեան քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ. Տր ողորմեա։

## Մաղթանք յարութեան։

Ողորմած՝ գթած՝ Ճըշմարիտ՝ սուրբ մեծի յարութեան Քսի Այ մերոյ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

## Մաղթանք Պահոց։

Ողորմութբ և գթութբ

քոյ, լոյս մեզ տուր և ողորմեա՛. ներեա՛ քաւեա՛ և թո՛ղ զմեղս մեր։ Արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

## Մաղթանք Մարտիրոսաց։

Բարեխօսութեամբ և աղօթիւք սրբոց մարտիրոսացն որոց այսօր է յիշատակ և ամենայն սրբոց քոց՝ լոյս մեզ տուր և ողորմեա՛. ներեա՛ քաւեա՛

և թող զմեղս մեր։ Ար-ժանաւորս զոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ սուրբ Հոգ-ւոյդ։

Ալէլուիա. Ալէլուիա։

Օրհնեցէք զտէր յերկ-նից. օրհնեցէք զնա ՚ի բարձանց ։

Օրհնեցէք զնա ամենայն հրեշտակք նորա. օրհնե-ցէք զնա ամենայն զօրու-թիւնք նորա ։

Օրհնեցէք զնա արեգակն

և լուսին. օրհնեցէք զնա ամենայն աստեղք և լոյս: Օրհնեցէք զնա երկինք երկնից. և ջուրք՝ որ ՚ի վերոյ քան զերկինս օրհնեցէք զանուն տեառն: Զի նա ասաց և եղեն. հրամայեաց և հաստատեցան:

Կացոյց զնոսա յաւիտեանս յաւիտենից. սահման եդ և ոչ անցանեն:

Օրհնեցէք զտէր յերկրէ վիշապք, և ամենայն խորք: Հուր և կարկուտ՝ ձիւն և սառն՝ հողմ և

մրրիկ՝ որք առնեն զբանս
նորա։
Լերինք եւ ամենայն բլուր-
ձունք. ծառք պտղաբերք
եւ ամենայն մայրք։
Գազանք եւ ամենայն ա-
նասունք. սողունք եւ ա-
մենայն թռչունք թեւա-
ւորք։ Թագաւորք երկրի
եւ զօրք իւրեանց. իշխանք
եւ ամենայն դատաւորք
երկրի։
Երիտասարդք եւ կուսանք՝
ծերք եւ տղայք՝ օրհնեցէք
զանուն Տեառն։
Բարձրացաւ անուն նորա

միայն. խոստովանութիւն
նմա յերկինս և յերկրի:
Բարձր առնէ տէր զեղ-
ջիւր ժողովրդեան իւրոյ.
օրհնութիւն նմա յամե-
նայն սրբոյ նորա յորդ-
ւոյն իսրայէլի. ժողո-
վրդն՝ որ մերձ է առ մ՟ր:
Օրհնեսցէք զտէր յօրհ-
նութիւն նոր. օրհնու-
թիւն նմա յեկեղեցիս
սրբոց:
Ուրախ լիցի իսրայէլ յա-
րարիչ իւր. որդիք սիո-
նի ցնծասցեն ՚ի թագա-
ւորն իւրեանց:

Զանուն նորին օրհնե-
լով սաղմոսիւք և օրհ-
նութեամբ, սաղմոս եր-
գեսցեն նմա ։

Հաճի տէր ընդ ժողո-
վուրդս իւր սուրբ. և բար
ձըր առնէ զհեզս ՚ի փըր-
կութեան ։

Պարծեսցին սուրբքն փա
ռօք. և ցնծասցեն ՚ի հան-
գիստ իւրեանց. և բարձր
արասցեն զԱ͞ծ բերանօք
իւրեանց ։

Սուր երկսայրի ետ ՚ի
ձեռս նոցա, առնուլ ըղ։
հատուցումն ՚ի հեթա-

նոսաց․ 'ի յանդիմանու-
թիւն ամենայն ժողովր-
դոց ։

'ի կապել զթագաւորս
նոցա կապանօք․ և զզօրա-
վարս նոցա ձեռնակապօք
երկաթեօք ։

Առնել նոցա դատաստան
ըստ գրոց․ և փառք այս
են ամենայն սրբոց նորա։

Օրհնեցէք զած 'ի սրբու-
թեան նորա․ օրհնեցէք
զնա 'ի հաստատութեան
զօրութեան նորա ։

Օրհնեցէք զնա 'ի զօ-
րութեան նորա․ օրհնե-

ցէք զնա ՚ի բազում մեծութեան նորա ։

Օրհնեցէք զնա ՚ի ձայն օրհնութեան․ օրհնեցէք զնա սաղմոսիւք և օրհնութեամբ ։

Օրհնեցէք զնա ցնծութեամբ․ գովեցէք զնա ուրախութեամբ ։

Օրհնեցէք զնա ՚ի բանս քաղցր․ գովեցէք զնա ՚ի բարբառ լսելիս ։

Օրհնեցէք զնա ՚ի ձայն գոհութեան․ ամենայն հոգիք օրհնեցէք զտէր ։ Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ այժմ․

Շարական Յարութե. ա̅ձ:

Ընդ լուսանալ միաշաբաթին կանխեցին կանայքն 'ի գերեզմանն. 'ի խնկել զանապական մարմինն ։

Եւ գտին զվէմն բարձեալ 'ի դրանց գերեզմանին. և լուեալ բարբառ 'ի հրեշտակէն եթէ յարեաւ Ք̅ս̅ և խափանեաց զմահ ։

Եւ հանդիպեալ քոյ տէր առաքելոցն և տուեալ ողջոյն կենդանարար. ա-

ռաքեցեր զնոսա ՚ի փըր-
կութիւն տիեզերաց ։

## Շարական Մարտիրոսաց ։

ա̃ձ ։

Ժողովեալքս ՚ի յիշա-
տակս սրբոց մարտիրո-
սացն· միաբանութեամբ
երգելով · օրհնութիւն
՚ի բարձունս երկնաւոր
թագաւորին ։
Քանզի հեղմամբ արեան
սոցա պարտեցաւ թշնա-
մին· և մեծարեալ պար-
ծի սիոն երգելով · օրհ-
նութիւն ՚ի բարձունս

երկնաւոր Թագաւորին ։
Դասակցելոցն ը̃ զօրս վե-
րին զուարթնոցն․ Քիշա-
տակաւ բերկրեալ 'ի սըր-
բուն սոցա երգեսցուք․
օրհնուն 'ի բարձունս երկ
նաւոր Թագաւորին ։

## Շարական պահոց։ ճձ ։

Տէր որ 'ի վերայ քե-
րովբէից փառաբանիս․
քաղցրութեամբ խոնար-
հեալ ընկալ զաղաչանս
մեր ։
Տէր որ շնորհեցեր ողոր-
մութիւն ազգի մարդ-

կան • քաղցրութեամբ
խոնարհեալ ընկալ զա-
ղաչանս մեր ։

Տէր որ ուսուցեր մեզ
յամենայն ժամ փառս
տալ անուանդ քում
սրբոյ • քաղցրութեամբ
խոնարհեալ ընկալ զա-
ղաչանս մեր ։

—❖✠❖—

## Երգ շնչն Փր երկնիցն։

Փառք 'ի բարձունս Ա՟յ. և յերկիր խաղաղութի՟ւն, 'ի մարդիկ հաճութիւն։ Եւ օրհնութիւն քեզ 'ի բարձունս. օրհնեալ ես տէր Ա՟ծ մեր. օրհնեմք զքեզ. և գովեմք զքեզ։ խոստովանիմք տէր զքեզ. և երկիրպագանեմք քեզ. փառաւորեմք զքեզ. գոհանամք տէր զքէն վասն մեծի փառաց քոց։ Տէր թագաւոր սուրբ երկնային՝ Ա՟ծ և հայր ամե-

նակալ։ Տէր և որդի հօր
միածին Յ͞ս Ք͞ս և սուրբ
որդի. տէր Ա͞ծ գառն Ա͞յ
և որդի հօր. որ առեր
զմերս 'ի կուսէն. ողոր-
մեցար. բարձեր զմեղս աշ-
խարհի։ Եւ արդ ընկալ
զաղաչանս մեր. սուրբդ
որ նստիս ընդաջմէ հօր՝
ողորմեա՛ց մեզ։ Զի դու
միայն ս͞բ՝ դու միայն բարձ-
րեալ ես, դու միայն տէր
մեր Յ͞ս Ք͞ս։ Տէր և
հոգիդ սուրբ. որ 'ի փառս
Ա͞ծ ընդ հօր. ամէն։
Եւ յամենայն ժամ օրհ-

նեմք զքեզ. Տէր և գո-
վեմք զանուն սուրբ քո՝
յաւիտեան և յաւիտեա-
նըս յաւիտենից :

Արժանի արա՛ Տէր զօրս
զայս խաղաղութեամբ. և
առանց մեղաց պահեա՛
զմեզ: Օրհնեալ ես Տէր
Ած հարցն մերոց. գո-
վեալ և փառաւորեալ է
անուն սուրբ քո յաւի-
տեանս ամէն: Օրհնեալ
Տէր ուսո՛ ինձ զարդարու-
թիւնս քո. օրհնեալ
Տէր ուսո՛ ինձ զարդա-
րութիւնս քո. օրհնեալ

տէր ուսո՛ ինձ զարդա-
րութիւնս քո։ Տէր ապա-
ւէն եղեր մեր յազգէ
յազգ։ Ես աղաչե՛մ տէր
ողորմեա՛ ինձ. և բժշկեա՛
զանձն իմ. ես մեղայ քեզ։
Ցո՛յց մեզ տէր. զողոր-
մութիւնս քո. և զփրկու-
թիւնս քո տո՛ւր մեզ։
Տէր ողորմութիւն քո
յաւիտեան. զգործս ձե-
ռաց քոց մի՛ անտես առ-
ներ։ Տէր իմ զքեզ ա-
պաւէն ինձ արարի. ուսո՛
ինձ առնել զկամս քո, զի
դու ես Ած իմ։

՚ի քէնէ տէր աղբիւր կենդանութեան. և լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս: Ծածկեա՛ զողորմութիւնս քո, որք ճանաչեն զքեզ տէր :

Աղօթք :

Փառք պատիւ, և երկրպագութիւն ՚ի բարձունս Հօր և Որդւոյ, և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն :

## Երգ Յարութեան։

Զյարութիւն զփրկչին օրհնեսցուք. զփրկչին մերոյ օրհնեսցուք զյարութիւն։

Յարեաւ Քս. և ցրուեցան թշնամիք նորա։

## Երգ Մարգարէութեան։

Պարծեսցին սուրբքն փառօք. և ցնծասցեն ՚ի հանգիստ իւրեանց։

Օրհնեցէք զտէր յօրհնութիւն նոր. օրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոց։

## Երգ պահոց ։

Լո՛յս տուր տէր աչաց իմոց. զի մի՛ երբէք ննջեսցիմ 'ի մահ ։ Մի՛ ասասցէ թշնամին, թէ յաղթեցի նմա. կամ նեղիչք իմ ցնծասցեն, թէ ես սասանեցայց ։

## Քարոզ Պահոց։

Փառաւորեսցուք զամենակալն Ա՟ծ զհայր տ՟ն մերոյ Յ՟սի Ք՟սի. գոհանալով զնմանէ, որ պահեաց զմեզ խաղաղութ՟բ. 'ի գիշերիս յայսմիկ։

Ու առաջնորդեաց մեզ 'ի խաւարէ 'ի լոյս 'ի մահուանէ 'ի կեանս, յապականութենէ յանապականութիւն. յանգիտութենէ 'ի գիտութիւն Ճշմարտութեան իւրոյ: Աղաչեսցուք և խնդրեսցուք 'ի նմանէ, զի զերկարութիւն տունջեանս խաղաղութեամբ, և ամենայն մտադիւր զուարթութեամբ արասցէ անցուցանել 'ի մէնջ. և պարսպեալ պահեսցէ ըզժողովուրդս իւր Աստա-

յին զօրութն, որ 'ի վերայ ամի բարեբարութեամբն իւրով իշխանութիւն ունի։ Ս. մենակալ տէր Ա͞Ծ մեր, կեցո և ող ։

Զառաւօտս լուսոյ և զառաջիկայ օրս խաղաղութե անցուցանել հաւատով 'ի մէնջ խնդրեսցուք։ Զհրեշտակ։ Զքաւութ և։ Զսրբոց։ Եւ ևս։ Զանձինս։ Ողորմեա։

Աղօթ։ .

Գոհանամք զքէն տէր Ա͞Ծ մեր, որ երևելի լուսով քով զուարճացու-

ցեր զամենայն արարածս
քո: Իսկ իմանալի լուսով
պատուիրանաց քոց զա-
մենեսեան լուսաւորեցեր
զհաւատացեալս 'ի քեզ:
Զօրացո՛ եւ զմեզ տէր
'ի պահպանութիւն պատ-
ուիրանաց քոց՝ 'ի տուն-
ջեանս յայսմիկ եւ յամե-
նայն ժամանակի: Որպէս
զի լուսաւորեալ մտօք՝
միշտ զհաճոյս քո արաս-
ցուք. եւ հանդերձեալ
բարեացդ հասցուք ընդ
ամենայն սուրբս քո:
Շնորհօք եւ մարդասի-

բութք տեառնդ մերոյ՝ և փրկչիդ Յս̃ի Քս̃ի. որում վայելէ փառք. իշխանութիւն և պատիւ ։ Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն։

Խաղաղութի̃ մեր և կեանք՝ որ 'ի հօրէ առաքեցար՝ միածին որդի Այ̃ տր̃ մեր և փրկիչ Յս̃ Քս̃։ Տուր մեզ զխաղաղութի̃ քո, զոր շնորհեցեր սրբոց քոց առաքելոցն, փչմամբ քո 'ի նս̃ զկենդանացուցիչ և

զամենազօր հոգւոյդ քո սբ-
ոյ զի և մեք խաղաղա-
ցեալք յամ աշխարհա-
կան սահեցմանց՝ լիցուք
տաճար և բնակարան
ածային շնորհացդ: Եւ
գոհանալով փառաւորես-
ցուք զքեզ ը հօր և սբ
հոգւոյդ Քս Ած մեր այժմ
և միշտ, և յաւիտեանս:

Եւ ասէ [illegible] ԱՋ:

Սուրբ Ած. սուրբ և
հզօր· սուրբ և անմահ, որ
յայտնեցար վասն մեր ո-
ղորմեա մեզ: Երիցս· կրկնէա՛:
Սուրբ Ած· և այլն, որ

խաչեցար վասն մեր՝ ողոր-
մեա մեզ։ Փառաւորեալ
և օրհնեալ միշտ սուրբ
կոյս Ածածին Մարիամ
մայր Քնի․ մատոյ զա-
ղաչանս մեր որդւոյ քո և
Այ մերոյ։

## Մաղթանք։

Փրկեա զմեզ 'ի փորձութէ․
և յամ վտանգից մերոց։

Եւ ևս խաղաղութե զոր ա-
ղաչեսցուք։

Վս լսելի լինելոյ տն Այ
ձայնի աղաչանաց մերոյ՝

բարեխօսութեամբ սբ աստուածածնին. և ի-ջանելոյ 'ի վերայ մեր ո-ղորմութեան և գթու-թեան տեառն Այ. ամե-նակալ. տէր Ած մեր կե-ցո և ողորմեա։

### Զայնաւոր Սաղմոս Կիւրա-կէից։

Եղիցի անուն Տն օրհ-նեալ. յայսմհետէ մին-չև յաւիտեան։

Օրհնեցէք մանկունք ըզ-տէր. և օրհնեցէք զանուն տեառն։

Եղիցի անուն Տն օրհ-
նեալ. յայսմհետէ մինչև
՚ի յաւիտեան ։
Յարևելից մինչ ՚ի մու-
տըս արևու՝ օրհնեալ է
անուն տեառն ։
Բարձր է ՚ի վերայ ամ
ազգաց տէր. և յերկինս
են փառք նորա ։
Ո՞վ է որպէս տէր Ած
մեր ՚ի բարձունս բնա-
կեալ. և զխոնարհս տե-
սանէ յերկինս և յերկրի։
Յարուցանէ զաղքատս
յերկրէ. և բարձր առնէ
զտառապեալս յաղբեաց։

Նստուցանէ զնոսա իշխանս՝ ընդ իշխանս ժողովրդեան իւրոյ։ Բնակեցուցանէ զամուլն ՚ի տան ուրախամիտ․ որպէս մայր որդւովք բերկրեալ ։

## Ալէլուիա Օրհնի։
## Սրբոյ Աւետարանին որ ըստ Մատթէոսի։ ։

Եւ ելեալ անտի Յ̅ի, գնաց ՚ի կողմանս տիւրոսի և սիդօնի ։ Եւ ահա կին մի քանանացի ՚ի սահմանաց անտի նոցա ե-

լեալ աղաղակէր և ասէր: Ողորմեա՛ց ինձ Տէր որդի դաւթի. դուստր իմ չարաչար այսահարի: Եւ նա ո՛չ ետ նմա պատասխանի: Եւ մատուցեալ աշակերտքն նորա աղաչէին զնա և ասէին. արձակեա՛ զնա՝ զի աղաղակէ զհետ մեր: Նա պատասխանի ետ և ասէ. ո՛չ ուրեք առաքեցայ՝ եթէ ո՛չ առ ոչխարս կորուսեալոտանն իսրայէլի: Եւ նա մատուցեալ երկիրպագանէր նմա և ասէր. Տէր օգ-

նեա ինձ : Պատասխանի ետ նմա և ասէ • ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց՝ և արկանել շանց : Եւ նա ասէ՝ այո Տէր • քանզի և շունք կերակրին 'ի փշրանաց անկելոց 'ի սեղանոյ տն իւրեանց : Յայնժամ պատասխանի ետ նմա Յս և ասէ • ո՜վ կին դու • մեծ են հաւատք քո : Եղիցի քեզ՝ որպէս և կամիս : Եւ բժշկեցաւ դուստր նորա 'ի նմին ժամու :

Երգ Ճառն առաջնոյ աւուր
Միաշաբաթին, և 'ի խոր-
հուրդ արարչութեան և յա-
րութեան Քի։

Նորաստեղծեալ բանն
յանէից 'ի սկզբանէ զեր-
կինս երկնից. և զերկնա-
յին զօրս անմարմնոց ի-
մանալեացն զուարթնոց.
և զգալի տարերց քառից՝
հակառակաց միաբանից.
որով յաւէտ փառաբանի՝
Երրորդութիւնն անճա-
ռելի։ Երեքսրբեան մի

տէրութիւն՝ միով. բնու.
թեամբ աստուածութի.
լոյսն որ անեղ արարչա.
կան՝ ասաց լինել լոյս ե.
ղական. զոր և ծագեաց
յօրն առաջին՝ միաշաբաթ
կիւրակէին. որով ։ Բա.
բունօրէն բացատրես.
ցուք՝ զծածկեալ խոր.
հուրդն ծանիցուք. զի
լոյսն անտես իմանալի՝
մաքուր հոգւոց տեսանե.
լի. 'ի սոյն ծագեաց միա.
շաբաթ՝ մեզ յարութե
սուրբ Ճառագայթ. ե.
կայք փրկեալք ընդ զօ.

ւարթնոյն տուրք օրհնու-
թիւն յարուցելոյն։
Սէրդ սիրով խոնարհե-
ցար՝ 'ի փրկութիւն մեր
մարմնացար. նովին մարմ
նովն խաչեցար՝ 'ի գե-
րեզման մահու եղար. այ-
սօր յարեար աստուա-
ծաբար 'ի հրեշտակաց
քարոզեցար. եկայք։
Երևեցար խնկաբերիցն՝
յողջոյն կենաց ուրախա-
լից. և 'ի լերինն գալի-
լեայ՝ առաքելոց մետասա-
նից. արժանացո՛ զմեզ ը̄
նոսին զքեզ տեսանել

յօրն վերջին. եկայք փրկ"։ Սիօնի որդիք զարդիք՝ հարսին լուսոյ տուք աւետիք. եթէ փեսայն քո յարուցեալ՝ յաղթեաց մահու իշխանութեամբ. գայ պսակէ զքեզ փառօք՝ եւ ընդ առաջ պճնեալ զարդուք. երգեա երգ նոր յարուցելոյն, ննջեցելոց կենաց պտղոյն։

Քարոզ.

Խնդրեսցուք հաւատով միաբանութբ ՚ի տնէ, զի զօրութեան զշնոր-

հըս իւր արասցէ 'ի վերայ
մեր. տէրն ամենակալն
կեցուսցէ և ողորմեսցի:
Կեցո տէր: Տէր ողորմեա.
Տէր ողորմեա. Տէր ողոր-
մեա:

## Աղօթք:

Քում ամենազօր և
հրաշալի յարութեանդ
Քո Ած մեր՝ երկիրպա-
գանեն զօրք հրեշտակաց.
զի դու միայն ունիս զան-
մահութիւն բնակեալդ
'ի լոյս անմատոյց: Եւ
մեք հողեղէն արարածքս

խոնարհեալ երկիւղիւ երկրպագանեմք. զսուրբ և պչրաշալի և զյաղթող յարութիւնդ քո օրհնեմք և փառաւորեմք։ Եւ ընդ երկնային զօրսն մատուցանեմք զօրհնութի և զփառս ընդ Հօր և Ս̅ Սրբոյ Հոգւոյդ այժմ"։

Օրհնեալ Տէր մեր Յ̅ի Ք̅ս ・ ամէն։

Հայր մեր որ յերկինս ես"։

Իսկ յայլ աւուրս յետ ս̅ր̅ ա̅ծ̅ին և քարոզին սաղմոս մին։

Օրհնեցէք մանկունք

զտէր· և օրհնեցէք զա-
նուն տեառն: Եղիցի ա-
նուն տեառն օրհնեալ՝
յայսմհետէ մինչև յաւի-
տեան :

Յարևելից մինչև 'ի մու-
տըս արևու՝ օրհնեալ է
անուն տեառն :

Բարձր է 'ի վերայ ամե-
նայն ազգաց տէր· և յեր-
կինս են փառք նորա :

Ո՞վ է որպէս տէր Ա՟ծ
մեր 'ի բարձունս բնա-
կեալ· և զխոնարհս տե-
սանէ յերկինս և յերկրի:

Յարուցանէ զաղքատս

յերկրէ․ և բարձր առնէ
զտառապեալս յաղբեաց։
Նստուցանէ զնոսա իշ-
խանս՝ ընդ իշխանս ժո-
ղովրդեան իւրոյ։
Բնակեցուցանէ զամուլն
'ի տան ուրախամիտ․ ոպ՟
մայր որդւովք բերկրեալ։
Փառք Հօր և որդւոյ։

Քարոզ։

Աստուած խաղաղութեան
ամենայն աշխարհի՝ և
հաստատութեան սրբոյ
եկեղեցւոյ զՏէր աղաչես-
ցուք։ Ասասցուք ամենե-

քեան միաբանութեամբ
տ̃ր ողորմեա՛ :
Երկիցս :

Աղօթք :

Սուրբ ես տէր Ա̃ծ մեր հզօր և փառաւորեալ. որ նստիս 'ի կառս քրովբէականս. և լոյս ծագես յարարածս քո : Լուսաւորեա՛ զմեզ տէր 'ի ժամ առաւօտուս, որպէս զի 'ի ծագիլ լուսոյ տուընջեանս, ծագեսցի առ մեզ գութ մարդասիրութեան քո : Հեռացո՛ 'ի մէնջ տէր

զխաբէութիւն սատանայի. և զբռնութիւն նորա խորտակեա աղօթիւք և բարեխօսութեամբ ամենայն սրբոց։ Արա՛ և զերկիրս պտղաբերս 'ի սնունդս ծառայից քոց։ Յորոց հանապազ փառաւորեալ գովի ամենասբ Երրորդութիւն. այժմ։

## Սաղմոս ։

Սիրեցի՛ զի լուիցէ տէր զձայն աղօթից իմոց. զի խոնարհեցոյց զունկն իւր առ իս, և ես յաւուրս իմ կարդացի առ նա ։

Շրջեցան զինև երկունք մահու. և վիշտք դժոխոց գտին զիս. Ան։

Մաղթանք ՚ի յօրհնի տմ ամէյ։

Քս Ած մեր՝ վասն խաչի քո պատուականի զխաղաղութիւն քո տուր մեզ տէր։

Վասն սրբուհւոյ աստուածածնին, և յովհաննու կարապետին, և սրբոյն ստեփաննոսի նախավկային զխաղաղութիւն քո տուր մեզ տէր։

Վասն սրբոց քոց առա-

քելոց, մարգարէից, վար-
դապետաց, մարտիրոսաց,
հայրապետաց, ճգնաւո-
րաց, կուսանաց, միան-
ձանց, և երկնային զօրացն
զխաղաղութիւն քո տուր
մեզ տէր:

Վասն սրբոյն Գրիգորի
մերոյ լուսաւորչին, բա-
րեխօսութեամբ և աղօ-
թիւք սրբոյն (այս անուն,)
որոյ այսօր է յիշատակ,
զխաղաղութիւն և զմեծ
ողորմութիւն քո պար-
գևեա մեզ մարդասէր
տէր:

## Քարոզ ապաշխարելոյ, և ամե-
## նայն սրբոց ։

Սուրբ Ճգնաւորօքն աղաչեսցուք զՏէր, որք ըղձալին պարտեցին, նեղութեանցն համբերեցին ։ Լուսեղէն և երկնային անթառամ պսակացն արժանի եղեն ։ Աղօթիւք նոցա և բարեխօսութեամբ մեզ ողորմեսցի ։ Ամենակալ Տէր Ած մեր, կեցո՛ և ողոր ։

Աղօթք 'ի տօնի առաքելոց, և մարգարէից, և հայրապետաց, և վարդապետաց։

Որ ընտրեցեր և ընկալեր զերանելի զվկայսն քո (այս անուն) Քս̃ Ած̃ մեր․ և հաղորդս արարեր զնոսա կամաւոր չարչարանաց քոց։ Նորա՝ բարեխօս առ քեզ ունիմք, որք աստ՝ և ընդ ամենայն տեղերս սուրբք լինեն։ Որպէսզի աղօթիւք նց̃ և բարեխօսութեամբ խաղաղացուսցես զկենցաղավարութի̃ս

մեր, փրկելով զմեզ յե-
րևելի և յաներևոյթ
թշնամւոյն ։ Շնորհեա
մեզ տէր ըստ օրինակի նջ
կեալ, և զվախճանն մեր
կնքեա ուղղափառ խոս-
տովանութեամբ 'ի յոյս
կենացն յաւիտենից։ Զի
և մեք արժանի եղիցուք
հասանել յերկնային խո-
րանին լուսոյ, և ժառան-
գել զպատրաստեալն 'ի
սկզբանէ աշխարհի սրբոց
քոց զարքայութիւնդ ։ Եւ
ընդ նոսին գոհանալով
փառաւորեսցուք զքեզ Տ̅

Հօր և ընդ սրբոյ հոգ-
ւոյդ. այժմ և:

՚Ի սարկաւագ վարդապետէն
ասացեալ:

Յիշեա՛ տէր զպաշտօ-
նեայս քո. զծնօղսն մեր.
զվարդապետս. զեղբարս.
զընկերս. զկերակրիչս.
զուխտաւորս. զճանապար-
հորդս. զհանգուցելս. ըզ-
վաստակաւորս. զխոստո-
վանօղս. զապաշխարօղս.
զգերիս. զհիւանդս. զնե-
ղեալս. զիշխանս. զչարա-
րարս. զբարերարս. զթըշ-

նամիս. զատելիս. և որք
պատուիրեցին մեզ հա-
ւատալ ։

Յիշեա Տէր և ողորմեա։
Բարերար և բազում ո-
ղորմ Ա. Ծ՝ քո անմոռաց
գիտութեամբդ և ան-
բաւ մարդասիրութբդ՝
յիշեա զամենայն հաւա-
տացեալս 'ի քեզ, և ո-
ղորմեա ամենեցուն։ Օգ-
նեա, և փրկեա յիւրա-
քանչիւր վտանգից և 'ի
փորձութեանց ։ Արժա-
նաւորեա գոհութեամբ
փառաւորել զհայր և զոր-
դի և զսուրբ հոգի. այժմ։

## Աղօթք Վարդապետաց, Ճգնաւորաց, և Կուսանաց:

Պսակիչ սրբոց Ք͞ս, որ պսակես զսուրբս քո, և առնես զկամս երկիւղածաց քոց, և նայիս սիրով և քաղցրութեամբ յարարածս քո: Լուր մեզ յերկնից 'ի սրբութենէ քումմէ բարեխօսութ͞բ սուրբ աստուածածնին, և աղաչանօք նմ սըրբոց քոց, և որոց այսօր է յիշատակ: Լուր մեզ տէր և ողորմեա՛, ներեա՛,

քաւեա՛ և Թող զմեզս մեր։ Արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ ս̅բ̅ հոգւոյդ․ այժմ ։

Յիշեա՛ տէր, և այլն ։

Բարերար և բազումողորմ Ա̅Ծ̅ ։

Օրհնեալ տէր մեր Յ̅ս̅ Ք̅ս̅․ ամէն ։

Հայր մեր որ յերկինս ես՝ սուրբ եղիցի ։

Աղօթք Նահատակէն Թագաւորին :

Տէր ամենակալ Աստուած աբրահամու՝ իսահակայ յակոբայ՝ և զաւակի նոցա արդարոց. ամենակալ տէր Թո՛ղ զմեղս իմ : Որ արարեր զերկինս և զերկիր՝ և զամենայն զարդ նոցա. ամենա :

Որ կապեցեր զծով բանիւ հրամանի քո . փակեցեր զխորս . կնքեցեր ահաւոր և փառաւորեալ

անուամբ քով սրբով.

ամենա:

Որ ամենայն ինչ սարսի՛ և դողայ յերեսաց ահի զօրութ̅ քո. ամենա:

Անբաւ է մեծվայելչութ̅ փառաց սրբութ̅ քո, և սաստիկ է բարկութիւն սպառնալեաց քոց 'ի վ̅ր մեղաւորաց. անչափ և անքննին են ողորմութ̅ք աւետեաց քոց. ամենա:

Դու տէր բարձրեալ՝ գթած, երկայնամիտ, բազմողորմ. և զղջանաս 'ի վերայ չարեաց մարդկան. ամենակալ:

Դու Ա̃ծ՝ ոչ եդեր ապաշխարութիւն վս̃ն արդարոյն աբրահամու՝ իսահակայ՝ և յակոբայ, որք ոչ մեղան քեզ․ ամենակալ ։

Այլ եդեր ապաշխարութի̃ վասն իմ մեղաւորիս․ զի մեղայ աւելի քան զաւազ ծովու․ և բազմացան անօրէնութիւնք իմ․ ամենակալ ։

Չեմ արժանի հայիլ՝ և տեսանել զբարձրութի̃ս երկնից 'ի բազմութենէ անօրէնութեան իմոյ․ ամենակալ ։

կորացեալ եմ ես 'ի բռնութենէ կապանաց երկաթից. և ոչ գոյ ինձ հանգիստ. ամենակալ ։

Բարկացուցի զսրտմտութիւն, և զչար առաջի քո արարի. կանգնեցի պատկեր՝ և բազմացուցի զցասումն. ամենակալ ։

Եւ արդ՝ տէր խոնարհեցուցանեմ զծունկս սրտի իմոյ, և հայցեմ 'ի քաղցրութենէ քումմէ. ամենակալ ։

Մեղայ տէր մեղայ, և զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ. ամենա։

Աղաչեմ և խնդրեմ 'ի
քէն, թո՛ղ ինձ տէր․ թո՛ղ
ինձ․ և մի՛ կորուսաներ զիս
ըստ անօրէնութեան ի-
մոյ․ ամենա:

Մի՛ յաւիտեան բարկա-
նար ինձ տէր․ և մի՛ յի-
շեր զչարիսն իմ, և մի՛
պարտաւորեր զիս ընդ ի-
ջեալս 'ի ներքոյ երկրի
չարեօք․ ամենա:

Զի դու Ած՝ ապաշխա-
րողաց ես և յիս ցո՛յց
զբարերարութիւնդ քո,
զի անարժան եմ․ ամենա:

Կեցուսցես զիս ըստ բա-

զում ողորմութիւն քում.
և ես օրհնեսցից զքեզ
զամ̃ աւուրս կենաց իմոց.
ամենա։

Զքեզ տէր օրհնեն ամ̃
զաւարթութիւնք երկնից. և
քո են փառք յաւիտեանս.
ամէն։

Փառք հօր և որդւոյ։

Աղաչեմ և խնդրեմ ՚ի
քէն տէր՝ թող ինձ ըզ-
մեղս իմ։

Բազումողորմ տէր, ողոր-
մեայ ինձ։

Ս.Ծ, քաւեա զիս զմեղա-
ւորս։

Արարիչ իմ և յոյս Ա՜Ծ, գթա՛ յիս ՚ի մեղուցեալ ծառայս, և ողորմեա՛ ինձ բազմամեղիս ։

Ամենօրհնեալ սրբուհի՛ և միշտ կոյս աստուածածին մարիամ, բարեխօսեա՛ առ տէր վասն իմ մեղաւորիս ։

Ամ՛ սուրբք Այ՜, բարեխօսեցէ՛ք առ հայր յերկինս վասն մեր մեղաւորացս ։

Քս՜ որդի Այ՜ անոխակալ՝ ընկա՛լ զաղաչանս մեր. զի ՚ի քեզ են ապաւինեալ անձինք մեր ։

Յաղթող զօրութեամբ սուրբ և կենդանարար, և պատուական խաչիւ քով տէր պահպանեա՛ ըզմեզ :

Առաքեա՛ տէր զհրեշտակ խաղաղութեան քո . որ եկեալ պահեսցէ զմեզ անխռովս 'ի տուէ և 'ի գիշերի :

Եւ մարդասիրութեամբ քո յիշեա՛ զմեզ տէր, յիշեա՛ զմեզ . յորժամ գաս արքայութեամբ քով, և ողորմեա՛ց մեզ :

## Քարոզ։

Եկեալքս 'ի խոստովանութիւն ապաշխարութե՟ն հաւատով զյոյս միածնի որդւոյն Ա՟յ դիցուք 'ի սիրտս մեր, խնդրելով 'ի նմանէ զքաւութիւն և զթողութիւն յանցանաց մերոց։ Վասն զի նա ինքն է նախախնամօղն Ա՟ծ յաւիտենական, որ եկն կամաւ հօր 'ի փրկել զարարածս. և ասաց զինքն լինել քաւիչ մեղաւորաց, յոյս ապաշխարողաց,

շնորհելով զհանգիստ աշխատելոց, ընդունելով զծանրաբեռնեալս և զտաժանեալս մեղօք յապաշխարութիւն քաւութեան։ Արդ՝ եկա՛յք ամենեքեան խոնարհեալ անձամբք, բեկեալ սրտիւք անկցուք և լացցուք առաջի տեառն արարչին մերոյ, զի անցուսցէ 'ի մէնջ զցասումն պատուհասի յանցանաց մերոց բարերարութեամբն իւրով։ Ամենակալ տէր Ա͞Ծ մեր, կեցո՛ և ողորմեա՛։

## Աղօթք:

ՏՐ Ած փրկութեան մերոյ՝ որ ողորմած ես և գթած, երկայնամիտ՝ բազումողորմ, և զղջանաս ՚ի վերայ չարեաց մարդկան. որ ոչ կամիս զմահ մեղաւորին, այլ դառնալ նորա ՚ի չար ճանապարհէն և զկեալն: Դու տէր առատ մարդասիրութեամբդ քով մխիթարեա՛ զծառայքս քո. և տո՛ւր սոցա տեղի ապաշխարութեան. Հաշտեա՛

մարդասիրութեամբ քո՝
և արա զսոսա անդամս
եկեղեցւոյ քում սրբոյ։
Որպէս զի առողջացեալք
հոգւով՝ խոստովանութիւն
և ապաշխարութիւն մտցեն
յեկեղեցի քո սուրբ։ Եւ
ընդ ժողովրդեան քում
քեզ հանիցեն զօրհնութի և
զփառս հօր և որդւոյ և
հոգւոյդ սրբոյ. այժմ և
միշտ և յաւիտեանս յա-
ւիտենից. ամէն։

## Սաղմոս. 5։

Բանից իմոց ունկն դիր

տէր. և 'ի միտ առ զա-
ղաղակ իմ։
Նայեաց 'ի ձայն աղօ-
թից իմոց, թագաւոր իմ
և Ած իմ. ևն։

ՍՈՒՐԲ ՏՆ ՆԵՐՍԷՍԻ ՀԱՅՐՆ ԵՐԿ-
ՐՈՐԴ ԱՌԱՒՕՏԻՆ ԱՐԱՐՉՈՒԹԷ.
ԵՒ ՀԱՅՐՆ ԵՐԿՆԱՅՆՈՅ ՇՕՐԱՅՆ։

Բ Հ Արարչական բանին
հրաման՝ 'ի յերկ-
րորդումն աւուր սկզբան.
զջուրսն 'ի ջուրցն բա-

ժամեայ՝ հաստատութը̃ պարունակեայ. որով զաշխարհս հողեղինաց՝ անջրպետեաց 'ի հրեղինաց. Ը̃ նոսին որդիք լուսոյ՝ տո՛ւք օրհնութիւն երրեակ լուսոյն ։

Բազմաչեայ հոյլք քրովբէից՝ երեքսրբեանըդ սրովբէից. աթոռք անեղ աստուածութեանն՝ համագոյ երրորդութեան. բարեխօ՛ս լերուք առ տր̃՝ վասն մանկանց եկեղեցւոյ. ընդ նոս ։

Գերագոյն իշխանութիւնք՝

և անփոփոխ միշտ տէրու-
թիւնք. անյաղթելի պե
զօրութիւնք՝ 'ի յարա-
չին փառատրութիւն. ա-
ղաչեցէք զտէրն ողորմած՝
անտես չաւնել զգործս
ձեռաց. ընդ նոս։

Դասք անմարմնոցըդ պե-
տութեանց՝ հրեշտակապե-
տըք բարձրութեանց. հո-
գիք հրեղէնք և սպասա-
ւորըք՝ հրեշտակաց զի-
նուորութիւնք. մաղթե-
ցէք զտէրն տէրանց՝ վ՟ս
մարդկան երկրաւորաց. ը՟
նոս։

Երկնաւորաց դասուց վերնոց՝ օրհնաբանից քոց զուարթնոց. քաղցրասցի առ քեզ գթած՝ որ վ͞ս մեր ձայն մաղթանաց. զորս և տացես մեզ պահապան՝ յայսմհետէ մինչ ՚ի վախճան. ընդ նոսա։ Զօրութեանց և տէրութեանց՝ իշխանութեանց և պետութեանց. և ա͞մ անուանելոց՝ որք ՚ի յերկինս պաղատանօք, ընկալ Ք͞ս ուրախու͞բ՝ զմեզ յօր մահու և յարութեան. ը͞ նոսին օրհնել հոգւով.

զքեզ ընդ հօր փառաւո-
րելով ։

Երգ վ͞ն երրորդ աւուր ա-
րարչութեան, և վ͞ն երկրին գա-
րուն. և 'ի յովհաննէս
Մկրտիչն ։

ԳՀ Էական բանն որ ը̅ հօր՝ արարչակից և համագոր. երրորդ աւուր զջուրսն զատոյց՝ զծովս և զտունկս բղխեցոյց. իսկ 'ի յերրորդ դարուն դարձեալ՝ զջուրցն հեղեղ ցամաքեցոյց. ընդ տապանաւն իւր ապրեցոյց՝ զկենդանեաց սե-

ուրս աճեցոյց· տո՛ւր օրհ-
նութիւն անճառ լուսոյն·
Հօր և որդւոյ և սուրբ
Հոգւոյն ։

Ընդ ծառոց երկրի զգա-
լեաց՝ տնկեաց և զտունկս
իմանալեաց· զհեղեղ մե-
ղացն ցածուցեալ՝ զդասս
արդարոց բազմացուցեր·
յորոց և մեծն 'ի ծնունդս
կանանց՝ միջնորդ շնոր-
հաց և օրհնաց· տո՛ւր
օրհ ։

Թագաւորին երկնից զի-
նուոր՝ արքայութեանն
աւետաւոր· խնդրե՛մ դնել

Իրս 'ի սրտէ՝ առ 'ի հով-
տէս տրտմականէ. յուխ-
տեալ տեղին տէրունա-
կան՝ 'ի խոստացեալն որդ-
ւոց մարդկան. տո՛ւք ։

Ժառանգին հօր սպասա-
ւոր՝ և յարդանդէ երկր-
պագող . կարապետ և
մկրտիչ՝ այնմ որ մեղաց
մերոց քաւիչ . լե՛ր բա-
րեխօս առ նոյն գթած՝
ջնջել զգիր մեր յան-
ցանաց . տո՛ւք ։

'Ի հօրէ լոյս ծագեցար՝
մեռեալ բնութենս կեն-
դանարար. առաքեցեր յա-

ռաջընթաց՝ սուրբ զյով-
հաննէս քարոզ կենաց .
սորին հայցմամբն ամե-
նակալ՝ զպաղատանսմեր
ընկա՛լ . տո՛ւք : Լուսա-
շաւիղ յերկինս ելին՝ հո-
ղանիւթեայ սուրբ հրեշ-
տակին. արժանացո՛ զմեզ
նորին՝ նեղ և անձուկ
ճանապարհին. զի հետե-
ւոզք գոլով նորին՝ հօր
քոյ վերին օթեվանին. և
երգեսցուք ընդ երջան-
կացն՝ որդւոյ լուսոյ .քեզ
երգս փառաց :

Որպէս զի չորրորդ աւուր արարչուէն. և զի չորրոր-դի դարուն. և զի աւե-տեաց ժամանին։

դՀ Խաւարն անգդոյ և սկըզ-բնածին՝ հալածեցաւ յօրն առաջին. լոյսն այն պայ-ծառ յօր չորրորդին՝ ա-րեգական նիւթ հաւա-քեալ. լուսինն ՚ի տիպ լուսոյ ստեղծեալ՝ և աս-տեղաց պարս յօրինեալ. որով օրհնի ստեղծողն էից՝ ՚ի բանաւոր պաշ-տօնէից։

Ծածկեալ խորհուրդն

ծանուցաւ՝ չորրորդ դա-
րուն խսահակաւ. ՚Ի չոր-
րորդ օր դարձեալ հրեշ-
տակն՝ ետ զաւետիսն կու-
սական. Թէ լոյսն որ ոչ
բովանդակի՝ ՚ի քէն մարմ
նովպարունակի. յոր օրհ-
նեցայք ազգք երկրածին՝
ամ՛ւք օրհնութիւն պտղոյ
կուսին ։

Կուսին նախնոյ մօրն եւա-
յի՝ յորմէ ադամ՛ն հին
պարտի. բարձան անէծքն
արտմական՝ քո ս՛ր ծնըն-
դեամբ կոյս մարիամ .
աղաչեմ զքո միածին՝ Թո-

ղուլ զմեղս որդւոց նոցին. Տէր օրհնեսցուք:

Հարսն ընծայեալ յերկ-հօր յերկինս՝ Տէր համ-բառնամք առ քեզ զհո-գիս. Տէր լսելոյ քոյ զա-ւետիս՝ խնդրեմ լինել մեզ լսելիս. զձայն աւետեաց քոյ միածնին՝ եթէ եկա՛յք օրհնեալք Հօր իմ. Տէր օրհնեսցուք ազգք:

Ձայնիւ առ քեզ տէր պա-ղատիմք՝ և առաջի քո անկանիմք. աղաչանօք աստուածածնին՝ շիջո՛ ՚ի մէնջ զբոց հնոցին. տո՛ւր

արտասուօք զմեղս ջնջել՝
և վերստին զմեզ նորո-
գել․ յոր օրհնեցայք ազգք
երկրածին՝ տուք օրհնութի̅։
Ղեկավա՛ր Ճարտարա-
պետ՝ անցեր ը̅ ծով կեն-
ցաղս անհետ․ վերաբե-
րեա՛ ընդ պետրոսի՝ զմեզ
՚ի յալեաց մեղաց ծովէս․
պաղատանօք գերադրունի՝
անապականն քում ծնողի․
յոր օրհնեցայք ազգք երկ-
րածին, տուք օրհնութի̅
պտղոյ կուսին ։

Երգ ժմ̄ հինգերորդի առաւր
տէրաշուեն. և ժմ̄ հինգերոր-
դի պարուն. և ՚ի ոք̄ ատա-
ծային Քն̄ի:

ԽԶ Ճառագայթեալ բանն ՚ի հօրէ՝ յօր հինգերորդն հրամայէ . բղխել ՚ի ջրոյ սեռս կայտառաց՝ և թեւաւորս օդականաց . իսկ ՚ի գարուն հինգ մկրտին՝ յամայն և ՚ի ծովն խորայնէ հին . տացուք հրաշից ներգործողին՝ պատիւ և փառս անեղ բանին:

Մաքրապէս օրինակի՝ ա-
ռաքելոցն Քսի. որք ՚ի
ծովէն տիբերական՝ ՚ի
յերկնայինսն կոչեցան.
անցին ընդ ծով աշխար-
հական՝ և ՚ի հոգին մկըր-
տեցան. տացո՛ւք:

Յուրախութիւնս անդ-
րաւական, ՚ի հարսանիսն
անապական. զձեզ առա-
քեաց հայրն փառաց՝ հրա
ւիրատուք տրտմականաց.
սուրբ հարսանեացն այն
հայցեցէք՝ ընդ ձեզ լի-
նիլ մեզ պարակից. տա:
Նորոգօղք տիեզերաց՝ ՚ի

Նախահօրն յանցանաց·
նորափետուր զարդարե-
ցիք՝ զեկեղեցիս հեթա-
նոսաց· պաղատեցէք առ
նոյն գթածն՝ զմեզ նորո-
գել ՚ի հնոյ մեղաց· տաց:
Ըլնօղ էիցս համայնից՝
արարածոց ՚ի յանգոյից·
նոյն շինեցեր զեկեղեցի՝
վէմդ ՚ի վերայ վիմին բա-
նի· ընդ եղեալ հիմունս
՚ի նոր սիոն՝ զմեզ յօդեա՛
շինամամբ ՚ի նոյն· տա:
Ուրախացաւ դնացիւք գե-
տոց՝ քաղաք ՚ի քէն շի-
նեալ Յս̃· յորմէ վտակք

շնորհաց հոսին՝ զոգիս
մարդկան ոռոգանեն. ար-
բո և մեզ 'ի ջրոյն կե-
նաց՝ հայցմամբ հոգւոյն
մատռուակաց. զի բանա-
ւոր երկիրս քո՝ պտղա-
բերցի 'ի փառս քո:

Երգ մջ մեղեդւորդէ առաւ-
արարչականն. և մջ մեղեդւորդէ
դարձանն. և 'ի խաչելութեանն
Քնի:

Զհանդուրժեալ բնութ ուր
բարւոյն՝ ունիլ միայն
զանձառ բարին. այլ
ստեղծեալ զմարդ յիւր

պատկերին՝ 'ի վեցերորդ առաւօտին. և 'ի յերրորդ ժամ զկողածին՝ 'ի յօգ-նութիւն ետ հողածնին. զորս 'ի դրախտին եդ վա-յելել՝ բայց 'ի պտղոյն մահու արգել ։

Պապանձեալ առ դատո-ղին՝ յետ յանցանաց ա-դամին հին. զկինն պա-ճառ եդեալ խաբմանն՝ և կինն զօձն դաւաճանն. ո-րով երկիրս այս անիծաւ՝ փուշ և տատասկ 'ի սմա բուսաւ. վճիռ մահու մարդոյն տուաւ՝ դառնալ

'ի հող՝ ուստի ստեղծաւ։
Զինչեւ փութայր հայրն
փառաց՝ զգիր պարտեաց
մեր յանցանաց· որով ըզ-
գեցաւ որդին գթած՝ 'ի
վեց դարուն զմարմին մե-
ղաց· հօր հաճութեամբ
'ի մահ խաչին՝ եկն կա-
մաւ 'ի յուրբաթին ·
գառն զենաւ 'ի հին զատ-
կին՝ փոխան գառանցն օ-
րինակին ։

Ոահիւ լուսոյ պատուի-
րանին՝ արդարութե՟ ճա-
նապարհին · քարձրանա-
լով քո 'ի խաչին՝ քարձ-

րացուցեր զմեզ 'ի յերկինս. քո անսպառում խոնարհութեամբդ՝ և կամաւոր խաչելութեամբդ. հաշտեայց ընդ մեզ տէր գթութեամբ՝ և թող զմեղս ողորմութեամբ։ Սոսկալիդ սերովբէից՝ և ահաւորդ քրովբէից. խոնարհեցար 'ի չարչարանս՝ չարչարելի բնութեամբ մարդկան. 'ի խաչին զմեղս սպաներ՝ և զդատակնիք մահու լուծեր. հաշտեայց ընդ մեզ։

Վեհագոյն բնութեանց էից՝

և արարիչդ բոլորից. յոր-
ժամ ծագես զխաչիդ նշան՝
'ի գալստեան քո միւս-
անգամ. զերկրպագուս
այժմ հաւատով՝ լուսա-
ւորեա նորին լուսով. զի
համաձայն խաչազգեցիցն՝
զքեզ օրհնեմք յաւիտե-
նից։

Երգ մի եօթներորդի աւուր
արարչութեան. և մի եօթներոր
դի դարուն. և 'ի խորհուրդ
հանգստեանն Աստուծոյ։

Տէրն յետ ստեղծմանն Շբ
արարածոց՝ հան.

գեալ յեօթն օրն 'ի գոր-
ծոց. այն որ հանգիստ
աշխատելոց՝ և կամքն
գործ է եղելոց. ուստի և
մեզ լոյս հաստատուն,
ետ հանգստեամբն շա-
բաթուն. թէ աստ գոր-
ծել զգործս Այ՝ անդ է
հանգչիլ ընդ այ։

Բաքունաքայր վարդապե-
տիմք՝ յօրինակէ տեառն
խորամիմք. որ 'ի յերկ-
րորդ արարչութեան՝ յետ
կատարման տնօրէնութե.
յեօթներորդ օր հանգս-
տեան՝ իջեալ մարմնով

՚ի գերեզման. զկապեալ հոգիսն վերածեաց՝ զանանց հանգիստն պարգեւեաց:

Յօղն որ ՚ի քոյդ կողէ ցօղեալ՝ բժշկեսցէ զհանգուցեալսն. իջցէ ՚ի հող մահուանոյին՝ և բուսուսցէ յօրն վերջին. կենդանարար ձայնիւդ քո՝ կոչեմ զնոսա ՚ի կեանս քո. և դասեսցի՛ ընդ արդարոցն՝ երգել քեզ փառս ընդ զուարթնոցն:

Հիւծեալ զբնութիւնս կենաց ունօղ՝ դարձոյց

յանցանքն 'ի մահու հող· իսկ անմահից մտանելումն շնորհեաց դարձեալ զանմահութիւն · զորս են ը̄ քեզ թաղեալ մահուամբ՝ աւազանին մկրտութ̄բ · յարժ ընդ քեզ քոյին փառօք՝ արեգական նման լուսով :

Փայլին արդարքն յարքայութեան՝ և ճգնաւորքն 'ի հանգստեան · մարտիրոսքն պսակին՝ և կուսանաց լապտերք փաալին · դասեցո՛ տէր ընդ նոսին՝ որք զքեզ Ա̄ծ

խոստովանին. արդարութ
մի դատեսցին՝ այլ գթութ
քո քաւեսցին :
Քո անպատում խոնարհութեամբդ՝ որ թաղեյալ մեռելութեամբ. և յարուցեր յորդւոյ մարդկան՝ որք հաւատով 'ի քեզ անկան. յարո՛ և ըզմեզ արդարութեամբ՝ և զննջեցելոյն ողորմութ. ընդ կենդանեաւս բերանով՝ տայցեն քեզ փառք ընդ հօր հոգւով :

## Մաղթանք պահոց յետ ա-րարշահանին ։

Խաչ քո եղիցի մեզ ա-պաւէն տէր Յս՟՝ յորժամ երևիս փառօք հօր ընդ ամպս լուսաւորս։ Յայն-ժամ մեք մի ամաչես-ցուք յուսացեալքս 'ի քեզ, այլ զօրութեամբ քով մեծաւ բերկրեսցուք ընդ աջմէ քումմէ՝ որ-պէս զորդիս լուսոյ և որ-դիս տունջեան ։

## Քարոզ ։

Աղաչեսցուք զամենա-

կալն Ա̃Ծ, զի պահպանես-
ցէ զժողովուրդս իւր ի
հովանեաւ ս̃բ և պատ-
ուական խաչին իւրով
՚ի խաղաղութեան: Ամե-
նակալ տէր Ա̃Ծ մեր, կե-
ցո և ողորմեա:

## Աղօթք պահոյ:

Օգնեա մեզ տէր, օգ-
նեա մեզ Ա̃Ծ փրկիչ մեր՝
վասն մեծի փառաց ա-
նուան քո. տէր փրկեա
զմեզ, և քաւեա զմեղս
մեր վասն անուան քո
սրբոյ: Պարսաւեալ պահեմ

ղառ 'ի քեզ զապաւի-
նեալ և զյուսացեալ ժո-
ղովուրդս քո՝ ընդ հո-
վանեաւ սուրբ և պատ-
ուական խաչի քո 'ի խա-
ղաղութեան: Փրկեա՛ յե-
րեւելի և յաներեւոյթ
թշնամւոյն: Արժանաւո-
րեա՛ գոհութեամբ փառա-
ւորել զքեզ ընդ Հօր և
ընդ սուրբ Հոգւոյդ. այժմ
և միշտ:

Յիշեա՛ տէր զպաշտօ-
նեայս քո:

Բարերար և բազումո-
ղորմ ԱԾ. քո:

Օրհնեալ տէր մեր Յս֊

Քս. Ամէն։

Հայր մեր որ յերկինս

ես՝ սուրբ եղիցի անուն

քո։

# ԿԱՐԳԱՒՈՐՈՒ-
# ԹԻՒՆ

Հասարակաց աղօթից առաւ.
Գալն ժամուն ։

Եղիցի Ա՛նուն տեառն օրհնեալ յաւի-տեան . զի յաւուրս քան զարև է անուն նորա։ ՚Ի նա օրհնեսցին ա̃մ ազգք երկրի . և ա̃մ ա-զինք երանեսցեն նմա։ Օրհնեալ տէր Ա̃ծ իս-րայէլի՝ որ առնէ սքանչե-

լիս միայն. և օրհնեալ է անուն սուրբ փառաց նորա յաւիտեան. լցցի փառօք նորա ամենայն երկիր. եղիցի եղիցի:

Փառք հօր և որդւոյ և հոգ:

Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչես:

Օրհնութիւն և փառք հօր և որդւոյ, և հոգւոյն:

## Երգ առաւօտեան:

Յարևելից մինչ 'ի մուտս՝ 'ի հիւսիսոյ և 'ի հարա-

ւոյ. ամ ազգք և ազինք յօրհնութիւն նոր օրհ-նեսցէք զարարիչն արարա-ծոց. որ ծագեաց զլոյս ա-րեգականն այսօր յաշ-խարհս:

Եկեղեցիք արդարոց՝ փա ռաբանեցէք ամենասուրբ երրորդութեանն, յառա-ւօտս լուսոյ պառաւօտ խաղաղութեան Քի գո-վեցէք ընդ հօր և հոգ-ւոյն. որ ծագեաց զլոյս գիտութեն իւրոյ 'ի մեզ:

## Յորդորակ ։

Յարեւելից յարեւմուտս մանկունք սիոնի՝ որ հնե- ցէք միշտ անդադար ըղ- ձափողին լուսոյ ։
Եկեղեցիք արդարոց և փառաբանիչք՝ բարեբա- նեցէք որ ետ զիմաստս լուսոյ ։

## Քարոզ ։

Յարեւլից մինչեւ՚ի մուտս արեւու ընդ ամենայն տե- ղիս քրիստոնէութեան ․ ուր և կարդան զանուն

տեառն սրբութեամբ տէր աղօթիւք նոցա և բարեխօսութեամբ մե՛ր ողորմեսցի։ Ուխտիւք զամե՛ն աղաչեսցուք, զի նա փըրկեսցէ զմեզ ՚ի մեղաց և ՚ի յանկութենէ աշխարհի։ Ընկալցի զուխտս և զխնդրուածս սրտից մերոց. և արժանի արասցէ զմեզ հաւատոց և սըտուերանաց իւրոց ընդ ամենայն սուրբս իւր՝ Ամենակալ Տէր Ած մեր կեցո՛ և ողորմեա՛։

Զառաւօտս լուսոյ, և

զառաջիկայ օրս՝ խաղաղութեամբ անցուցանել հաւատով 'ի տեառնէ խնդրեսցուք ։

Զհրեշտակ։ Զքաւութիւն։ Զսրբոյ։ Եւ ևս։ Զանձինս ։ Ողոր ։

## Աղօթք ։

Յարևելից մինչև 'ի մուտս արևու օրհնեալ ես տէր. վասն զի Թագաւոր քաղցր ես. և անուն քո ահեղ է ընդ ամենայն տիեզերս ։ Քաղցրասցին

սաղմոսերգութիւնք մեր առաջի քո. ելցեն իրաւունք յարդարութենէ քումմէ 'ի տկարութիւնս մեր, և փառաւորեսցի ամենասուրբ անուն քո: Եւ մեք արժանի եղիցուք կալ 'ի պատուիրանի քում, և քեզ երգել զօրհնութիւն և զփառս հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ և յաւիտ:

Խաղաղութիւն ամենեցուն:

Ա՟ծ մշտնջենաւոր՝ Ա՟ծ

յաւիտենական, որ 'ի ստո-
րին աշխարհս լոյս ծագե-
ցար, և լուսաւորեցեր ըզ-
մեզ 'ի խաւարային մեղաց
մրրոյ. որ վասն մեր 'ի
չափաւորութիւն եկիր
անչափդ Ա̄Ծ. և հեղեալ
ծաւալեցեր զշնորհս հոգ-
ւոյդ սրբոյ յարարածս
քո։ Այժմ և յաւիտեանս
ժամանակաց բարեբա-
նեալ ես ամենամեծդ Ա̄Ծ,
ընդ հօր և ամենասուրբ
հոգւոյդ. այժմ և։

## Սաղմոս. 99։

Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր. ծառայեցէք Տեառն ուրախութբ։ Մտէք առաջի նորա ցնծութեամբ. ծաներուք՝ զի նա է Տէր Ա՟ծ մեր։ Նա արար զմեզ, և ոչ մեք էաք. մեք ժողովուրդըք, և խաշն արօտի ն՟ր։ Մտէք ընդ դրունս նորա խոստովանութեամբ. և օրհնութեամբ ՚ի յարկս նորա։

Խոստովա՛ն եղերուք մ̃ն,

և օրհնեցէք զանուն նր՟։ Քաղցր է տէր, յաւիտեան է ողորմութիւն նորա․ յազգէ մինչև յազգ է ճշմարտութիւն նորա։ Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ ։

Երգ։

Ազնաւորք Ա՟յ և ժառանգորդք երկնից արքայութեան, որք փոխանակեալք զանցաւորս առիք զանանցն բարութ՟ց• բարեխօսեցէք առ տէր վասն մանկանց եկեղեցւոյ։

Նահատակք պանծալիք և սիրեցեալք 'ի յերկնաւոր հօրէն. որք մկրտեցայք ընդ Քսի արեամբ ձերով 'ի մահ խաչին. բարեխօս:

Մարտիրոսք ցանկալիք և օթեվանք հոգւոյն ճշմարտութեան. որք յաղթեցիք հոգւով կարեաց և ցանկութեց. բարեխօս:

Գովելիք աշխարհի, և բաղձալիք վերնոյն պետութեանց. որք երանութեան մասին հասիք քան զամենայն որդիս մարդկան. բարե:

կամաւոր պատարագք՝ մանկունք տիօք, և կատարեալք իմաստութե՟. որք փոխանակ կաթին արբին զգինին զմայլեցուցիչ. բարեխ :

Յորդորակ :

Զինուորք ճշմարիտք վկայք Ք̅ի՝ բարեխօսեցէք առ տէր վասն անձանց մերոց :

Նահատակ կենդանիքսիլօղք Ք̅ի՝ որք չարչարեցայք մարմնով վասն անուանն տեառն :

Մարտիրոսք ցանկալիք՝ մարդկան ըղձալիք, հայցեցէք 'ի սուրբ հոգւոյն տալ մեզ զբարիս:

Գովելիք վերնոց դասուց պարծանք աշխարհի՝ խընդրեցէք՝ զխաղաղութիւն տալ եկեղեցւոյ:

Կամաւոր սուրբ պատարագք՝ հասարակաւ մանկունք, հայցեցէք լինել և մեզ ձեզ պսակակից:

## Մաղթանք:

Աղաչեմք ողորմեա՛յ տէր բարերար աղաչեմք որդ-

մեայց. վասն աղօթից սրբոց Ճգնաւորայն աղաչեմք ողորմեայց ։

Քարոզ ։

Սուրբ Ճգնաւորօքն աղաչեսցուք զտէր, որք ըզչարան պարտեցին, նեղութեանցն համբերեցին ։ Լուսեղէն և երկնային անթառամ պսակացն արժանի եղեն ։ Աղօթիւք նոցա, և բարեխօսութ՟ մեզ ողորմեսցի ։ Ամենակալ տէր Ա՟Ծ մեր ։

Աղօթք։

Սուրբ ես տէր, և ՚ի սուրբս հանգուցեալ. և մեք սուրբ վկայիւքս աղաչեմք զքեզ, բարեխօսութեամբ սուրբ ա̃ծածնին՝ և աղաչանօք ա̃մ սրբոց քոց մի՛ մերժեր զմեզ յողորմութենէ քումմէ, այլ կեցո՛ զմեզ աղօթիւք սոցին. զի դու ես բազումողորմ Ա̃ծ. և քեզ վայելէ փառք իշխանութի̃ և պատիւ, այժմ և։

Յիշեա տէր զպատշաճոնեայս քո. տես երես 200։

Բարերար և բազումո-
ղորմ Ած:

Սաղմոս . 62 :

Ած ած իմ, ես առ քեզ ա-ռաւօտ առնեմ. ծարաւե-ցաւ առ քեզ հոգի իմ. քանիպատիկ եւս՝ և մար-մին իմ. Եւն :

Շրկ :

Լոյս արարիչ լուսոյ ա-ռաջին լոյս բնակեալդ 'ի լոյս անմատոյց՝ հայր երկ-նաւոր՝ 'ի դասուց լու-սեղինայն օրհնեալ, 'ի ծագել լուսոյ առաւօտուս

ծագեալ ՚ի հոգիս մեր ըզ-
լոյս քո իմանալի։

Լոյս ՚ի լուսոյ ծագումն
արեգական արդար՝ ան.
ճառ ծնունդ հօր որդի,
յառաջ քան զարեւ անուն
քո գոլեալ ընդ հօր. ՚ի
ծագել լուս։

Լոյս ՚ի հօրէ բղխումն
աղբիւր բարութեան հո.
գիդ սուրբ Աստուծոյ՝
մանկունք եկեղեցւոյ ընդ
հրեշտակս զքեզ բարե.
բանեն. ՚ի ծագել լուսոյ
առաւօտ։

Լոյս երրեակ եւ մի ան.

բաժանելի սուրբ երրոր-
դութիւն. զքեզ է երկ-
նայնոցն երկրածինքս միշտ
փառաւորեմք. ՚ի ծագել ։

Յորդորակ ։

Անեղանելիդ Ա̃ծ հայր
ամենակալ, ընկա՛լ զա-
ղաչանս մեր քոյ պաշտօ-
նէից ։
՚ի հօրէ ծագումն անճառ
արեգակն արդար, ծա-
գեա՛ ՚ի յանձինս մեր ըզ-
լոյսդ ողորմութեան ։
՚ի հօրէ բղխեալ հոգի
աղբիւր բարութեան ,

լուսով քո լցո զմեզ յայսմ առաւօտուս: Երեք անձինք և մի բնութիւն մի ա̃ծութիւն. ըզքեզ խոստովանիմք յաւէտ սուրբ երրորդութի̃:

Մաղթանք:

Լուսովդ քո Քս̃ ամենեքեան լուսաւորեցաք, և ՚ի սուրբ խաչ քո փրկիչ հաւատացեալքս ապաւինեցաք:

Լուր մեզ Ած̃ փրկիչ մեր, տուր մեզ զխաղաղութիւն քո. և այս առ

Եւ զողորմութիւն քո
մարդասէր տէր ։

Քարոզ ։

Եւ եւս խաղաղուե՟ զտէր
աղա ։

Փառաւորեսցուք զամե-նակալն Ած՟ որ ծագեաց զլոյս առաւօտու յարա-րածս իւր ․ ծագեսցէ և այժմ զառատ ողորմուե՟ իւր ՚ի վերայ փառաբան-չաց անուան իւրոյ։ Ամե-նակալ տէր ։

## Աղօթք ։

Զառաւօտու զաղօթս,
և զբանաւոր պաշտօնս՝
ընկա՛լ ամենակալ ամե-
նամեծդ Ած ՚ի քո անա-
պական և յերկնային խո-
րանսդ։ Ծագեա՛ առ մեզ
զարդարութեան և զի-
մաստութեան զլոյս քո •
արա՛ զմեզ որդիս լուսոյ
և որդիս տուընջեան, ոչ զի
՚ի գալ աւուրս երկիւղա-
ծութեամբ փարեսցուք
զկեանս մեր • և առանց
դայթակղութեան կա-
տարեսցուք։ Զի դու ես

օգնական եւ փրկիչ մեր. եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն :

Սաղմոս. 22 :

Տէր հովուեսցէ զիս. եւ ինձ ինչ ոչ պակասեսցի . եւն:

Երգ :

Ճանապարհ եւ ճշմարտութիւն եւ կեանք Քս̅, առաջնորդեա հոգւոց մերոց յերկրէ ելանել յերկինս :

Դուռն կենաց մտից Յս̅,

մոյծ և զմեզ առ հայր
քո և հոգւ՝ երգել միշտ
զփառս ։

## Յորդորակ ։

Ճանապարհ բարի Քս՟,
և Ճշմարտութիւն՝ ա-
ռաջնորդ հոգւոց մերոց
յերկրէ 'ի յերկինս ։
Դուռն կենաց մտից Յս՟
Քս՟ Ճշմարիտ, մոյծ և
զմեզ առ հայրդ քո հոգ-
ւովդ սրբով ։

## Մաղթանք:

Տէր, ուղղեա՛ զգնացս մեր ՚ի ճանապարհս խաղաղութեան. տէր ուղղեա՛ և առաջնորդեա՛ հոգւոց մերոց և մեր հաւատացելոց՝ գնալ յարդարութեան ճանապարհն, և ՚ի կեանսն յաւիտենից:

## Քարոզ:

Աղաչեսցուք զամենակալն Աստուած՝ զի յաջողեաւ ուղղեսցէ զճանապարհս ծառայից իւրոց ՚ի բարի

և 'ի խաղաղութիւն։ Ամենակալ տէր Ա̅Ծ մեր կեցո և ողորմեա։

### Աղօթք ։

Առաջնորդ կենաց և պարգևիչ խաղաղութե̅ Ք̅Ս Ա̅Ծ մեր, առաջնորդեա մեզ գնալ 'ի ճանապարհս քո արդարութե̅ և խաղաղութեամբ ժամանել 'ի նաւահանգիստն կենաց և փրկութեան՝ շնորհօք ողորմութե̅ քո։ Զի դու ես օգնական և փրկիչ մեր. և քեզ վա-

յելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից : ամէն :

Աղօթք աւուրց պահոց. յորս տօն ոչ լինի :

Օրհնեալ ես տէր Ա̄ծ փրկիչ մեր՝ որ յամենայն ժամ ընդ մեզ ես, և ո՛չ երբէք թողուս ՚ի ձեռանէ քումմէ զայնոսիկ՝ որք հաւատով և ճշմարտութբ̄ կարդան առ քեզ : Աղաչեմք և խնդրեմք ՚ի քէն տէր, ճանապարհորդակից լեր ծառայից քոց քոյին

վերակացութ̃ք. պահե-
լով 'ի խաղաղութեան. և
առաջնորդեա մեզ միւ-
սանգամ խաղաղութ̃ք և
խնդութեամբ հասանել
յիւրաքանչիւր 'ի բնա-
կութիւնս 'ի Քս̃ Յս̃ 'ի
տէր մեր: Որում վայելէ
փառք իշխանութիւն և
պատիւ. այժմ և միշտ,
և յաւիտեանս յաւիտե-
նից: Ամէն:

Օրհնեալ տէր մեր Յս̃
Քս̃. Ամէն: Հայր մեր
որ յերկինս ես՝ սուրբ
եղիցի անուն:

# ԿԱՐԳԱՒՈՐՈՒ-
# ԹԻՒՆ

Հաստատելոյ աշտէից եկեղեցւոյ
ժամուն ։

ՕՐՀՆԵԱԼ ՀՈ-
գին սուրբ Ած ճշմարիտ.
ամէն ։

Սաղմոս . 50 ։

Ողորմեա՛ ինձ Ած ըստ
մեծի ողորմութեան քում,
ըստ բազում գթութեան

քում քաւեա զանօրէ-
նութիւնս իմ ։

Առաւել լուա զիս յանօ-
րէնութենէ իմմէ . և ՚ի
մեղաց իմոց սուրբ արա
զիս . Զանօրէնութիւնս իմ
ես ինքնին գիտեմ . և մեղք
իմ առաջի իմ են յամ
ժամ ։ Քեզ միայն մեղայ
տէր . և զչար առաջի քո
արարի ։

Որպէս արդար երեւեսցիս ՚ի
բանս քո . և յաղթես-
ցես ՚ի դատել քո ։

Անօրէնութեամբ յղա-
ցայ . և ՚ի մեղս ծնաւ զիս
մայր իմ .

Դու տէր զճշմարտութիւն սիրեցեր. զանյայտս և ըզ-ծածկեալս իմաստութեան քո յայտնեցեր ինձ ։

Ցօղեա՛ զիս մշտկաւ, և սուրբ եղէց . լուա՛, և քան զձիւն սպիտակ եղէց ։ Լսելի արա՛ ինձ տէր զցնծութիւն և զուրախութիւն . և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք ։ Դարձո՛ զերեսս քո 'ի մեղաց իմոց . և զա̃մ անօրէնութիւնս իմ քաւեա՛ յինէն ։

Զսիրտ սուրբ հաստա-

տեա յիս Ա՛ծ, և զհոգի ուղիղ նորոգեա 'ի փորի իմում։

Մի ընկեներ զիս յերեսաց քոց. և զհոգի քո սբ. մի հաներ յինէն։

Տուր ինձ ցնծութիւն փրկութեան. և հոգւով պետութեան քո հաստատեա զիս։

Ուսուցից անօրինաց ճանապարհս քո. և անպարիշտք առ քեզ դարձցին։

Փրկեա զիս յարենէ Ա՛ծ Ա՛ծ փրկութեան իմոյ.

ցնծասցէ լեզու իմ յար-
դարութեան քում :
Տէր եթէ զշրթունս իմ
բանաս, բերան իմ եր-
գեսցէ զօրհնութիւնս քո :
Թէ կամեցեալ էիր՝ պա-
տարագս մատուցանէաք .
բայց դու ընդ ողջակէզս
իսկ ոչ հաճեցար :
Պատարագ Այ հոգի խո-
նարհ . զսիրտ սուրբ և
զհոգի խոնարհ՝ Ած ոչ
արհամարհէ :
Բարի արա Տէր կամօք
քովք սիոնի, և շինեսցին
պարիսպք Երուսաղէմի :

Ցայնժամ հաճեսցիս ը[նդ] պատարագս արդարութ[եան]․ ուխտից պատարագս հանցեն 'ի սեղան քո զուարակս։

Փառք Հօր, այժմ և։

Նուագ երրորդ ճաշու աւուրն
զկնի ողորմեայն։

Օրհնեմք զքեզ հայր անսկիզբն՝ էից էակ 'ի յանգոյից․ բարձեր ձեռօք նիւթ 'ի հողոյ՝ և ստեղծեր զմարդ 'ի պատկեր քո․ գլուխն ոտից խոնարհեցաւ՝ զի զպա-

տուիրան քո մոռացաւ ·
դարձեալ ասեմք ըստ ա-
նառակին՝ Թէ հայր մեղայ
քեզ 'ի յերկինս ։

Երկնաւորայ անքննելի՝
եղեր մարդկան տեսանե-
լի· զգեցար պատկեր հո-
ղեղինի՝ պատկերդ հօր
անփոխելի· եղեր յերրորդ-
ժամ 'ի խաչին՝ վասն ա-
դամայ նախաստեղծին ·
ընդ աւազակին քում խա-
չակցին՝ արժանացո՛ զմեզ
դրախտին ։

Թագաւոր Թագաւորաց՝
առատաքուղխ հոգի շնոր-

հայ. ժողովելոցն ՚ի վեր-
նատանն՝ առաքելոցն եր-
կոտասանն. ՚ի հրոյ լեզուս
երևեցար՝ յոգիս նոցա վե-
րանստար. լո՛ւր յանուն
քո ժողովելոցս՝ էջ և
առ մեզ յերրորդ ժամուս։

## Մաղթանք։

Յամ ժամ աղաչանք
իմ այս են՝ ՚ի մեղաց ի-
մոց սուրբ արա՛ զիս Տր.
և յօտարէն պահեա՛ զծա-
ռայս քո մարդասէր Տր։
Եւ ես խաղաղութեան
զտէր աղաչեսցուք. ընկա՛լ
կեցո՛ և ողորմեա՛։

Օրհնութիւն և փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

Քարոզ։

Խնդրեսցուք հաւատով 'ի տեառնէ վասն ճանապարհորդաց հարց և եղբարց մերոց, որք ը̅ ծով և ընդ ցամաք գնասցեն. որպէս զի առաջնորդեսցէ նոցա, խաղաղութեամբ պահեսցէ, և տարեալ հասուսցէ յիւրաքանչիւր տեղիս տէր Ա̅ծ մեր։ Ա.

զի նա ինքն է առաջնորդ կենաց, և կոյս փրկութ՟ե. որ յաջողէ ծառայից իւրոց խաղաղութեամբ հաւատնիլ ՚ի նաւահանգիստն կենաց և փրկութեան։ Ամենակալ տէր Աստուած մեր կեցո՛։

## Աղօթք։

Առաջնորդեա՛ մեզ տէր Աստուած մեր, և ուսո՛ մեզ գնալ ՚ի Ճանապարհս քո արդարութեամբ. պահեա՛ ՚ի խաղաղութ՟ն զկեանս մեր, և զգնացս՝ ՚ի հա-

Ճոյս քո․ ժամանեցո՛ ըղ-
հոգւոր եւ զմարմնաւոր
ընթացս ծառայից քոց
անարատ Ճանապարհաւդ
յաւիտենական 'ի կեանսդ։
Շնորհօք միածնի քոյ տն
մերոյ եւ փրկչին Յսի Քսի,
որ եղեւ մեզ առաջնորդ
կենաց եւ յոյս փրկութեան։
Ընդ որում օրհնեալ ես
հայր ամենակալ հանդերձ
կենդանարար եւ ազատիչ
սուրբ հոգւովդ․ այժմ եւ։
Յիշեա՛ տէր զպաշտօնեայս
քո․ 200։
Բարեբար եւ բազումո-
ղորմ Ը․ ճ․

## Սաղմոս . 22 :

Տէր հովուեսցէ զիս . և
ինձ ինչ ոչ պակասեսցի։
'ի վայրի դալարւոջ անդ
բնակեցոյց զիս . և առ
ջուրս հանգստեան սնոյց
զիս ։

Դարձոյց զանձն իմ առ
իս, և առաջնորդեաց ինձ
'ի Ճանապարհս արդարու-
թեան վ՟ն անուան իւրոյ։
Թէպէտ և գնայցեմ ես 'ի
մէջ ստուերաց մահու,
ոչ երկեայց 'ի չարէ. զի
դու տէր ընդ իս ես ։

Ցուպ քո և գաւազան՝
նորա մխիթարեսցեն զիս։
Պատրաստ արարեր առա-
ջի իմ զսեղան, ակն յան-
դիման նեղչաց իմոց։ Օ-
ծեր իւղով զգլուխ իմ.
բաժակ քո որպէս անա-
պակ արբեցոյց զիս։
Ողորմութիւն քո տէր
զհետ իմ եկեսցէ զա̃մ
աւուրս կենաց իմոց, բնա-
կիլ ինձ ՚ի տան տեառն
ընդ երկայն աւուրս։
Ցո՛յց ինձ Ճանապարհ՝
յոր գնացից, զի առ քեզ
տ̃ր համբարձի զանձն իմ։

Փրկեա՛ զիս ՚ի թշնամեաց իմոց Տէր. զի զքեզ ապաւէն ինձ արարի։
Ուս՛ ինձ առնել զկամս քո, զի դու ես Ա̃Ծ իմ։
Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ ՚ի յերկիր ուղիղ։
Վասն անուան քո Տէր կեցուսցես զիս. արդարութեամբ քով հանցես ՚ի նեղութենէ զանձն իմ։ Ողորմութեամբ քով սատակեսցես զթշնամիս իմ, և կորուսցես զա̃մ նեղիչս անձին իմոյ. զի ես ծառայ

քո եմ։

փառք հօր և որդւոյ։

Քարոզ։

Եւ ևս խաղաղութեան զտէր աղա։ Գոհաբանելով աղաչեսցուք զբարերար հոգին Ած և խնդրեսցուք զողորմութիւն 'ի նմանէ. զի անցուսցէ 'ի մէնջ զցասումն պատուհասի յանցանաց մերոց բարերարութեամբն իւրով։ Ամենակալ տէր Ած մեր կեցո և ողորմեա։

Աղօթք ։

Մաղաղութեամբ քով Հոգւդ սուրբ Ա՛ծ ճշմարիտ՝ որ 'ի վեր ես քան զա՛մ միտս եւ զխորհուրդս, մխիթարեա զանձինս ծառայից քոց՝ ընդունելով զաղաչանս մեր. անցո՛ 'ի մէնջ զցասումն պատուհասի յանցանաց մերոց բարերարութեամբ քով։ Ներեա եւ լո՛ւր մեզ, քաւեա եւ թո՛ղ զմեղս մեր. արժանաւորեա գոհութեամբ փառաւորել ըզքեզ ընդ Հօր, եւ ընդ

որդւոյ միածնի. այժմ և
միշտ և յաւիտեանս յա-
ւիտենից. ամէն ։

Օրհնեալ տէր մեր Յի-
սուս Քրիստոս. ամէն ։
Հայր մեր որ յերկինս ես՝
սուրբ ։

# ԿԱՐԳԱՒՈՐՈՒ-
# ԹԻՒՆ

Հասարակաց աղօթից վեցե-
րորդի ժամուն ։

## ՕՐՀՆԵԱԼՀԱՅՐ

սուրբ ած ճշմարիտ ։
Ամէն ։

Սաղմոս . 50 ։

Ողորմեա ինձ Ած ըստ
մեծի ողորմութեան քում
ըստ բազում գթութեն
քում քաւեա զանօրէ-
նութիւնս իմ . Ան ։

## Մաղթանք :

Յամենայն ժամու աղաչանք իմ այս են, 'ի մեղաց իմոց սուրբ արա՛ :
Եւ ես խաղաղութեան զոհէր տաց :
Օրհնութիւն և փառք հօր և որդւոյ :

## Քարոզ :

Վասն հիւանդաց և այլ վշտացելոց աղաչեսցուք զփրկիչն մեր Քրս· զի ողորմեսցի ըստ մեծի ողորմութեան իւրում . և

բժշկեսցէ զախտս և ըզ-հիւանդութիւնս հոգւոց և մարմնոց ծառայից իւրոց . և կատարեալ առողջութեամբ հասուսցէ զամենեսեան 'ի մշտնջենաւոր և յանախտ կեանս: Որ առաքեցաւ 'ի հօրէ 'ի բժշկութիւն ազգի մարդկան՝ միածին որդին Այ . տէր մեր և փրկիչ Յս Քս , կեցո և ողորմեա :

Աղօթք :

Փարատեա զցաւս և

բժշկեաց զհիւանդութիւնս
՚ի ժողովրդենէ քումմէ
տէր Ք.Ծ մեր, և շնոր-
հեաց ամենեցուն զկատա-
րեալ առողջութիւն նշա-
նաւ ամենայաղթ խաչիւ
քով. որով բարձեր զտը-
կարութիւնս ազգի մարդ-
կան, և զատապարտեցեր
զթշնամին կենաց և փըր-
կութեան մերոյ: Դու ես
կեանք մեր և փրկութիւն,
բարերար և բազումողորմ՝
Ք.Ծ, որ միայն կարօղ ես
թողուլ զմեղս՝ և մեր-
ժել զախտս և զհիւան-

դութիւնս 'ի մէնջ. ո-
րում յայտնի են պէտ-
կարեաց մերոց. պարգե-
ւիչդ բարեաց՝ պարգեւեա՛
զառատ ողորմութիւն քո
'ի վերայ արարածոց քոց՝
ըստ իւրաքանչիւր պիտո-
յից, յորոց հանապազ
փառաւորեալ գովի ամե-
նասուրբ երրորդութիւ.
այժմ և։

Յիշեա՛ տէր զպաշտօնեայս
քո. 200։

Բարերար և բազումո-
ղորմ Ա՛ծ։

Սղմ. 50։

Երանի՛ որ խորհի զաղքատն եւ զտնանկն. յաւուր չարի փրկէ զնա Տէր։

Տէր փրկէ զնա եւ կեցուսցէ, երանելի արասցէ զնա ՚ի վերայ երկրի. եւ ոչ մատնէ զնա ՚ի ձեռս թշնամեաց իւրոց։

Տէր օգնական է նմա ՚ի մահիճս ցաւոց իւրոց. եւ զամենայն անկողինս նորա դարձուցանէ ՚ի հիւանդութենէ նորա։

Ես ասացի Տէր ողորմեա՛

ինձ. եւ բժշկեա՛ զանձն
իմ, ես մեղայ քեզ։

Որ բնակեալ է յօգնու-
թիւն բարձրելոյն, ՚ի հո-
վանեաւ ա͞յ յերկնից հան-
գիցէ։

Ասասցէ տեառն ընդու-
նօղ իմ ես դու. ապաւէն
իմ ա͞ծ՝ եւ ես յուսամ
՚ի նա։

Նա փրկեսցէ զիս յորո-
գայթէ որսողին. եւ ՚ի բա-
նիցն ՚ի խռովութենէ։
՚Ի թիկնամէջս իւր ըն-
կալցի զքեզ. եւ ՚ի հովանի
թեւոց նորա յուսասցիս։

Որպէս զէն շուրջ եղի-
ցի զքեւ Ճշմարտու̅ն նր̅.
Մ՛ի երկիցես դու յերկիւ-
ղէ գիշերի. եւ ոչ ՚ի նետէ՝
որ թռչի ՚ի տուէ ։

Յիրէ՝ որ շրջի ՚ի խաւա-
րի, ՚ի գայթակղութ̅է.
դիւէն ՚ի հասարակ ա-
ւուր ։

Անկցին ՚ի կողմանէ քում
մէ հազարք, եւ բիւրք ի̅
աջմէ քումմէ. եւ առ քեզ
ինչ ոչ մերձեսցին ։

Բայց միայն աչօք քովք
հայեսցիս դու. եւ զհա-
տուցումն մեղաւորաց տես

ցես. զի դու տէր յոյս իմ ես։

Զբարձրեալն արարեր քեզ ապաւէն. զի ոչ հասցեն առ քեզ չարք. և տանջանք մի մերձեսցին ՚ի յարկս քո.

Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո ՚ի պահել զքեզ յամենայն ճանապարհս քո։

՚Ի բազուկս իւրեանց ընկալցին զքեզ. զի մի երբէք հարցես զքարի զոտն քո։

՚Ի վերայ իժից՝ և քար-

բից գնասցես դու. և
առ ոտն կոխեսցես զա-
ռիւծն և զվիշապն :

Քանզի յիս յուսացաւ՝
և փրկեցից զնա, հովանի
եղէց նմա. զի ծանեաւ
զանուն իմ :

Կարդասցէ առ իս՝ և ես
լուայց նմա. և առ նմա
եղէց 'ի նեղութեան :

Փրկեցից՝ և փառաւոր ա-
րարից զնա. երկայն ա-
ւուրբք լցուցից. և ցու-
ցից նմա զփրկութիւն
իմ : Փառք հօր և'' :

Քարոզ:

Եւ ևս խաղաղութ՟ զՏէր
աղաչ:

Խնդրեսցուք հաւատով ՚ի Հօրէ վասն քաւութ՟ մեղաց, և թողութեան յանցանաց. փրկելոյ ըզմեզ ՚ի վշտաց և ՚ի նեղութեանց. խնամելոյ ՚ի վերայ մեր ողորմութ՟ և գթութեան տեառն Ա՟յ ամենակալին. կեցո՛ և ողորմ:

Աղօթք:

Հայր գթութեանց, և

ա̃ծ ա̃մ մխիթարութեանց՝
որ մխիթարես զմեզ յա̃մ
նեղութեան մերում. լո՛ւր
և այժմ ձայնի պաղա-
տանաց ծառայից քոց ըն-
դունելով զաղաչանս մեր.
անցո՛ ՚ի մէնջ զցասումն
պատուհասի յանցանաց
մերոց բարերարութ̃բ քով:
Ներեա՛ և լո՛ւր մեզ. քա-
ւեա՛ և թո՛ղ զմեղս մեր.
արժանաւորեա՛ գոհութ̃բ
փառաւորել զքեզ ընդ
որդւոյ, և ընդ սրբոյ
հոգւոյդ. այժմ:

Օրհնեալ տէր մեր Յ̃ս
Ք̃ս · Ամէն ։
Հայր մեր որ յերկինս ես՝
սուրբ եղիցի ։

# ԿԱՐԳԱՒՈՐՈՒ-ԹԻՒՆ

Հասարակաց աղօթից իննե-րորդին ժամուն :

## Օրհնեալ Որ-դիդ սուրբ Ա՟ծ Ճշմարիտ. Ամէն :

Սաղմոս . 50 :

Ողորմեա ինձ Ա՟ծ ըստ մեծի ողորմութեան քում. ըստ բազում գթութեան քում քաւեա զանօրէ-նութիւնս իմ. եւն :

## Սաղմոս :

Ցամենայն ժամու աղաչանք իմ այս են՝ 'ի մեղաց իմոց սուրբ արա: Եւ ես խաղաղութեան զոհէր ալա :

Օրհնութիւն եւ փառք հօր եւ :

## Քարոզ :

Աղաչեսցուք զկենսատու փրկիչն մեր Քս, որ կամաւոր խաչելութեամբն իւրով զարարածս փրկեաց. եւ հեզմամբ արեան իւրոյ զթողութի

շնորհեաց յուսացելոց իւրոց· ամենակալ տէր Ած:

## Աղօթք:

Ընկեալ առաջի քո բարերար և բազումողորմ Ած՝ և աղաչեմք ամ̅ սըրտիւք մերովք, և խնդրեմք զգթութիւն 'ի քէն. ո՜վ խոստացար ծառայից քոց և ասացեր. զամենայն զոր ինչ խնդրիցէք հաւատով յանուն որդւոյ 'ի հօրէ՝ տացի ձեզ: Շնորհեա՛ և այժմ հաւատացելոցս 'ի քեզ, և կատարեա՛ 'ի բա-

րի զկենդրոնացեալս մեր. զի ՚ի քեզ եմք ապաւինեալ. և քո առատ ողորմութեդ մխիթարեալ զմեզ ՚ի կեանս յայսոսիկ. և առաջնորդեալ հասանել յանձառ երկնից արքայութիւնդ. ՚ի փառաբանութիւն և ՚ի պատիւ ամենասուրբ երրորդութեան. այժմ:

Յիշեա՛ տէր զպաշտօնեայս քո:

Բարերար և բազումողորմ Ա.Ծ:

## Սաղմոս . 114 ։

Սիրեցի՝ զի լուիցէ Տէր զձայն աղօթից իմոց. զի խոնարհեցոյց զունկն իւր առ իս, և ես յաւուրս իմ կարդացի առ նա ։

Շրջեցան զինև եր-կունք մահու. և վիշտք դժոխոց գտին զիս ։

Զնեղութիւն և զանձ-կութիւն գտի. և զանուն տեառն կարդացի ։

Ո՜ Տէր՝ փրկեա զանձն իմ. ողորմած Ա՟ծ մեր ողորմի և պահէ զտղայս Տէր ։

Ես խոնարհ եղէ, և տէր
կեցոյց զիս ․ դա՛րձ անձն
իմ ՚ի հանգիստ քո, զի տէր
օգնեաց քեզ ։

Փրկեաց զանձն իմ ՚ի
մահուանէ․ զաչս իմ յար-
տասուաց․ և զոտս իմ ՚ի
գայթագղութենէ․ հաճոյ
եղէց առաջի տեառն յերկ-
րին կենդանեաց ։

Հաւատացի՝ զոր և խօսե-
ցայ, և ես խոնարհ եղէ
յոյժ ։

Ես ասացի ՚ի զարմանալ
իմում, թէ ա՟մ մարդ
սուտ է ։

Զինչ տաց տրիտուր տն̄ ը̄ ամենայնի, զոր և ետ ինձ։ Զբաժակ փրկութեան ընկալայց, և զանուն տն̄ կարդացից։

Զաղօթս իմ տն̄ տաց առաջի ամ̄ ժողովրդեան նորա։

Պատուական է առաջի տեառն մահ սրբոց իւրոց. ո՜ տէր՝ ես ծառայ քո եմ. ծառայ՝ և որդի աղախնոյ քո։

Խզեր զկապանս իմ, քեզ մատուցից պատարագս օրհնութեան. և

զանուն տ̃ն կարդացից:
Զաղօթս իմ տեառն տաց
առաջի ամ̃ ժողովրդեան
նորա՝ ՚ի գաւիթս տան
տեառն, և ՚ի մէջ քո
Երուսաղէմ:

Օրհնեցէք զտ̃ր ամ̃ ազգք • գովեցէք զնա ամ̃
ժողովուրդք:
Զօրասցի ողորմութիւն
նորա ՚ի վերայ մեր • և
ճշմարտութիւն տեառն
մնասցէ յաւիտեան:

## Մաղթանք:

Հոգւոյն հանգուցելոց

Քս Ած՝ արա՛ հանգիստ և ողորմութիւն. և մեզ մեղաւորացս շնորհեա՛ ընդ-թողութիւն յանցանաց։

Քարոզ։

Եւ ևս խաղաղութեան զտէր աղա։

Վասն հանգուցեալ հոգ-ւոյն աղաչեսցուք զփրկիչն մեր Քս, զի զնոսա ընդ արդարսն դասեսցէ. և զմեզ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ. ա-մենակալ տէր Ած մեր կեցո՛ և ող։ Տէր ողորմեա՛. գ։

## Աղօթք:

Ք̅ս որդի Ա̅Յ անոխակալ և բարեգութ՝ գթա՛ քո արարչական սիրովդ ՚ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց: Յիշեա՛ յաւուր մեծի գալստեան արքայութեան քոյ. արա՛ արժանի ողորմութեան՝ քաւութեան՝ և թողութեան մեղաց. դասաւորեալ պայծառացո՛ ընդ սուրբս քո յաջակողմեան դասուն: Զի դու ես տ̅ր և արարիչ ամենեցուն

ղատաւոր կենդանեաց և
մեռելոց։ Եւ քեզ վա-
յել է փառք իշխանութի՟ և
պատիւ. այժմ և միշտ։
Օրհնեալ տէր մեր Յս՟
Քս՟. ամէն։ Հայր մեր որ
յերկինս։

Զսաղմոսերգութիւնս և
զաղաչանս ընկալցի մար-
դասէրն Այ՟. մեր մեղաց
և յանցանացն թողութի՟
շնորհեսցէ. 'ի չարեաց փըր
կեսցէ. 'ի մեղաց պահես-
ցէ. և նմա փառք յաւի-
տեանս. Ամէն։

Ժամամուտ Յարութեան:

Որ յարեաւ 'ի մեռելոց• մահուամբ զմահ կոխեաց• և յարութիւն իւրով մեզ զկեանս պարգևեաց• նմա փառք յաւիտեանս• Ամէն:

Ժամամուտ Մարտիրոսաց:

'Ի տաճարի սրբոյ, և յիշատակի սրբոց մարտիրոսացդ՝ զձեռս համբառնալով աղաչեմք• բարեխօսութեամբ սոցա և աղօթիւք՝ զկենդանութիւ

մեր խաղաղացո՛ Ա՜Ծ՝ ո՜վ մարդասէր ։

## Ժամամուտ աղօթք ։

Որ ըստ ամենայնի զմտաս անցանես, զխաղաղութ՜ի քո Ա՜Ծ տուր մեզ հանապազ՝ զքեզ աղաչեմք։

## Սաղմոս Յարութեան ։

Գովեա՛ երուսաղէմ զՏ՜ր։ Եւ օրհնեա՛ զԱ՜Ծ քո Սիոն ։

Զի զօրացոյց զնիգս դրանց քոց. և օրհնեաց զորդիս քո 'ի քեզ ։ Փառք Հօր և Որդ" ։

## Շարական . աձ :

Յարեաւ Քրիստոս ՚ի մեռե-
լոց· ալէլուիայ:
Նկայք ժողովուրդք եր-
գեցէք տէրանն· ալէ :
Յարուցելոյն ՚ի մեռելոց·
ալէլուիայ :
Որ զաշխարհս լուսաւո-
րեաց · ալէլուիայ :

## Սաղմոս Մարգարէութեանց :

Սիրեցի՝ զի լուիցէ տէր
զձայն աղօթից իմոց· զի
խոնարհեցոյց զունկն իւր
առիս· և ես յաւուրս իմ

կարդայի առ նա ։
Շրջեցան զինև երկունք մահու. և վիշտք դժոխոց գտին զիս ։

Փառք Հօր և Որդ″ ։

Շարական . դկ ։

Զինաւորք ճշմարիտք և վկայք Քի. որք ըզ-չարչարանս և զմահ յան-ձըն առիք վասն տեառն. զձեզ ունիմք բարեխօս առ Քս վս անձանց մե-րոց ։
Քանզի հեղմամբ ար-

եան ձերոյ պայծառացան սուրբ եկեղեցիք. և զըստուերամած խաւար կռապաշտութեանն բարձիք. զձեզ:

Երկնային զօրքն իջեալ ՚ի պատիւ պատարագի մահուան ձերոյ. և զպըսակս անապականս առբերելով ՚ի հօրէ լուսոյ. զձեզ:

## Սաղմոս դաւթի:

Օրհնեցէք զտէր ամենայն ազգք. գովեցէք զնա ամենայն ժողովուրդք:

Զօրասցի ողորմութիւն
նորա 'ի վերայ մեր. և
ճշմարտութիւն տեառն
մնասցէ յաւիտեան:
փառք հօր և որդ″:

Առաջն. դկ:

փառաբանութիւն առա-
քեմք քեզ Հայր երկ-
նաւոր. յիշեա զննջե-
ցեալսն մեր՝ և հանգո ը̄
սուրբս քո:
Որ էակից ես Հօր և
Հոգւոյ՝ Որդիդ միածին.
յիշեա զննջե″:
Որ փառակից ես Հօր և
Որդւոյ՝ Հոգիդ ճշմա-
րիտ. յիշեա:

Սբ Ած․ սբ և հզօր․ սբ և անմահ․ և այլն ըստ պատշաճի․ գրեալ է ՚ի յօրհնութեան ժամուն․ գլտ և սսմ ։

Զկնի Գրոց և աւետարանին ասի Հանգանակն Նիկիական։

Հաւատամք ՚ի մի Ած ՚ի հայրն ամենակալ․ յարարիչն երկնի և երկրի․ երևելեաց և աներևութից ։ Եւ ՚ի մի տէր Յս Քս յորդին Այ․ ծնեալ յԱյ հօրէ միածին․ այսինքն յէութենէ հօր ։

Ա.Ծ յա̃յ. լոյս 'ի լուսոյ.
Ա.Ծ ճշմարիտ՝ յա̃յ ճըշ-
մարտէ, ծնունդ և ոչ
արարած ։ Նոյն ինքն 'ի
բնութենէ հօր. որով
ամենայն ինչ եղև յեր-
կինս և 'ի վերայ երկրի.
երևելիք և աներևոյթք ։
Որ յաղագս մեր մարդ-
կան և վասն մերոյ փըր-
կութեան՝ իջեալ 'ի յերկ-
նից մարմնացաւ՝ մարդա-
ցաւ՝ ծնաւ կատարելա-
պէս 'ի մարիամայ սրբոյ
կուսէն հոգւովն սրբով ։
Որով էառ մարմին՝

Հոգի և միտք· և զամե-
նայն՝ որ ինչ է 'ի մարդ·
Ճշմարտապէս և ոչ կար-
ծեօք: Չարչարեալ, խա-
չեալ, Թաղեալ· յերրորդ
աւուր յարուցեալ· ե-
լեալ 'ի յերկինս նովին
մարմնով՝ նստաւ ընդ աջ-
մէ Հօր: Գալոց է նովին
մարմնովն և փառօք Հօր
'ի դատել զկենդանիս և
զմեռեալս · որոյ Թագա-
ւորութեանն ոչ գոյ
վախճան: Հաւատամք և
'ի սուրբ Հոգին · յանեղն
և 'ի կատարեալն, որ խօ-

սեցաւ յօրէնս և 'ի մար-
գարէս և յաւետարանս ։
Որ էջն 'ի յորդանան․
քարոզեաց զառաքեալն՝ և
բնակեցաւ 'ի սուրբսն ։
Հաւատամք և 'ի մի միայն
ընդհանրական և յառա-
քելական եկեղեցի ։ 'ի
մի մկրտութիւն․ յապաշ-
խարութիւն․ 'ի քաւութի
և 'ի թողութիւն մեղաց․
'ի յարութիւն մեռելոց․
'ի դատաստանն յաւիտե-
նից․ հոգւոց և մարմնոց․
յարքայութիւնն երկնից,
և 'ի կեանսն յաւիտե-

Նականոն :

Իսկ որք ասեն՝ էր երբեմն յորժամ ոչ էր Որդի. կամ էր երբեմն յորժամ ոչ էր սուրբ Հոգի. կամ թէ՝ յոչէից եղեն կամ յայլմէ էութենէ ասեն լինել զորդին այ̃ և կամ զս̃բ Հոգին. և թէ՝ փոփոխելիք են կամ այլայլելիք, զայնպիսիսն նզովէ կաթուղիկէ և առաքելական սուրբ եկեղեցի:

'Ի Սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէն մերմէ ասացեալ։

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս. երկրպագանելով սրբոյ Երրորդութեանն և միոյ աստուածութեանն. Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և"։

Քարոզ։

Եւ ևս խաղաղութեան զՏէր։

Եւ ևս հաւատով աղաչեսցուք և խնդրեսցուք

՚ի տեառնէ Ա՟յ եւ ՚ի փրկ-
չէն մերմէ Յ՟սէ Ք՟սէ ՚ի
ժամուս պաշտաման եւ
աղօթից :

Զի արժանի ընդունե-
լութ՟ արասցէ· լուիցէ Տ՟ր
ձայնի աղաչանաց մերոց:
Ընկալցի զխնդրուածս
սրտից մերոց· Թողցէ ըզ-
յանցանս մեր· ողորմեսցի
՚ի վերայ մեր: Աղօթք մեր
եւ խնդրուածք յա՟մ ժամ
մտցեն առաջի մեծի տե-
րութ՟ ն՟ր : Եւ նա տացէ
մեզ միաբան միով հաւա-
տով արդարութ՟, վաստա-

կեալ ՚ի գործս բարեաց :
Զի զողորմութիւն զշնորհն
իւր՝ արասցէ ՚ի վերայ մեր
Տէրն ամենակալ. կեցուս-
ցէ և ողորմեսցի :
Զժամս և զառաջիկայ
օրս խաղաղու :
Զհրեշտակ խաղաղութեան :
Զքաւութիւն :
Զսրբոյ խաչին : Եւ ևս
միա : Զանձինս : Ողո :

Աղօթք :

Տէր մեր և փրկիչ Յիսուս
Քրիստոս. որ մեծդ ես ողոր-
մութեամբ և առատ պարգևօք

Բարերարութե՟ քո։ Որ դու քոյին կամաւդ ՚ի ժամուս յայսմիկ համբերեցեր չարչարանաց՝ խաչի և մահու յաղագս մեղաց մերոց։ Եւ պարգեւեցեր առաքելին զպարգեւս հոգւոյդ սրբոյ՝ երանելի առաքելոցն։ Հաղորդս արա և զմեզ տէր՝ աղաչեմք զքեզ՝ ա՟ծային պարգեւացդ, թողութե՟ մեղաց, և ընդունելութե՟ հոգւոյդ ս՟բյ։ Որ՟պ զի արժանաւորք եղիցուք գոհութե՟ փառաւորել զքեզ ը՟ հօր և ը՟ ս՟բյ հոգւոյդ. այժմ և։

Խաղաղութիւն ամենեցուն :

Խաղաղութբ քով Քս փրկիչ մեր. որ 'ի վեր է քան զամ միտս և զբանս. ամրացո՛ զմեզ և աներկիւղ պահեա յամ չարէ: Հաւասարեա՛ զմեզ ընդ ճշմարիտ երկրպագուսքո. որք հոգւով և ճշմարտութբ քեզ երկիրպագանեն: Վասն զի ամենասրբ երրորդութեդ վայելեն փառք՝ իշխանութիւն և պատիւ :

Օրհնեալ տէր մեր Յս

Քս՟. տէր Ա՟ծ օրհնեսցէ
զամենեսեանդ. ամէն ։
Հայր մեր որ յերկինս ես ։
Միայն սուրբ. միայն տր՟.
յս՟ քս՟ ՚ի փառս Ա՟յ
հօր. Ա՟մէն ։
Օրհնեալ Հայր սուրբ՝
Ա՟ծ ճշմարիտ. Ա՟մէն ։
Օրհնեալ Որդիդ սուրբ՝
Ա՟ծ ճշմարիտ. Ա՟մէն ։
Օրհնեալ Հոգիդ սուրբ՝
Ա՟ծ ճշմարիտ. Ա՟մէն ։
Օրհնութիւն և փառք
հօր և որդւոյ և հոգ-
ւոյն սրբոյ. այժմ և՛՛ ։
Հայր սուրբ ։ Որդիդ ս՟բ ։
Հոգիդ սուրբ ։

Օրհնութիւն Հօր և Որդւոյ և սրբոյ Հոգւոյն․ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից․ ամէն։ Եղիցի անուն Տեառն օրհնեալ․ յայսմհետէ մինչև յաւիտեան․ (Երիցս)։ Կատարումն օրինաց և մարգարէից դու ես Քրիստոս ա՟ծ փրկիչ մեր․ որ լցեր զա՟մ հայրական տնօրէնութիւնս քո․ լի՛ց և զմեզ հոգւովդ քով սրբով։ Օրհնեցից զՏէր յամենայն ժամ․ յամենայն ժամ օրհնութիւն նորա ՚ի բերան իմ՝ ։

## Օրհնութիւն Սեղանոյ:

Աչք ամենեցուն 'ի քեզ յուսան. և դու տաս կերակուր նոցա 'ի ժամու: Բարձր առնեմ զքեզ Ա̃ծ իմ և թագաւոր իմ. և օրհնեմ զանուն քո յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից:

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ:

### Աղօթք:

Օրհնեա Քս̃ Ա̃ծ մեր հոգևոր օրհնութեամբ

զկերակուրս և զըմպելիս
ծառայից քոց. և շնոր-
հեա առողջութիւն հոգ-
ւոյ և մարմնոյ: Որպէս
զի կրօնաւորական պար-
կեշտութեամբ վայել-
լով 'ի մարմնաւոր սե-
ղոյս՝ անանց բարեաց
և երկնից արքայութեան
հաղորդս լիցուք ընդ ա-
մենայն սուրբս քո: Եւ
գոհութեամբ փառաւո-
րեսցուք զքեզ ընդ Հօր
և ամենասուրբ Հոգւոյդ.
այժմ և՛:

Հայր մեր որ յերկինս՛՛:

Գոհութիւն յետ Սեղանոյ:

Տ̃Ր Յ̃ լցաք ՚ի բարութեանց քոց: Տայցուք գոհութիւն տ̃ն Ա̃յ մերոյ:

Աղօթք:

Օրհնեալ ես տէր Ա̃ծ մեր՝ որ կերակրես զմեզ ՚ի մանկութենէ. և տաս կերակուր ամենայն մսեղեաց. լցո՛ ուրախութ̃բ և բերկրութ̃բ զսիրտս մեր: Որպէս զի զամենայն

բաւականութիւն ունել-
ցիմք առաւելեալք 'ի
գործս բարութեան 'ի
Քս Յս 'ի տէր մեր: Որում
վայելէ փառք իշխանու-
թիւն և պատիւ. այժմ և":
Օրհնեալ տէր մեր Յս
Քս. ամէն. Հայր:
Զկերօղքս Ած օրհնես-
ցէ. սպասաւորացն և ե-
րախտաւորացն վարձս բա
րեաց պարգևեսցէ. և
օրհնեսցէ զմեզ: Քս Ած
որ զմեզ կերակրեաց և
լիացոյց, նմա փառք յաւի-
տեանս. ամէն:

Նուէհոյեան ձայն ։

Ես առ Տէր կարդացի. և նա լուաւ ինձ յերե-կոյս, 'ի վաղորդայն և 'ի հասարակ աւուր։ Ապաւէնի այժմ իմոյ, և ակն ունէի կենարարին. որ փրկէ զծառայս իւր և կեցուցանէ ։ Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ ։

Սաղմոս. 85 ։

Խոնարհեցո՛ տէր զունկն քո. և լո՛ւր ինձ, զի աղքատ, և տնանկ եմ ես ։

Պահեա զանձն իմ սուրբ Տէր. եւ փրկեա զծառայս քո ա̃ծ իմ, որ 'ի քեզ յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր՝ զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ. ուրախ արա զանձն ծառայի քո՝ զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Զի դու Տէր քաղցր եւ ուղիղ ես. բազում ողորմ առ ամենեսեան՝ որք կարդան առ քեզ: Ունկն դիր Տէր աղօթից իմոց. եւ նայեա 'ի ձայն խնդրուածաց իմոց:

Յաւուր նեղութեան իմոյ կարդայի առ քեզ. և լուար ինձ:

Ո՛չ ոք է նման քեզ յաստուածս տէր. և ո՛չ ոք է որպէս զգործս քո:

Զամենայն ազգս՝ զոր արարեր, եկեսցեն և երկիրպագցեն առաջի քո տէր. և փառաւոր արասցեն զանուն քո յաւիտեան:

Մեծ ես դու տէր. և առնես սքանչելիս. և դու միա՛յն ես Ա՟ծ:

Առաջնորդեա՛ ինձ ՚ի ճանապարհի քում. և գնա-

ցից ՚ի ճշմարտութեան
քում. և ուրախ եղիցի
սիրտ իմ յերկնչիլ յա-
նուանէ քումմէ ։

Խոստովան եղէց առ քեզ
տէր ա՟ծ իմ. բոլորով
սրտիւ իմով և փառա-
ւոր արարից զանուն քո
յաւիտեան ։

Մեծ եղև ՚ի վերայ իմ
ողորմութիւն քո տէր.
և փրկեցեր զանձն իմ
՚ի դժոխոց ներքնոց ։

Ա՟ծ անօրէնք յարեան ՚ի
վերայ իմ. և ժողովք
հզօրաց խնդրեցին զանձն

իմ. և ո՛չ համարեցան
զքեզ ած առաջի իւ.
րեանց։

Այլ դու տէր ած իմ,
գթած ես և ողորմած. եր.
կայնամիտ բազումողորմ,
և ճշմարիտ. նայեա՛ց
առ իս. և ողորմեա՛ ինձ։
Տո՛ւր զօրութիւն ծառա.
յի քո. կեցո՛ զորդի ա.
ղախնոյ քո. և արա՛ առ
իս նշան բարութեան։
Տեսցեն ատելիք իմ, և ա.
մաչեսցեն. զի դու տէր
օգնեցեր ինձ, և մխիթա.
րեցեր զիս։

Փառք Հօր և Որդւոյ և։

Մաղթանք :

Փառք քեզ ած՝ փառք
քեզ յաղագս ամենայնի·
տէր՝ փառք քեզ :
Եւ ես խաղաղութեան
զտէր աղաչեսցուք ընկալ
կեցո և ողորմեա :
Օրհնութիւն և փառք
Հօր և Որդւոյ և Հոգւոյն
Սրբոյ· այժմ և :

Սաղմոս · 139 :

Ապրեցո զիս տէր ՚ի
մարդոյ չարէ, յառնէ ա-
նիրաւէ փրկեա զիս :
Խորհեցան զանօրէնութի

՚ի սիրտս իւրեանց․ զօր
ամենայն պատրաստեցան
՚ի պատերազմ։

Սրեցին զլեզուս իւրեանց
որպէս զօձի․ և թոյնք ի-
ժից ՚ի ներքոյ շրթանց
նոցա ։

Պահեա՛ զիս տէր ՚ի ձե-
ռաց մեղաւորի․ և ՚ի
մարդոյ չարէ փրկեա՛ զիս։
խորհեցան խափանել զգը-
նացս իմ․ թաքուցին ամ-
բարտաւանք զորոգայթ
ինձ ։

Լարս ձգեցին որոգայթ
ոտից իմոց․ շուրջ զշաւ-

ղօք իմովք՝ եղին ինձ
ղգայթակղութիւն ։
Ասացի տէր Ա՟Ծ իմ ես
դու. ունկն դիր տէր ձայ-
նի աղօթից իմոց ։
Տէր տէր զօրութիւն
փրկութեան իմոյ. հովա-
նի գլխոյ իմոյ յաւուր
պատերազմի ։
Մի՛ մատներ զիս տէր ՚ի
ցանկութիւն մեղաւորաց.
Որք խորհեցան վասն իմ
ընդ վայր հարկանել զիս։
Զի մի՛ երբէք բարձ-
րասցին, և խորհուրդք
նոցա մի՛ կատարեսցին.

վախճան կատարածի նե
վաստակ շըլթանց իւր-
եանց ծածկեսցէ զնոսա:
Արկցես 'ի վերայ նոցա
զկայծակունս հրոյ. և կոր-
ծանեսցես զնոսա. 'ի տա-
ռապանաց մի՛ կարասցեն
կեալ:
Մարդոյ լեզուանւոյ մի՛
յաջողեսցի 'ի վերայ երկ-
րի. զայր մեղաւոր չարիք
իւր որսասցեն 'ի կորուստ:
Ծանեայ՝ զի առնես տէր
զդատաստանս աղքատի,
և զիրաւունս տնանկի:
Արդարքն գոհասցեն զա-

նուանէ քումմէ. և բնակեսցեն ուղիղք առաջի երեսաց քոց ։

Տէր կարդացի առ քեզ՝ և լո՛ւր ինձ. նայեա՛ց ՚ի ձայն աղօթից իմոց ՚ի կարդալ իմում առ քեզ ։ Ուղիղ եղիցին աղօթք իմ ոպ̃ խունկ առաջի քո տէր. համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյի ։ Դի՛ր տէր պահապան բերանոյ իմոյ. և դուռն ամուր շրթանց իմոց, զի մի՛ խոտորեսցի սիրտ իմ բանիւ չարութեան ։

'Ի պատճառել զպատ-
ճառս մեղաց՝ ը̅ մարդս՝
որք գործեն զանօրէնու-
թիւն. և ոչ եղէց կցորդ
ընտրելոց նոցա։

Խրատեսցէ զիս արդարն
ողորմութեամբ, և յան-
դիման արասցէ. իւղ մե-
ղաւորի մի՛ օծցէ զգլուխ
իմ. այլ աղօթք իմ 'ի
կամս նորա։

Արգելան մերձ առ վիմին
դատաւորք նոցա. լու-
ցեն բանից իմոց և քաղց-
րասցին։

Որպէս թանձրութիւն

հողոյ․ զի սփռեալ է 'ի վերայ երկրի․ ցրուեցին ոսկերք նորա մերձ 'ի դը-ժոխս ։

Առ քեզ տէր տէր են աչք իմ․ 'ի քեզ յուսա-ցայ․ մի՛ հաներ զհոգի յի-նէն ։

Պահեա՛ զիս յորոգայթէ, որ թագուցաւ ինձ 'ի գայթակղութենէ գործո-ղին զանօրէնութիւն ։

Անկցին 'ի ցանցս նորա մեղաւորք․ միայն եմ ես մինչեւ անցից ։

Ձայնիւ իմով ես առ տէր

կարդացի. ձայնիւ իմով
զտէր աղաչեցի։
Սփռեցից առաջին տեառն
զաղօթս իմ. և զնեղու-
թիւնս իմ առաջի նորա
պատմեցից։
’Ի նուաղել յինէն հոգ-
ւոյ իմոյ՝ դու տէր ծա-
նեար զշաւիղս իմ. ’ի ճա-
նապարհ՝ յոր և գնայի,
թագուցաւ ինձ որոգայթ։
Հայէի յաջմէ՝ տեսանէի,
և ոչ ոք ճանաչէր զիս.
կորեաւ յինէն փախուստ
իմ, և ոչ գտաւ խնդ-
րող անձին իմոյ։

Աղաղակեցի առ քեզ տէր՝
և ասացի, դու ես յոյս
և բաժին իմ յերկրին
կենդանեաց ։

Նայեա՛ց տէր յաղօթս իմ՝
զի ես խոնարհ եղէ յոյժ.
ապրեցո՛ զիս ՚ի հալած-
չաց իմոց՝ զի հզօրք եղեն
քան զիս ։

Տէր՝ հա՛ն ՚ի բանտէ զան-
ձըն իմ. գոհանամ զա-
նուանէ քումմէ ։

Ինձ քեզ սպասեն ար-
դարք, մինչև հատուսցես։
Փառք Հօր և Որդ"։

## Երգ Կերակամաէց:

Ալէլուիա. ալէլուիա:
Լոյս զուարթ սբ փա-
ռաց անմահի Հօր երկ-
նաւորի սրբոյ կենարարի
Յիսուս Քրիստոս:
Եկեալքս 'ի մտանել ա-
րեգական. տեսաք զլոյս ե-
րեկոյիս: Օրհնեմք զՀայր
և զՈրդի և զսուրբ Հո-
գին սմ. և ամենեքեան
ասեմք ամէն. Արժանա-
ւորեա՛ զմեզ յամենայն
ժամ օրհնել ձայնիւ եր-
գով զանուն փառաց ա.

մենասուրբ երրորդութե՟դ:
Որ տայ զկենդանութի՟ւ·
լասն որոյ և աշխարհս ըզ-
քեզ փառաւորէ :

## Մաղթանք :

Օրհնեալ տէր՝ որ բնակեալդ ես 'ի բարձունս· և օրհնեալ են փառք մեծութեան քո · որ հաստատեցեր զլուսաւորս 'ի բարձունս · 'ի յերկնից զլոյս ծագեցեր ընդ ամենայն տիեզերս · Արարեր զարեգակն լուսատու տունջեան · զլուսինն և

պաստեղս՝ լուսատու գի-
շերոյ, և զլոյս Ճրագի-
դուն ես լոյս գովելի, սբ̄
և առաջին լոյսն. 'ի քէն
փախնու խաւարն. և ըզ-
լոյս քո կենդանի տէր
ծագեա՛ 'ի սիրտս մեր։
Եւ մեք միաբան ասաս-
ցուք՝ օրհնեա՛լ է անուն
սուրբ փառաց քոյ. և
քեզ երգեմք զօրհնութի̄
և զփառս հօր և որդւոյ
և հոգւոյդ սրբոյ։

Քարոզ։

Հասեալքս 'ի ժամ ե-

րեկոյիս ամենեքեան համ
բառնալով զձեռս մեր
փառաւորեմք զքեզ Տէր
Ա̃ծ մեր. որ շնորհնեցեր
մեզ զտիւս խաղաղութ̃բ
անցուցանել, և հասանել
'ի ժամ երեկոյիս ։ Ար-
ժանաւորեա զմեզ Տէր
սուրբ սրտիւ, հրեշտակա-
յին երգով գոհաբանու-
թիւն մատուցանել ամ̃ն
ոյ ամենակալիդ. կեցո̃
և ողորմեա ։ Ողորմեայց
մեզ Տէր Ա̃ծ մեր ըստ
մեծի ողորմութեան քում,
ասասցուք ամենեքեան

միաբանութեամբ. տէր ողորմեա. ։

## Մաղթանք։

Անսխալքս ՚ի ժամ երեկոյիս ամենեքեան անդադար փառաւորեմք ըզՀայր և զՈրդի, և զՍուրբ Հոգին. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

## Մեղեդի Յարութեան։

Տէր կարող և հզօր. տէր կարող ՚ի պատերազմի։ Տեառն է երկիր լրիւ իւ-

րով. աշխարհ և ամե-
նայն բնակիչք նորա ։

Մեղեդի Մարգարէութեանց ։

Եղիցի ողորմութիւն քո
տէր 'ի վերայ մեր, որպէս
յուսացաք 'ի քեզ ։
Ցնծացէք արդարք 'ի
տէր. ուղղոց վայել է օրհ-
նութիւն ։

Մեղեդի Պահոց ։

Տէր լոյս է ինձ 'ի կար-
դալ իմում առ նա ։
'Ի կարդալ իմում լո-
ւաւ ինձ Աձ ըստ արդա-
րութեան իմոյ ։

Ուղիղ եղիցին աղօթք իմ։ Որպէս խունկ առաջի քո տէր։ Համբարձումն ձե-ռաց իմոց։ Պատարագ ե-րեկոյի ։

Քարոզ 'ի տօնի սրբոց, և Պահոց ։

Եւ ևս խաղաղութեան զտէր աղա″ ։

Աղաչեսցուք զամենակալն ած՝ զՀայր տեառն մերոյ Յի Քի զԹագաւորն խաղաղութեան յաղագս խաղաղութեան. և վասն միայնոյ սուրբ՝ կաթողիկէ

և առաքելական եկեղեցւոյ : Զի զբազում ամս խաղաղութեամբ տացէ մեզ տէր ա̃ծ մեր . և զթագաւորս խաղաղարարս առաքեսցէ առ մեզ . վասն մեծի՝ սուրբ՝ և ահաւոր անուան իւրոյ : Զպիտս գաւառաց, ըզզօրավարս, զզօրագլուխս, զժողովուրդս, զմուտս և զելս մեր խաղաղութ̃բ պահեսցէ . և զամենայն պատերազմունս թշնամւոյն խորտակեսցէ 'ի մէնջ . տէրն ամենակալն կեցուս-

ցէ և ողորմեսցի։ Զե-
րեկս մերձեալ, և զառա-
ջիկայ գիշերս խաղաղութ
անցուցանել։ Զ հրեշ-
տակ։ Զ քաւ։ Զ սրբոյ՝
Եւ ևս միա։ Զ անձինս։
Ողորմեայ։

Աղօթք։

Լուր ձայնից մերոց Տէր
ած մեր. ընկալ զաղա-
չանս մեր, զհամբարձումն
ձեռաց մերոց և զբանս
աղօթից. սրբելով զերե-
կոյս պատարագս մեր ՚ի
հոտ անուշից՝ ՚ի հաճոյս
քեզ պատրաստել. Ցա-

ւե՛լ ՚ի մեզ տէր ամենա-
կալ զհաւատ, զյոյս, ըղ-
սէր, և զամենայն գործս
առաքինութեան: Որպէս
զի ըստ կամաց քոյ բա-
րեսիրաց միշտ կրօնա-
ւորեալք բարեպաշտութ̄
՚ի տուէ և ՚ի գիշերի.
և արժանաւորք եղիցուք
Յաղագս անձանց մերոց
փրկութեան և վասն հո-
գւոր կենացդ աղաչել
զքեզ տէր. և գտանել ՚ի
քէն զշնորհս և զողոր-
մութիւն. և գոհանա-
լով փառաւորեսցուք ըղ-

Հայր և զորդի և զսուրբ Հոգին. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

Սբ Աստուած. Սբ և Հզօր. և այլն. Գրեալ է՛ ՚ի յօրհնութեան ժամուն. Գի՛տ և այլն՛։

Փրկեա զմեզ ՚ի փորձութենէ, և յամենայն վտանգից մերոց։

Քարոզ։

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։

Վասն լսելի լինելոյ տն ամ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութբ սբ ածածնին. և իջանելոյ

՚ի վերայ մեր ողորմութեն
եւ գթութեան տն Այ •
ամենակալ տէր ած մեր՝
կեցո՛ եւ ողորմեա՛ : Օրհ-
նութիւն եւ փառք հօր
եւ որդւոյ եւ հոգւոյն" :

## Սաղմոս :

Համբարձի զաչս իմ ՚ի
լերինս՝ ուստի եկեսցէ
ինձ օգնութիւն :
Օգնութիւն ինձ ՚ի տնէ
եկեսցէ, որ արար զերկինս
եւ զերկիր :
Մի տար ՚ի սասանութի
զոտն քո • եւ մի նինջես-
ցէ պահապան քո :

Որպէս ո՛չ ննջէ, և ո՛չ ՚ի
քուն երթայ պահապանն
Իսրայէլի ։
Տէր պահեսցէ զքեզ. և
տէր ընկալցի աջոյ ձե-
ռամբն իւրով ։
Արեգակն ՚ի տուէ քեզ
մի՛ մեղիցէ. և մի՛ լուսինն
՚ի գիշերի ։
Տէր պահեսցէ զքեզ յա̃մ
չարէ. պահեսցէ տէր զան-
ձըն քո ։
Տէր պահեսցէ զմուտ և
զել քո յայսմհետէ մին-
չև յաւիտեան ։ Փառք ։

Շարական Վերակացուաց ․
ա ձ ։

Սուրբ ես տէր զօրու-
թեանց՝ որ բնակեալդ ես
՚ի յերկինս, և բարեբա-
նիս ՚ի սրբոց քոց ․
Երկնային զօրութիւնք՝
սերովբէք և քերովբէք
անդադար օրհնեն սուրբ
զանունդ քո ։
Քահանայք ընդ նոսին՝
պաշտօնեայք և ժողո-
վուրդք երկրպագեսցուք
տէրութեանդ քո ։
Լոյսդ՝ որ յառաջ քան

զյաւիտեանս 'ի հօրէ ա-
ռաքեցար, և լուսով ի-
մանալեաւ լցեր զարա-
րածս. օրհնեալ ես Թա-
գաւոր յաւիտենից։

Որ զլոյսն 'ի սկզբանէ
հաստատեցեր վերստին.
և զխաւարն անգիտութե̅ն
յարութեամբդ քո հա-
լածեցեր. օրհնեալ ես։
Ուստի և մեք լուսաւո-
րեալքս ընդ լուսեղէն զը-
ւարթնոցն երգեսցուք
ցնծութեամբ 'ի յարութե̅
երեկոյիս. օրհնեալ ես
Թա։

Երկնաքաղաքացին յով-
հաննէս մեծն ՚ի ծնուն-
դըս կանանց՝ քարոզէր
յանապատի ազդ արարող
բարբառումն զծագումն
լուսոյ արեգականն ար-
դարութեան։

Ճշմարիտ մարգարէ, և
ձեռնադրօղ որդւոյն ԱՅ,
յառաջընթաց կա՛յրա-
պետ, և պատմօղ ածային
օրինացն. հորդէր ճա-
նապարհ թագաւորին յա-
ւիտենից։

Յանօրէն գինարբուսն
մոլեգնեալ հերովդիադայ

'ի պարգևի մաւրն խընդ-
րէր զգլուխ մարգարէին,
շիջուցանել զարուսեակն,
և զանաղօտ լապտերն։
Սրբուհւոյ ածածնին բա-
րեխօսութբ պարգևեա եր-
կըրպագուացս ամենաբ
երկրորդութդ՝ զյարութի
յուսոյ կենայն յաւիտե-
նից։

Զ հաւատացեալ ժողո-
վուրդս մր երկրորդութն,
և զապաւինեալս 'ի խո-
րան փառաց քոց պահեա
անխռով 'ի խաղաղութե։

## Քարոզ.

Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի՝ և հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ զտէր աղաչեսցուք. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ.

Տէր ողորմեա. Գ̅.

## Աղօթք.

Հայր գթած՝ բարեխնամօղ՝ արարիչ ամ̅ արարածոց. ընկա՛լ զպաղատանըս ծառայից քոց ՚ի ժամ երեկոյիս. որ առատդ ես

առ ամենեսեան՝ պարգեւօք
բարերարութե̃ քո. ողոր-
մեա՛ տէր ա̃ծ աշխարհի,
եւ եկեղեցւոյ քում սբ̃յ.
հիւանդաց՝ վշտացելոց՝
ճանապարհորդաց՝ նա-
ւորդաց՝ խոստովանողաց՝
ապաշխարողաց՝ եւ հոգ-
ւոցն հանգուցելոց :
Զի դու ե̃ս ամենակալ
գիտես զպէտս մեր՝ եւ զկա-
րիս՝ առաւել քան զոր
խնդրեմք եւ իմանամք. եւ
քեզ հ̃ր որդւոյ եւ ամենասբ̃յ
հոգւոյդ վայելէ փառք
իշխանութի̃ւ եւ պատիւ.
այժմ եւ միշտ եւ:

Որ բնակեալ է յօգ-
նութ՟ե բարձրելոյն. և՛այլն
տես յերես 294 ։

Առ քեզ տ՟ր համբարձի
զաչս իմ , որ բնակեալդ
ես 'ի յերկինս։

Ո՟պ աչք ծառայի 'ի ձեռն
տ՟ն իւրոյ. և ո՟պ աչք ա-
ղախնոյ 'ի ձեռն տիկնոջ
իւրոյ ։

Այնպէս են աչք մեր առ
քեզ տ՟ր ա՟ծ մեր, մինչև
ողորմեսցիս 'ի վ՟ր մեր։

Ողորմեաց մեզ տ՟ր՝ ողոր-

մեա՛յց մեզ, զի բազում լցաք արհամարհանօք։ Յոյժ առաւել լցան անձինք մեր նախատանօք, որք նախատէին զմեզ. և արհամարհանօք ամբարտաւանից։

Աճ̅ յանուան քում կեցո՛ զիս. և ՚ի զօրութե̅ քում իրաւ արա ինձ։

Աճ̅ լո՛ւր աղօթից իմոց. ունկն դիր բանից բերանոյ իմոյ։

Օտարք յարեան ՚ի վր̅ իմ. և հզօրք խնդրեցին զանձն իմ. և ո՛չ համա-

ըեցան զքեզ ած առաջի իւրեանց ։

Աստ ած օգնական իմ. և տէր ընդունօղ հոգւոյ իմոյ ։

'ի դարձուցանել զչարն 'ի թշնամիսն իմ, ճշմարտութ. քով սատակեա զնս։

Ես կամօք իմովք պատարագս մատուցից քեզ. և խոստովան եղէց անուան քում տր՝ զի բարի է ։

Ցմ նեղուէ իմմէ փրկեցեր զիս. և 'ի թշնամիսն իմ ետես ակն իմ ։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն:

## Մաղթանս:

Զբարձրեալն զՔ͞ս ա-
րասցուք մեզ ապաւէն,
զի ոչ հասցեն առ մեզ
չարք. և տանջանք մի՛ մեր-
ձեսցին ՚ի յարկս մեր:

## Քարոզ:

Եւ մեք միաբան զողոր-
մութ͞ի ՚ի տ͞նէ խնդրելով,
ասասցուք ամենեքեան
միաբանութեամբ. տէր
ողորմեա. Գ͞:

## Աղօթք։

Յոյս կենաց՝ ընդունող աղօթից քաւիչ մեղաց՝ և կատարիչ խնդրուածաց Քս̃ Ա̃ծ մեր. ընկալ զպաղատանս մեր 'ի ժամ երեկոյիս՝ բարեխօսութ̃բ ս̃բ ա̃ծածնին, և աղաչանօք ա̃մ սր̃բց քոց։ Լուր մեզ տ̃ր և ողորմեա, ներեա քաւեա և թող զմեղս մեր. արժանաւորեա գոհութ̃բ փառաւորել զքեզ ը̃ հօր, և ը̃ ս̃բյ հոգւոյդ։

Յիշեա՛ տէր զպաշտօնէայս։
Բարերար և բազումո-
ղորմ ած։
Հայր մեր որ յերկինս։

Փոխ կէ-բահասաւից։

Ահա օրհնեցէք զտր ամ ծա-
ռայք տն զտր. որ կայք ՚ի
տան տն, և ՚ի գաւիթս
այ մերոյ։
՚ի գիշերի համբարձէք
զձեռս ձեր ՚ի սրբութի. և
օրհնեցէք զտէր։
Օրհնեսցէ զմեզ տէր ՚ի
սիոնէ. որ արար զերկինս
և զերկիր։

Խոստովան եղէց քեզ տ̅ր
բոլորով սրտիւ իմով. ա-
ռաջի հրեշտակաց սաղմոս
ասացից քեզ ։

Զի լուար զբանս բե-
րանոյ իմոյ. երկիրպագից
'ի տաճար սբ̅ քո. և խոս-
տովան եղէց անուան քում
վասն ողորմութ̅ե. և ճշ-
մարտութ̅ե քո ։

Մեծ արարեր յա̅մի զա-
նուն սբ̅ քո. յորում ա-
ւուր կարդամ առ քեզ՝
վաղվաղակի լուր ինձ. և
բազում արասցես զզօ-
րութ̅իս յանձն իմ ։

Խոստովան եղիցին առ
քեզ տր՟ ամ թագաւորք երկ-
րի. զի լուան զբանս բե-
րանոյ քո, և օրհնեսցեն
զճանապարհս քո։
Մեծ են փառք տն՟. բար-
ձր է տր՟՝ զխոնարհս տե-
սանէ, և զբարձունս ՚ի
հեռաստանէ ճանաչէ։
Թէպէտ և գնացից ես
՚ի մէջ նեղութեց, կեցու-
ցես զիս ՚ի բարկութէ
թշնամւոյն։
Ձգեցեր զձեռն քո. և
փրկեաց զիս աջ քո, և
Տէր հատուսցէ ընդ իմ.

Տէր ողորմութիւն քո յաւիտեան. զգործս ձեռաց քոց մի անտես առներ։

Աստուած յանուան քում կեցո զիս. և ՚ի զօրութեան քում. և այլն, որպէս ՚ի վերոյ.

## Քարոզ։

Խնդրեսցուք հաւատով միաբանութեամբ ՚ի տեառնէ՝ զի զողորմութեան զշնորհս իւր արասցէ ՚ի վերայ մեր. տէրն ամենակալ կեցուսցէ և ողորմեսցի։

Կեցո տէր. Տէր ողորմեա. գ։

## Աղօթք:

Թագաւոր խաղաղութե՟ օգնական և փրկիչ անձանց մերոց՝ Ք՟ս Ա՟ծ մեր: Պարսպեաւ պահեա զժողովուրդս քո ը՟ հովանեաւ ս՟բ և պատուական խաչի քո ՚ի խաղաղութե՟: Փրկեա յերևելի և յաներևոյթ թշնամւոյն: Արժանաւորեա գոհութ՟ փառաւորել զքեզ ը՟ հօր և ը՟ ս՟բյ հոգւոյդ. այժմ:

Խաղաղական ձայն:

Սաղմոս. ՁԴ:

Տէր ած փրկութեան իմոյ, 'ի տուէ կարդացի. և 'ի գիշերի առաջի քո: Մտցեն աղօթք իմ առաջի քո տէր. խոնարհեսցի ունկն քո 'ի խնդրուածս իմ:

Փառք Հօր և Որդւոյ և:
Եւ ևս խաղաղութեամբ զտէր:
Օրհնութիւն և փառք Հօր:

Սաղմոս. Դ:

Ի կարդալ իմում լուաւ ինձ ած. Ա արդարութեան

՚ի նեղութեան ինձ անդորր արարեր. ողորմեա ինձ, և լուր աղօթից իմոց: Որդիք մարդկան՝ մինչև յե՞րբ էք խստասիրտք. ընդէ՞ր սիրէք զնանրութիւն, և խնդրէք զստութիւն. ևն.

## Սղմ:

Շնորհեա մեզ տէր, ՚ի գիշերի զերկնային զխաղաղութիւն քո. և պահեա զմեզ ՚ի պատրանաց թշնամւոյն՝ ամենայաղթ զօրութեամբ սրբոյ խաչի քո: Տէր Աստուած փրկութեան իմոյ ՚ի տուէ

կարդացի, և գիշերի ա-
ռաջի քո։ Մտցեն աղօթք
իմ առաջի քո տէր. խո-
նարհեսցի ունկն քո ՚ի
խնդրուածս իմ ։ Նկեսցէ
ցէ առ մեզ տէր պահա-
պան ՚ի քէն, որ պահես-
ցէ զմեզ յա̃մ ժամ։ Ա-
ռաքեա ՚ի մեզ տէր զզօ-
րութի̃ սր̃յ խաչին, որ պա-
հեսցէ զմեզ յա̃մ ժամ.
Արժանի արա տէր զե-
րեկս զայս խաղաղութ̃, և
առանց փորձութե̃ անցո՛
զմեօք ։ Արժանաւորեա
տէր զգիշերս զայս խաղա-

ղութ , և առանց մեղաց պահելով զմեզ : Ընդ մեզ տէր ա̃ծ՝ գիտասջիք հեթանոսք, և պարտե-ցարուք · զի ա̃ծ ը̄ մեզ է: Եւ լուարո՛ւք զայս ՚ի ծագաց մինչև ՚ի ծագս երկրի · զի: Եւ հզօրացեալ-քըդ պարտեցարուք · զի: Եւ զի թէպէտ և դար-ձեալ զօրանայք՝ դար-ձեալ ՚ի պարտութի̄ մատ-նեսջիք · զի: Եւ զխոր-հուրդն զոր խորհիք, խա-փանէ տէր · զի: Եւ զբանն զոր խօսիք, մի՛ մնասցէ առ

ձեզ. զի: Նու քանզի յեր-
կիւղէ ձերմէ մեք ոչ եր-
կիցուք՝ և ոչ խռովիցուք.
զի: Նու զտէր ած մեր փա-
ռաւոր արասցուք. և նա
եղիցի մեզ յերկիւղ. զի:
Նու յուսացեալ եղիցուք
մեք 'ի նա, և նա եղիցի
մեզ 'ի փրկութի. զի: Նու
ահա՛ւասիկ ես, և ման-
կունք իմ, զոր ետ ինձ
ած. զի: Նու ժողովուրդ՝
որ նստէր 'ի խաւարի ե-
տես լոյս մեծ. զի: Նու
որ բնակեալդ էք 'ի խա-

ւարի և 'ի ստուերս մա-
հու, լոյս ծագեսցի առ
ձեզ. գլ։ Տ՜ւ քանզի մա-
նուկ ծնաւ, որդի և տու-
աւ մեզ. գլ։ Տ՜ւ որոյ
իշխանութ՜ի իւր 'ի վ՜ր ու-
սոյ իւրոյ. գլ։ Տ՜ւ որ
կոչի անուն նորա մեծի
խորհրդոյ հրեշտակ. գլ։
Տ՜ւ սքանչելի խորհրդա-
կից. գլ։ Տ՜ւ ա՜ծ հզօր
իշխան. գլ։ Տ՜ւ իշխան
խաղաղութ՜ե հայր հանդեր-
ձելոյ յաւիտենին. տ՜ր ա՜ծ
ը՜ն մեզ է։ Տ՜ւ փառք հօր
և որդւոյ և հոգւոյն ս՜բ,

այժմ և միշտ, և յաւի-
տեանս յաւիտենից. ամէն։

## Մաղթանք։

Դու մերձենալ երեկոյիս
համբառնամք զձեռս մեր
'ի սրբութիւն. զոր ինչ մե-
ղաք այսօր խորհրդով՝ բա-
նիւ, կամ գործով. 'ի յան-
կողինս մեր զղջանալով,
խոստովան եղիցուք զգաղ-
տնիս սրտից մերոյ ծած-
կագիտիդ տէր. յուսալով
յողորմութիւն քո։ Եւ մեք
միաբան կոչեսցուք. Յի-
շեա՛ զմեզ տէր՝ յորժամ

գաս արքայութ̃դ քով, և
ողորմեայ մեզ։

Քարոզ։

Եւ ևս խաղաղութեան
զտէր աղա։

Գոհացարուք զտ̃նէ, որ իւրով ողորմութ̃ն առաջնորդեաց մեզ ՚ի գործս տունջեան. և շնորհեաց մեզ միաբան գալ հասանել ՚ի հանգիստ գիշերիս։ Եւ մեք յա̃մ ժամ աղաչեսցուք զմարդասէրն ա̃ծ լինել պահապան անձանց մերոց. և նա իւ-

բով ողորմութ՟ն պահեսցէ
զմեզ · և առաջնորդեալ
հասուսցէ յիւր բարութ՟
հանգիստն , զոր խոստա-
ցաւ սիրելեաց իւրոց
Ճշմարիտն ա՟ծ յ՟ս ք՟ս ·
տ՟րն ամենակալն կեցուսցէ
և ողորմեսցի ։

Զհանգիստ գիշերիս խա
ղաղութեամբ ։

Զհրեշտակ խաղաղութ՟ն ։

Զքաւութիւն ։

Զսրբոյ խաչին ։ Նու ևս
միաբան ։

Զանձինս մեր ։ Ողոր-
մեա՛ց մեզ ։

## Աղօթք:

Տէր բարերար, որ մեծաւ գթութբ քով պատրաստեցեր զյաւիտենական հանգիստն առաքինութբ աշխատելոյն. և կոչեցեր առ քեզ քաղցր ձայնիւ զծանրաբեռնեալս և զտաժանեալսն մեղօք հանգիստ նշ խոստանալով: Շնորհեա՛ և մեզ տէր՝ անխռով խաղաղութբ զգիշերս անցուցանել. և 'ի ծանրութէ մեղաց զաշխատեալքս ապահովեա՛ ողորմութբ քով. և արժա-

նաւորեալ միշտնջենաւոր հանգստեանն ի մեր սիրտ քո։ Եւ գոհանալով փառաւորեսցուք զքեզ ընդ հօր. և ամենասուրբ հոգւոյդ. այժմ և ։ .

## Խաղաղականին աղօթքն ։

Պարգևատու բարեաց, և աղբիւր խաղաղութեան տէր ա՟ծ մեր՝ յա՟մ սատանայական խռովութեանց խաղաղացո զմիտս մեր, և ընդ խորհուրդս՝ ՚ի գիշերի յայսմիկ, և յա՟մ ժամանակի։ Ո՟ր զի առաջնորդ

դեալք յանցաւոր կենցաղոյս՝ ժամանեսցուք յաւիտենական երկնից արքայութեան քո. զոր պատրաստեցեր ՚ի սկզբանէ աշխարհի սրբոց քոց: Եւ ընդ նոսին գոհանալով փառաւորեսցուք զհայր, և զորդի, և զսուրբ հոգին. այժմ և:

## Սաղմոս. 111:

Տէր լոյս իմ՝ և կեանք իմ, ես յումմէ՞ երկեայց. տէր ապաւէն կենաց իմոց, ես յումմէ՞ դողացայց:

'ի մերձենալ առիս չարաց ուտել զմարմին իմ. նեղիչք իմ, և թշնամիք իմ նոքա տկարացան և անկան :

Թէ պատրաստեսցի 'ի վ̄ր իմ պատերազմ, ոչ երկիցէ սիրտ իմ. թէ յարիցէ 'ի վ̄ր իմ Ճակատամարտ՝ սակայն և այսուիկ 'ի քեզ տէր յուսացայ:

Զմի խնդրեցի 'ի տ̄նէ, և զսոյն աղաչեմ, բնակել ինձ 'ի տան տ̄ն զա̄մ աւուրս կենաց իմոց :

Տեսանել ինձ զվայելչու̄թ

տն, և հրաման տալ 'ի
տաճարի նորա ։

Ծածկեաց զիս 'ի խորա-
նի իւրում յաւուր չարի·
ընդ յարկաւ արար զիս 'ի
ծածկութ խորանի իւրում։
'Ի վիմի բարձր արարեր
զիս· և այժմ բա՛րձր արա
զգլուխ իմ 'ի վր թշնա-
մեաց իմոց ։

Շուրջ եկեց և մատու-
ցից 'ի խորանի նր պա-
տարագ օրհնութե· օրհնե-
ցից, և սաղմոս ասացից
տեառն ։

Լո՛ւր տէր ձայնի իմում·

զի կարդացի առ քեզ. ո-
ղորմեա ինձ, և լուր ինձ.
քեզ ասաց սիրտ իմ.
և խնդրեցին երեսք իմ.
զերեսս քո Տէր խնդրեցից։
Մի դարձուցաներ զերեսս
քո յինէն. և մի խոտո-
րեր բարկութեամբ ՚ի ծառայէ
քումմէ ։

Օգնական իմ լեր Տէր.
մի անարգեր զիս. և մի
թողուր զիս Աստուած փրկիչ իմ։
Հայր իմ, և մայր իմ
թողին զիս. և Տէր իմ
ընկալաւ զիս ։

Օրէնսդիր արա զիս Տէր

՚ի Ճանապարհի քում. և
առաջնորդեա՛ ինձ ՚ի շա-
ւիղս քո ուղիղս ։

Վս՟ Թշնամեաց իմոց մի՛
մատներ զիս ՚ի ձեռս նեղ-
չաց իմոց։

Ցարեան ՚ի վ՟ր իմ վկայք
մեղաց. և ստեցին ինձ յա-
նօրէնութե՟ն իւրեանց ։

Հաւատայի տեսանել զ-
բարութե՟ տեառն յերկրի՟ն
կենդանեաց. համբե՛ր տ՟ն
և քաջալերեաց. զօրա-
ցի՛ սիրտ քո, և համբե՛ր
տեառն ։

Փառք հօր և որդւոյ և ։

Երգ պէտաան Ներսէսի ։

Նայեա՛ց սիրով հայրդ գթած՝ 'ի քո ստեղծեալ գործս ձեռաց. և զբանակս հրեշտակաց՝ տո՛ւր պահապան մեզ տկարացս. փրկեա՛ զանձինս 'ի փորձանաց՝ 'ի խաւարի շրջօղ դիւաց. զի 'ի տունջեան և գիշերի՝ տացուք քեզ փառս անլռելի ։

Լին անեղ անսկզբան՝ ծնունդ անճառ որդի և բան . որ արարեր զտիւ գործոյ՝ և զգիշեր 'ի հանգիստ քնոյ. տո՛ւր 'ի նըն-ջել աչաց մարմնոյ՝ ար-

Թուն լինել մեզ ըստ
հոգւոյ. զի 'ի ։

Բաբուն հոգւոց բանա-
ւորաց՝ աղբիւր լուսոյ
բաշխող շնորհաց. 'ի փա-
կել դրանց բնութեց մար-
մնոյ՝ լոյս տուր աչաց
սրտից մերոյ. 'ի գիշե-
րաց առ քեզ կանխել՝ ը̅
հրեղինայն օրհնաբանել.
զի 'ի" ։

Սուրբդ սրբոց երրոր-
դութի՝ զմեզ մաքրեա քեզ
բնակութի. շնորհեա ընդ
մանկանցն առագաստի՝
հանգչել ընդ քեզ 'ի յան-

կողնի․ տուր զհայցուած բարեկամին՝ զփոխ երից նկանակին․ զի ։

Երևելի լոյս ստեղծիր՝ զտիւ և զգիշեր բաժանեցեր․ ծագեա՛ մեզ տէր ՚ի գիշերի՝ զճառագայթս իմանալի․ տուր յամ ժամանակի՝ զպահպանող աջ քո հովանի․ գի ։

Սիրով քո հուր արկեալ յերկիր՝ բորբոքեսցի ՚ի հոգիս մեր․ զխորհուրդ սրտից մեր մաքրեսցէ՝ զլոյս գիտուն քո փայլեսցէ․ ՚ի քնոյ մահու զմեզ

զարթուցէ՝ զմիտս բոցով քո վառեսցէ. զի 'ի:

'Ի քեզ նայիմք լոյսդ անմատոյց՝ 'ի զգայական ծածկեալ լուսոյ. որ վասն մեր երգար 'ի գթի՝ և ննջեցեր 'ի տապանի. առ մեզ ննջեա՛ արթո՛ւն բնուի՝ հերքեա՛ զչարին ներգործուի. զի 'ի:

Լոյդ լուսոյ անստուերի՝ պարգեւատուօք կամք առաջի. որ փակեալ դրամբք յերեկոյին՝ երևեցար մետասանին. ընդ թովմայի առ քեզ գոչեմք՝ տէր և ած

զքեզ դաւանեմք. Էջ և
առ մեզ յերկրիս՝ և
տուր զողջոյն քո 'ի հոգիս։
Բանաւորքս զքեզ տէր ա-
ղաչեմք՝ մեզ յօգնութիւն
նայեաւ հայցեմք. պահպա-
պանդ իսրայէլի՝ անձանց
մերոց լեր հովանի. օթեան
առ մեզ խաղաղարար՝ զի
ննջեսցուք անխռովաբար.
և ընդ առաւօտս կան-
խեսցուք՝ օրհնել զքեզ
ընդ Հօր հոգւով ։

Գոչման փողոյն գաբրի-
էլի՝ որ 'ի վերջնումն գի-
շերի. լսել արա զմեզ ար-

ժանի՝ և յաջակողմն օգնեաց դասի· անշէջ վառեալ զլոյս լապտերաց՝ ընդ իմաստուն հինգ կուսանաց· զի ընդ փեսային ՚ի յառագաստ՝ հարսունք հոգւով մտցուք ՚ի փառս : Հալածեա ՚ի մէնջ տէր, նշանաւ խաչիւ քո զընդդիմամարտ և զաներևոյթ դարանն· և մի տար յապականութեան զքո ժառանգութիւնս :

Բարեխօսեա վասն մեր Աստուածածին Մարիամ· որ ծնար զտէր Աստուած՝ որ հա-

վուէրն զիսրայէլ ամենա-
զօր և սքանչելի փառօքն
իւրովք։

Մաղթանք։

Տէր մի՛ դարձուցաներ
զերեսս քո յինէն. տ՛ր բա-
րերար աղաչեմ զքեզ,
օգնական իմ լեր. տէր մի՛
անարգեր զիս. և մի՛ թո-
ղուր զիս ա՛ծ փրկիչ իմ։

Քարոզ։

Աղաչեսցուք զամենա-
կալն ա՛ծ. և խնդրեսցուք
'ի նմանէ. զի առաքեսցէ

զհրեշտակ խաղաղութե՛, որ եկեալ պահեսցէ զմեզ յերկիւղական գիշերիս, ՚ի դիւական խռովութե՛՝ ամբողջ պահելով զհոգի և զմարմին մեր մինչև ՚ի կատարումն ժամանակի ամաց մերոց. ամենակա՛լ:

ԱՀզօՐհ:

Շնորհատու բարեաց՝ յոմի տուող անմա՛հ Տ՛ր աղաչեմք զքեզ. փարատեա՛ յանձանց մերոց զաղջամղջին և զխաւարային խորհուրդս, ՚ի պատրա-

նայ բանսարկուին պա֊
հեա զմեզ, և շնորհեա
մեզ հաւատով ապաւինել
կամնանք երրորդուէնդ՝
’ի հայր և յորդի և ’ի
ս̅բ հոգին․ այժմ և ։

## Շարական ։

’Ի քէն հայցեմք հայր
գթութեանց, և ա̅ծ մ֊
խիթարութեանց․ ’ի տխ
րական գիշերային մեր֊
ձեալ ժամուս մխիթա֊
րեա զմեզ ’ի տրտմութե̆ց
մեղաց․ և շնորհեա զու֊
արթուն գործովք արդա֊

րութեան․ աղաչանօք ս̃բ ա̃ծածնին և ամենայն

արդարոց։

Ըստ քաղցրութեան ա̃ծային քո հրամանի կոչման որդի ա̃յ, եկեալ եմք առաջի քո յերեկոյիս աշխատեալք, և ծանրաբեռնեալք թեթևացո՛ ի ծանրութե̃ց մեղաց զանձինս՝ և զօրացո՛ բառնալ կամաւ զքաղցր լուծ քոյ սպասուրանաց․ աղաչանօք սուրբ։

Պաղատիմք առ քեզ հոգւով 'ի հանգստեան հասեալ ժամուս մարդասէր

Հոգի այ. յորժամ նորո-
գես զերեսս երկրի, և վե-
րստին ստանաս զոգիս
մարդկան, նորափետուր
զարդարեա՛ զննջեցեալսն
մեր զծնեալսն ՚ի քէն սբ՟
աւազանաւն. ա՛ ։

Զկենդանագիր անա-
րատ ծննդի քո արկանեմք
առաջի անոխակալդ՝ տե-
րութեանդ քո, յորժամ
գաս փառօք հօր դատել
զթշնամին խաչի քո. նե-
րեա յանցանաց մերոց
բարեխօսութբ՟ մօր քո և
կուսի. աղաչեմք զքեզ տ՟ր

պահպանեա զմեզ ընդ հո-
վանեաւ խաչի քո սրբոյ :
Հաղորդս արա և զմեզ
տէր, ընդ սրբոց քոց առա-
քելոյն, որք արժանի ե-
ղեն տեսանել զքեզ ’ի
յարութեան քո. արժանաւո-
րեա տէր տեսանել
զքեզ ’ի միւսանգամ քո
գալստեանն. յօրհնու-
թիւն առաքողին ’ի բար-
ձունս :
’Ի նստիլ քո յատենի
դատաւոր ահեղ, աղաչա-
նօք սրբոյ Աստուածածնին յիշեա՛

զննջեցեալսն մեր, յոր-
ժամ գայցես անճառ փա-
ռօք. քանզի քո են փառք
յաւիտեանս. ամէն:

Կարգաւորութիւն հասա-
րակաց աղօթից հանգստեան
ժամուն ։

ԱՌԱՔԵԱ՛ ՏԷ՛Ր լոյս քո, և զճշմարտութի՜ քո․ զի առաջնորդեսցեն ինձ․ և հա՛նցեն զիս ՚ի լեառն սուրբ, և ՚ի յարկս քո։ Մտից առաջի սեղանոյ ա՜յ առ ա՜ծ, որ ուրախ առնէ զմա՛նկութի՜ իմ ։

Խոստովա՛ն եղէց քեզ օրհ-նու՛բ՝ ա՜ծ ա՜ծ իմ ։

Արդ՝ ը՛նդէ՞ր տրտում ես

անձնիմ, կամ ընդդէմ խռովես զիս . յուսամ առ ած, խոստովանեալ նմա, փրկիչ երեսաց իմոց ած է։ Փառք հօր և որդւոյ և . այժմ և :

Ու ես խաղաղուն կոչէր ալլա :

Օրհնութին և փառք հօր և որդւոյ :

Սաղմոս . 118 :

Ընկեսցէ 'ի վերայ իմ ողորմութինքո տր . և փրկութին քո ըստ բանի քում : Տաց պատասխանի․ որք

Նախատեն զիս բանիւք· զի ես 'ի բանս քո յուսացայ։

Մի՛ 'ի բացեայ առներ 'ի բերանոյ իմմէ զբան ճշմարտութեան մինչև յոյժ· զի յիրաւունս քո յուսացայ։

Պահեցի զօրէնս քո յամենայն ժամ· յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից։

Գնայի ես յանդորրու՝ զի զպատուիրանս քո խնդրեցի։

Խօսէի զվկայութիւնս քո առաջի թագաւորաց, և ո՛չ ամաչէի։

Խորհէի 'ի պատուիրանս քո, զոր սիրեցի։

Համբարձի զձեռս իմ 'ի
պատուիրանս քո, զոր սի-
րեցի. և խորհէի յարդա-
րութեան քում ։
Յիշեա՛ զբան ծառայի քո,
յոր և յուսացուցեր զիս։
Սա մխիթարեաց զիս 'ի
խոնարհութեան իմում . զի
բան քո կեցոյց զիս ։
Ամբարտաւանք անիրա-
ւեցան յիս յոյժ. այլ յօ-
րինաց քոց ես ոչ խոտո-
րեցայ ։
Յիշեցի զիրաւունս քո
յաւիտենից տէր, և մխի-
թարեցայ ։

Տրտմութիւն կալաւ զիս 'ի մեղաւորաց. և որք թողին զօրէնս քո։

Գովելի էին ինձ իրաւունք քո 'ի տեղւոջ պանդխտութեան իմոյ։

Յիշեցի 'ի գիշերի զանուն քո Տէր. և պահեցի զօրէնս քո։

Այս եղև ինձ ճանապարհ 'ի կեանս. զի զարդարութիւնս քո խնդրեցի։

Զանօրէնսն ատեցի, և զօրէնս քո սիրեցի։

Օգնական և փրկիչ իմ ես դու. և ես 'ի բանս քո յուսացայ։

'ի բա՛ց եղերուք յինէն
չարք, և քննեցից զպա-
տուիրանս այ̃ իմոյ։
Օգնեա՛ ինձ ըստ բանի
քում, և կեցո՛ զիս. և մի՛
յամօթ առներ զիս 'ի
յուսոյ իմմէ։
Օգնեա՛ ինձ, և ապրեցո՛
զիս. և խորհեցայց զիրա-
ւունս քո յամենայն ժամ։
Անարգեցեր զամենեսեան՝
որք ապստամբք եղեն
յարդարուե̃ց քոց. զի ա-
նիրաւուք̃ էին խորհուրդք
նոցա։
Ցանցաւորս համարեցայ

զա̃մ մեղաւորս երկրի. վ̃ս
այսորիկ սիրեցի զվկայո-
ւթիւնս քո։
Բեւեռեա՛ ը̃ երկիւղ քո
զմարմին իմ, զի 'ի դա-
տաստանաց քոց երկեայ
յոյժ։
Մերձեսցին խնդրուածք
իմ առաջի քո Տ̃ր. ըստ
բանի քում իմաստուն
արա զիս։
Մտցեն աղօթք իմ ա-
ռաջի քո Տ̃ր. եւ բանիւ
քով փրկեա՛ զիս։
Բղխեսցեն շրթունք իմ
զօրհնութիւնս քո, յորժամ

ուսուսցես ինձ զարդարութիւնս քո։

Խօսեսցի լեզու իմ զբանս քո. զի ամենայն պատուիրանք քո արդարութիւն են։

Եղիցի ձեռն քո ՚ի կեցուցանել զիս. զի զպատուիրանս քո ընտրեցի։

Ցանկացայ փրկութեան քում Տէր. և օրէնք քո խօսք իմ էին։

Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ. և իրաւունք քո օգնեսցեն ինձ։

Մոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ. խնդ-

րեմ զծառայս քո․ զի զպա-
տուիրանս քո ես ոչ մո-
ռացայ ։

Արդ՝ արձակեա՛ զծառայս
քո տ̅ր ըստ բանի քում
՚ի խաղաղութ̅ի ․ զի տեսին
աչք իմ զփրկութ̅ի քո․ զոր
պատրաստեցեր առաջի
ա̅մ ժողովրդոց ։

Լոյս ՚ի յայտնութ̅ի հե-
թանոսաց․ և փառք ժո-
ղովրդեան քում իսրայէլի։
Փառք հօր և որդ" ։

Մաղթանք ։

Անձն իմ ՚ի ձեռս քո

է յա̄մ ժամ. և 'ի սր̄
խաչ քո յուսացեալ եմ
Թագաւոր երկնաւոր. Ըղ-
բազմու̄ի սր̄ց քոց բա-
րեխօս ունիմք առ քեզ։
Որ երկայնամիտդ ես առ
ամենեսեան, մի՛ անտես
առներ զապաւինեալս 'ի
քեզ. այլ պահեա՛ պա-
տուական, և սր̄ խաչիւ
քով 'ի խաղաղութեան։

Քարոզ։

Աղաչեսցուք զամենա-
կալն ա̄ծ՝ և խնդրեսցուք
'ի նմանէ, զի առաքեսցէ

զհրեշտակ խաղաղութեա̃ն, որ եկեալ պահեսցէ զմեզ յերկիւղական գիշերիս. 'ի դիւական խռովութենէ՝ ամբողջ պահելով զհոգի և զմարմին մեր. մինչև 'ի կատարումն ժամանակի ամաց մերոց. ամենակալ տէր ա̃ծ մեր կեցո՛ և։

Զհանգիստ գիշերիս խաղաղութ̃բ անցուցանել հաւատով 'ի տեառնէ։

Զհրեշտակ։ Զքաւութի̃։

Զսրբոյ խա։

Նու ևս։ Զանձինս։

Ողորմեաց մեզ։

## Աղօթք:

Տէր ած մեր դու պահեա՛ զմեզ խաղաղութ՟ ՚ի գիշերիս յայսմիկ և յամ՟ ժամանակի:

Ընդ ո՟ր երկիւղ քո բեւեռեալ պահեա՛ զմիտս և զխորհուրդս մեր: Որպէս զի յամ՟ ժամ քև պաշտանեալ լիցուք յորոգայթից թշնամւոյն: Եւ քեզ հանցուք գոհութ՟ և զփառս Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբյ՟:

Խաղաղութիւն ամենեցուն։

Հրեշտակի խաղաղութ̃ յանձն արա զանձինս մեր տէր զօրու̃եց․ որ եկեալ պահեսցէ զմեզ անխռով ՚ի տուէ եւ ՚ի գիշերի, յարթնութ̃ եւ ՚ի հանգստեան մերում․ զի դու ես արարիչ լուսոյ, եւ հաստիչ գիշերի։ Եւ այժմ աղաչեմք զքեզ տ̃ր ա̃ծ մեր, զհանգիստ գիշերիս շնորհեա խաղաղութ̃ անցուցանել․ եւ հասանիլ ՚ի պաշտօն առաւօտու

յերկրպագութի̅ և ՚ի փա-
ռաբանութի̅ ամենայն եր-
րորդութ̅դ․ այժմ և ։

Մաղթանք ։

Ընկանիմք առաջի քո
սր̅ ա̅ծածին և աղաչեմք
պանարատ կուսդ․ բարե-
խօսեա՛ վ̅ս անձանց մերոց,
և աղաչեա՛ զմիածին որ-
դին․ փրկել զմեզ ՚ի
փորձութե̅, և յա̅մ վտան-
գից մերոց ։

Որ անձնակիչք ես կատե-
լոյ սպարգևաւոր ամենե-
ցուն, այսօր հայցմամբ

ծերունւոյն արձակեա՛ և զիս զբազմամեղս ՚ի կապանայ մահու ՚ի կեանսն յաւիտենից ։

Մաղթանս զօրաւորս ընդդէմ արհաւրաց գիշերայնոյ ․ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն ։

ԺԲ ։

Ընկա՛լ քաղցրուբ՟՝ տէր ա՟ծ հզօր , զդառնացողիս զաղաչանս ․ մատի՛ր զգթութեամբ՝ առ պատկառեալս զիմօք ․ փարատեա՛ ամենապարգև՝ զամօթական տխրութե՛ս ․

բա՛րձ յինէն ո՛ղորմած զանբերելի ծանրութիւնս. անջրպետեա՛ հնարաւոր՝ զմահացու կրթութիւնս. աւարեա՛ միշտ յաղթօղ՝ զխաբողին հաճութիւնս. բացադրեա՛ վերնային՝ զմոլերոյն մառախուղ. կնքեա՛՝ կենցուցիչ՝ զկորուսչին ընթայմունս. ցրուեա՛ ծածկատես՝ զըմբռնողին չար գտմունս. խորտակեա՛ անքննին՝ զմարտողին դիմեյմունս։ Տեառնագրեա՛ քո անուամբդ՝ զլուսանցոյց երգ յարկիս. պարփակեա՛

քո ձեռամբդ՝ զառաստաղ տաճարիս. զծագրեալ քո արեամբդ՝ զմուտ սեմոյ սենեկիս. կերպացո՛ զքո նշանդ՝ 'ի հետս ելից մաղթողիս. ամրացո՛ քո աջովդ՝ զհանգստեանս խշտի. մաքրեսցես 'ի հաղբից զծածկարան անկողնոյս. պահեսցես քո կամօքդ՝ զտառապեալ անձն ոգւոյս. անխարդախ արասցես՝ զքո շնորհեալ շունչ մարմնոյս. կացուսցես շրջափակ՝ զպար զօրուդ երկնայնոյ. կարգես-

ցես 'ի դիմի՝ ընդդէմ դիւային դասու։ Տուր հանգիստ բերկրութեան մահւհանգոյնս նիրհման 'ի խորութեան գիշերիս, բարեխօսութեամբ հայցուածոց սրբոյ անձանիդ՝ և ամենայն ընտրելոց։ Ամփոփեալ պարուրեալ զպատուհան տեսութեանց՝ զգայարանացս իմաստից՝ անդարհուրելի զետեղմամբ՝ 'ի ծփական խռովութեանց, կենցաղական զբաղմանց, անրջական երազոց, խօլականաց ցնորից, յիշատակաւ քո

կուսոյդ՝ անվնասելի պաշ-
տպանեալ ։ Նու սթա-
փեալ վերստին ՚ի ննջմա-
նէ ծանրութե̄՝ ամենազ-
գաստ արթնուբ̄, հոգե-
նորոգ զուարթուբ̄ ՚ի
քեզ արձանայեալ, զայս
ձայն մաղթանաց բուր-
մամբ հաւատոյ քեզ ա-
մենօրհնեալ թագաւոր
փառաց անճառելւոյ՝ փա-
ռաբանողաց երկնագու-
մար խմբից երգակցեալ
յերկինս առաքել ։ Զի
դու փառաւորեալ ես յա-
մենայն արարածոց յաւի-
տեանս յաւիտենից. ամէն ։

## Նորին ս͞րյն Գրիգորի Նարեկացւոյն ։

### ԽԱ ։

Որդի ա͞յ կենդանւոյ օրհնեալ յամենայնի. Հօրդ աջակցորդի՝ անքննելին ծնունդ. որ տկարանայ առ 'ի քէն և ոչ ինչ ։ Որ 'ի ծագել անստուեր նշուլից՝ ողորմութ͞ե քո փառաց, հալին մեղք. հալածին դևք. ջնջին յանցանք. խզին կապանք. խորտակին շղթայք. կենդանածնին մահացեալք.

բժշկին հարուածք • ող-
ջանան վէրք • բառնին ա-
պականութիւնք • տեղի տան
ախտութիւնք • նահանջին
հեծութիւնք • փախնուն խա-
ւարն • մեկնի մէգն • մեր-
ժի մառախուղն • փարատի
մռայլն • սպառի աղջա-
մուղջն • վերանայ մութն •
գնայ գիշերն • տարագրի
տագնապն • չքանան չա-
րիքն • հալածին յուսա-
հատութիւնքն • և թագաւորէ
ձեռն քո ամենակար, քա-
ւիչդ ամենայնի։ Որ ոչ ե-
կիր կորուսանել զմարդ-
կան ոգիս, այլ կեցուցա-

նել. Թող ինձ զանթիւ չարիսն իմ՝ բազում ողորմութբդ. զի դու միայն ես յերկնի անճառ՝ և յերկրի անզննին. 'ի տալը գոյի՝ և յեզըս ծագաց աշխարհի. ոսկեղէն ամի և յամի. ամ լըմամբ օրհնեալ 'ի բարձունս. Ու քեզ ընդ հօր և հոգւոյդ սբյ փառք յաւիտեանս. ամէն:

Աղօթք երախանչեւր անձին հաւատացելոյ 'ի Քրիստոս. զոր արարեալ է Տեառն

## Ներսէսի Հայոց կաթո-ղիկոսի ։

Հաւատով խոստովանիմ
և երկիրպագանեմ քեզ,
Հայր՝ և Որդի՝ և Սուրբ Հոգի·
անեղ և անմահ բնութիւն·
արարիչ հրեշտակաց և
մարդկան և ամենայն եղելոց·
և ողորմեա՛ քո արարածոց՝
և ինձ բազմամեղիս ։

Հաւատով խոստովանիմ
և երկիրպագանեմ քեզ
անբաժանելի լոյս· միա-
սնական սուրբ երրորդու-
թիւն· և մի աստուածութիւն·
արարիչ լուսոյ և հալա-

ծիչ խաւարի. հալածեա
՚ի հոգւոյ իմմէ զխաւար
մեղաց և անգիտութեան.
և լուսաւորեա զմիտս իմ
՚ի ժամուս յայսմիկ աղօ-
թից քեզ ՚ի հաճոյս. և
ընդունել ՚ի քէն զխնդ-
րուածս իմ. և՛՛:

Հայր երկնաւոր ամ ճըշ-
մարիտ, որ առաքեցեր զոր-
դիդ քո սիրելի ՚ի խնդիր
մոլորեալ ոչխարին. մեղայ
յերկինս և առաջի քո.
ընկալ զիս որպէս զմիա-
ւակ որդին. և զգեցո՛ ինձ
զպատմուճանն զառաջին,

զոր մերկացայ մեղօք․ և
ողորմեա՛ ։

Որդի՛ ա՟յ ա՟ծ ճշմարիտ,
որ խոնարհեցար 'ի հայ-
րական ծոցոյ, և առեր
մարմին 'ի ս՟բյ կուսէն
մարիամայ վասն մերոյ
փրկուե՟, խաչեցար՝ թա-
ղեցար՝ և յարեար 'ի մե-
ռելոց․ և համբարձար
փառօք առ հայր, մեղայ
յերկինս և առաջի քո․
յիշեա՛ զիս որպէս զաւա-
զակն, յորժամ գաս ար-
քայութեամբ քով․ և՟ ։
Հոգի՛ ա՟յ ա՟ծ ճշմարիտ,

որ իջեր 'ի յորդանան և 'ի վերնատունն. և լուսաւորեցեր զիս մկրտութ սուրբ աւազանին. մեղայ յերկինս և առաջի քո. մաքրեա զիս վերստին ածային հրով քով որպէս հրեղէն լեզուօք զառաքեալսն. և ողոր″ ։

Անեղ բնութիւն, մեղայ քեզ մտօք իմովք, հոգւով և մարմնով իմով. մի յիշեր զմեղս իմ զառաջինս վասն անուանդ քում սրբոյ. և″ ։

Տեսօ՛ղ ամենայնի, մեղայ

քեզ խորհրդով, բանիւ, և գործով. ջնջեա զձեռագիր յանցանաց իմոց, և գրեա զանուն իմ 'ի դպրութեան կենաց. և" ։

Քննօ՛ղ գաղտնեաց, մեղայ քեզ կամաւ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ, թողուլ շնորհեա մեղաւորիս. որ 'ի ծննդենէ սուրբ աւազանին մինչև յայսօր մեղուցեալ եմ առաջի աստուածութեանդ քո՝ զգայարանօք իմովք, և ամենայն անդամօք մարմնոյս. և ողոր" ։

Ամենախնամ Տէր, դիր
պահապան աչաց իմոց
զերկիւղ քո սուրբ՝ ոչ
ևս հայել յայլաս. և ա-
կանջայ իմոյ ոչ ախոր-
ժել լսել զբանս չարու-
թեան. և բերանոյ իմոյ
ոչ խօսիլ զստութիւն. և
սրտի իմոյ ոչ խորհիլ
զչարութիւն. և ձեռաց
իմոց ոչ գործել զանի-
րաւութիւն. և ոտից ի-
մոց ոչ գնալ ՚ի ճանա-
պարհս անօրէնութեան.
այլ ուղղեա զշարժումն
սոցա լինել ըստ պատու-

իրանաց քոյ յամենայնի. և ողոր՛ :

Հուր կենդանի քս, զհուր սիրոյ քոյ, զոր արկեր յեր-կիր՝ բորբոքեա յանձն իմ. զի այրեսցէ զախտ հոգւոյ իմոյ. և սրբեսցէ զխիղճ մտաց իմոց. և մաք-րեսցէ զմեղս մարմնոյ իմոյ և վառեսցէ զլոյս գիտու-թեան քո 'ի սրտի իմում. և ողոր՛ :

Իմաստութիւն հօր յս, տուր ինձ զիմաստութիւն զբարիս խորհիլ և խօսիլ և գործել առաջի ք

կամենայն ժամ. 'ի չար
խորհրդոց 'ի բանից և
'ի գործոց փրկեա՛ զիս. և
ողորմեա՛։

Կամեցօ՛ղ բարեաց՝ տէր
կամարար, մի՛ թողուր զիս
'ի կամս անձին իմոյ գնալ.
այլ առաջնորդեա՛ ինձ
լինել միշտ ըստ կամաց
քոց բարեսիրաց. և ողոր՛՛։

Արքա՛յ երկնաւոր՝ տո՛ւր
ինձ զարքայութիւն քո.
զոր խոստացար սիրելեաց
քոց, և զօրացո՛ զսիրտ իմ
ատել զմեղս և սիրել ըզ-
քեզ միայն, և առնել ըզ-
կամս քո. և ։

խնամօ՛ղ արարածոց՝ պա-
հեա՛ նշանաւ խաչի քո
զհոգի և զմարմին իմ ՚ի
պատրանաց մեղաց,՚ի փոր-
ձութեանց դիւաց՝ և ՚ի
մարդոց անիրաւաց, և
յամենայն վտանգից հոգ-
ւոյ և մարմնոյ. և ողոր՛՛
Պահապա՛ն ամենայնի քս,
աջ քո հովանի լիցի ՚ի
վերայ իմ ՚ի տուէ և ՚ի
գիշերի՝ ՚ի նստիլ ՚ի տան՝
՚ի գնալ ՚ի ճանապարհ,
՚ի ննջել և ՚ի յառնել,
զի մի՛ երբէք սասանե-
ցայց. և՛.

Ո՛Տ իմ, որ բանաս զձե-ռըն քո, և լնուս զամե-նայն արարածս ողոր-մութ̃ քով, քեզ յանձն առնեմ զանձն իմ. դու հոգա՛ և պատրաստեա՛ զպէտս հոգւոյ և մարմ-նոյ իմոյ յայսմհետէ մին-չև յաւիտեան. և″ ։

Դարձուցի՛չ մոլորելոց՝ դարձո՛ զիս 'ի չար սովո-րութեանց իմոց 'ի բարի սովորութիւն. և բևե-ռեա՛ 'ի հոգի իմ զոսկա-լի օր մահուն, և զերկիւղ գեհենոյն, և զսէր արքա-

յութեանն. զի զղջացայց
'ի մեղաց, և գործեցից
զարդարութիւն. և՛՛:

Աղբիւր անմահութեան՝
աղբերացո՛ 'ի սրտէ իմմէ
զարտասուս ապաշխարու-
թեան որպէս պոռնկին.
զի լուացից զմեղս անձին
իմոյ յառաջ քան զելա-
նելն իմ յաշխարհէս. և՛՛:

Պարգևի՛չ ողորմութեան՝
պարգևեա՛ ինձ ուղղափառ
հաւատով և բարի գոր-
ծով, և սուրբ մարմնոյ և
արեան քո հաղորդութեամբ
գալ առ քեզ. և ողոր՛՛:

Բարերա՛ր տէր, հրեշտա-
կի բարւոյ յանձն արա-
ցես զիս քաղցրութեամբ
աւանդել զհոգի իմ, և
անխռով անցուցանել ընդ
չարութիւնս այսոցն, որք
են ՚ի ներքոյ երկնից. և՛՛։
Լոյս ճշմարիտ Քրիստոս, ար-
ժանաւորեա՛ զհոգի իմ
ուրախութեամբ տեսա-
նել զլոյս փառաց քոց ՚ի
կոչման աւուրն. և հանգ-
չել յուսով բարեաց յօ-
թևանս արդարոց մինչև
յօր մեծի գալստեան
քո. և՛՛։

Դատաւո՛ր արդա՛ր՝ յոր-
ժամ գաս փառօք հօր 'ի
դատել զկենդանիս և ըզ-
մեռեալս, մի՛ մտաներ 'ի
դատաստան ընդ ծառայի
քում. այլ փրկեա՛ զիս
'ի յաւիտենական հրոյն և
լսելի՛ արա ինձ զերանա-
ւէտ կոչումն արդարոց
յերկնից արքայութիւն. Ե՛։
Ա՛մենողո՛րմ տէր՝ ողոր-
մեա՛ ամենայն հաւատա-
ցելոց 'ի քեզ, իմոց և
օտարաց, ծանօթից և ան-
ծանօթից, կենդանեաց և
մեռելոց. շնորհեա՛ և թշ-
նամեաց իմոց և ատե-

լեալ զթողութիւն, որ
տուիս յանցանաց. և
դարձո զնոսա 'ի չա-
րեացն՝ զոր ունին մասն
իմ. զի ողորմութեամբ
քում արժանի եղիցին. և"։
Փառաւորեալ տէր ըն-
կա՛լ զաղաչանս ծառայիս
քո. և կատարեա 'ի բա-
րի զխնդրուածս իմ. բա-
րեխօսութեամբ սրբու-
հւոյ Ա.ծածնին և Յով-
հաննու մկրտչին. և սրբյն
Ստեփաննոսի նախավկային,
և սրբոյն Գրիգորի մե-
րոյ Լուսաւորչին, և սրբց

Առաքելոց, Մարգարէից, Վարդապետաց, Մարտիրոսաց, Հայրապետաց, Ճգնաւորաց, Կուսանաց, Միանձանց· և ամենայն սրբոց քոց երկնաւորաց և երկրաւորաց Եւ քեզ փառք և երկրպագութիւն անբաժանելի սուրբ Երրորդութեանդ յաւիտեանս յաւիտենից· ամէն ։

## Մաղթանք ։

Վն սրբուհւոյ անարատի մօր քո և կուսի՝ ար

ընկա՛լ զաղաչանս մեր, և կեցո՛ զմեզ ։

Քարոզ ։

Ս՟բ զա՟ծածինն՝ և զամենայն ս՟բս բարեխօս արասցուք առ Հայր 'ի յերկինս. զի կամեցեալ ողորմեսցի՝ և գթացեալ կեցուսցէ զարարածս իւր, ամենակա՛լ տ՟ր ա՟ծ ։

Աղօթք ։

Ընկա՛լ տէր զաղաչանս մեր բարեխօսութ՟բ սրբուհւոյ ա՟ծածնին անարատ ծնողի միածնի որդւոյ քո.

և աղաչանօք ամ̃ ս̃ց քոյ. և որոց այսօր է յի-շատակ։ Լո՛ւր մեզ տէր, և ողորմեա՛ ներեա՛ քա-ւեա՛ և թո՛ղ զմեղս մեր։ Արժանաւորեա՛ գոհութ̃ փառաւորել զքեզ ընդ որդւոյ և ընդ ս̃բ հոգ-ւոյդ. այժմ և միշտ. և յաւիտեանս յաւիտենից։ Օրհնեալ տէր մեր յ̃ս ք̃ս. ամէն։

Հայր մեր, որ յերկինս։

## Մաղթանք։

Օ հանգստեան զաղօթս և զաղաչանս ընկալ մար-

դասեսցր ած 'ի հաճոյս բա-
րերար կամաց քոց: Եւ
մեր մեղաց և բազում
յանցանացն թողութիւն
շնորհեա՛: Եւ քեզ փառք
յաւիտեանս. ամէն:

Փառք քեզ տէր ած,
որ պարգեւեցեր զօրս զայս
բարեաւ և խաղաղութ՟բ
անցուցանել: Մարդա-
սէր ած՝ զառաջիկայ գի-
շերս՝ որ 'ի վերայ մեր գա-
լոց է, 'ի մեղաց փրկեա՛,
'ի չարեաց ազատեա՛, և
'ի գործս բարիս առաջ-
նորդեա՛: Առաւօտու օրհ-
նութեանցն և փառաբա-

նուիրեանցն արժանի՛ արար
զամենայն հաւատացեալս
անուանդ քում սբյ, և
պահեա՛ 'ի խաղաղութե՛ ։
Տէր ա՛ծ մեր՝ տուր զքո
խաղաղութի՛դ ամենայն աշ-
խարհի. բա՛րձ զցասումն
և զպատուհասն 'ի յա-
րարածոյ ։ Ողորմեա՛ց
հարց և եղբարց մերոց
կենդանեաց և հանգու-
ցելոց ։ Ողորմեա՛ց գե-
կեղեցի շինողաց, երախ-
տաւորաց, պաղատուից՝
ապաստաւորաց. և այնո-
ցիկ՝ որք ընդ հովանեաւ
սբյ տաճարիս են հան-

գուցեալ։ Տէր ած՝ օգնեա թագաւորաց քրիստոնէից. և իշխանացն բարեպաշտից. զօրաց և զաւակաց նոցին պահելով 'ի խաղաղութեան։ Տէր ած մեր՝ պահեա զառաջնորդս և զեղբայրութիւն մեր ամբողջ և անխռով 'ի կամս ողորմութեան քո։ Նշանաւ սբ և պատուական խաչիւ քո հալածեա զերևելի և զաներևոյթ թշնամին՝ ի սահմանաց մերոց և 'ի բնակութենէս մերմէ։ Փրկեա զմեզ 'ի հրոյն յաւիտենից։

Ո՛ւ քեզ՝ փառք յաւի-
տեանս. ամէն։
Օրհնեալ եղերո՛ւք ՚ի
շնորհաց ս̅բ. հոգւոյն.
հանդերո՛ւք խաղաղութ̅. և
մեր եղիցի ը̅ ամենեսեանդ.
Ամէն։

ՎԵՐՋԱՆ.

| Թուական Քրիստոսի: | Թուական Հայոց: | [illegible] | [illegible] | [illegible] |
|---|---|---|---|---|
| 1835 | ռմձդ | ձ | ը | ժա |
| 1836 | ռմձե | թը | գփ | իբ |
| 1837 | ռմձզ | ռ | ե | գ |
| 1838 | ռմձէ | խ | ղ | ժդ |
| 1839 | ռմձը | ե | է | իե |
| 1840 | ռմձթ | չո | աը | զ |
| 1841 | ռմղ | թ | գ | ժէ |
| 1842 | ռմղա | ս | փ | իը |
| 1843 | ռմղբ | յ | ե | թ |
| 1844 | ռմղգ | ղե | ղե | ի |
| 1845 | ռմղդ | չ | ա | ա |
| 1846 | ռմղե | ձ | ը | ժբ |
| 1847 | ռմղզ | բ | գ | իգ |
| 1848 | ռմղէ | նյ | փէ | դ |

| Թու–ա՛՛ Քրիս: | Թու–ա՛՛ Հայոց: | [illegible] | [illegible] | [illegible] |
|---|---|---|---|---|
| 1849 | ռմղը | խ | ղ | ժղ |
| 1850 | ռմղթ | կ | է | իէ |
| 1851 | ռյ | գ | ա | ը |
| 1852 | ռյա | ժթ | էգ | ժթ |
| 1853 | ռյբ | ս | զ | [illegible] |
| 1854 | ռյգ | յ | ե | ժա |
| 1855 | ռյդ | ւ | ղ | իբ |
| 1856 | ռյե | պչ | էա | դ |
| 1857 | ռյզ | ձ | բ | ժդ |
| 1858 | ռյէ | բ | գ | իե |
| 1859 | ռյը | ն | ա | |
| 1860 | ռյթ | ծխ | էղ | ժէ |
| 1861 | ռյժ | ց | է | իը |
| 1862 | ռյժա | ղ | ա | ժ |

| Թուա՛ Քրիս՛: | Թուա՛ Հայոց: | [illegible] | [illegible] | [illegible] |
|---|---|---|---|---|
| 1863 | ռյժբ | ժ | ը | իա |
| 1864 | ռյժգ | վա | գւ | բ |
| 1865 | ռյժդ | ծ | ե | ժգ |
| 1866 | ռյժե | կ | ւ | իե |
| 1867 | ռյժզ | պ | է | ի |
| 1868 | ռյժէ | իժ | աը | ժզ |
| 1869 | ռյժը | վ | գ | իէ |
| 1870 | ռյժթ | ո | ւ | ը |
| 1871 | ռյի | ձ | ե | ժթ |
| 1872 | ռյիա | ճպ | ւ | ա |
| 1873 | [illegible] | կ | է | ժա |

Վրիպակք Տպագրութե։

| Երես. | Տող. | Սխալ. | Ուղիղ։ |
|---|---|---|---|
| 20. | 2. | յիսուն | յիսուս |
| 76. | 10. | յափւ | յաւփ |
| 159. | 3. | բունձր, | բարձր |
| 192. | 8. | որդոյք, | որդւոյք. |
| 226. | .. | յերն- հօր. | յերկրէ. |
| 416. | 16. | ողող. | ողորմ ։ |